



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4546

ԻՐԻՆԵՐ

ՀԱՅՈՑ ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Ն. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ

ԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐԻ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ

ԱՅՐՈՒԹՅԱՆ ԿԵՏՈՑ

frühlingliche Wanderlieder Համար

Եփփակող մանկապարտեզիան և արտիկ պանսիոնից և անհայտի

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՏԱՐԵՐՈՐԴ ՏՈՒՐՈՒԹՅԱՆ

معارف نظارت بلدياتك و تصانیف به طبع اولشیر



99-8
5-45

Կ. ՊՈԼԻՍ

Կ. ՊՈԼԻՍԻՆԻ ԵՐ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ Կ. ՊՈԼԻՍԻՆԻՆԻ

11, Սարգսի Համալ Փողոց, 11

1890

912002

431-92
18-45

Ա Ձ Դ

Ժ. Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն



Հայոց Միացեալ Ընկերութիւնք «Մայրենի Լեզուի» Բ. Տար-
ւոյ Ժ. տպագրութեան ձեռնարկելու պահուն՝ ուղեցին օգուտ
քաղել Մեծանուն Հեղինակին, Պրն. Ն. Տէր Ղեւոնդեանի բրած
բարեփոխութիւններէն որք արդիւնք են անձնական երկարամ-
եայ ու ներհուն փորձառութեան մը: Ուստի հաւաստի եմք որ
այս հատորն, որպէս նաեւ միւս երեք հատորներն, կատարելա-
պէս կը համապատասխանեն այժմ մանկավարժական նորանոր
պահանջմանց եւ մրանդամայն ազգային մանկաւոյն իրական պի-
տոյից: Տարակոյս չունիմք որ Պատ. Հոգաբարձութիւնք եւ Ու-
սուցիչք եւս համամիտ պիտի գտնուին մեզ լիովին եւ պիտի շա-
րունակեն գործածել սոյն օգտակար դասագիրքն իրենց խնամոց
յանձնուած վարժարանաց մէջ:

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՔ ՀԱՅՈՑ

57849-4 *

2010

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԱՅԵՐԷՆ ԱՅԲՈՒԲԷՆԸ

(ՈՐՊԷՍ ԿԸ ՀՆԶՈՒԻ ԱՌ. ՀԱՍԱՐԱԿ)

ա — Ա. — Այբ.

բ — Բ. — Բէն.

գ — Գ. — Գիւմ.

դ — Դ. — Դա.

ե — Ե. — Եչ.

զ — Զ. — Զա.

է — Է. — Է.

ը — Ը. — Ըթ.

թ — Թ. — Թո.

ժ — Ժ. — Ժէ.

ի — Ի. — Ինի.

լ — Լ. — Լիւն.

կ — Կ. — Կէ.

ծ — Ծ. — Ծա.

կ — Կ. — Կեն.

հ — Զ. — Զո.

ձ — Զ. — Զա.

ղ — Դ. — Դաա.

ճ — Ը. — Ըէ.

ժ — Մ. — Մէն.

յ — Յ. — Յի.

ն — Ն. — Նու.

շ — Շ. — Շա.

ո — Ո. — Ո.

չ — Զ. — Զա.

պ — Պ. — Պէ.

ջ — Զ. — Զէ.

ռ — Ռ. — Ռա.

ս — Ս. — Սէ.

վ — Վ. — Վեւ.

ա — Տ. — Տիւն.

բ — Բ. — Բէ.

ց — Յ. — Յո.

ւ — Ի. — Իլիւն.

փ — Փ. — Փիւր.

ք — Ք. — Քէ.

օ — Օ. — Օ.

ֆ — Ֆ. — Ֆէ.



ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ

1. ՈՒՍՈՒՄ ՆԱՐԱՆԻՆ ՄԷՋ

ԵՂԱՅՐԸ Ուսումնարանէն ասուն եկաւ :
Փոքրեկ քայրը հարցուց նմա թէ Ուսումնարանի մէջ
ի՞նչ կ'ընեն :

Եղբայրն ալ պատմեց ինչ որ կը ջրատահի Ուսումնարանին մէջ :

Ուսուցիչը սեղանին մօտ աթոռին վրայ կը նստի : Աշակերտք նստարաններուն վրայ կը նստին : Ուսուցչին քով դըրուած է մեծ գրատախտակ մը : Գրատախտակին վրայ կաւիճով կը գրեն : Աշակերտաց առջև քարեախտակներ դրուած

են : Քարետախտակին վրայ կը գրեն քարեգրչով : Ուսուցիչը կը սորվեցնէ : Աշակերտները կ'ուսանին : Ուսուցիչը դաս կը հարցնէ : Աշակերտք կը պատասխանեն : Աշակերտներէն ոմանք կը գրեն , ոմանք կը կարդան և այլք կը նկարեն :

Ձեր Ուսումնարանին մէջ ալ նոյն բանը կը պատահի՞ . պատմեցէ՛ք :

2. ԱՅԲԵՆԱՐԱՆ

Ես փոքրիկ մանուկ էի . կը տեսնէի որ հայրս գիրք կարդալու ժամանակ ակնոց կը դնէր աչքերուն : Օրին մէկը խնդրեցի որ ինձ համար ալ ակնոց առնէ . « Ես ալ կ'ուզեմ՝ քեզի պէս կարդալ » , ըսի իրեն : Յաջորդ օրը հայրս բերաւ ինձ պատկերազարդ գիրք մը — Հայերէն Այբբենարան մը : « Ահա այս է ակնոցդ , զաւակս » , ըսաւ նա : Այնուհետեւ մայրս կարդալ-գրել սորվեցուց ինձ :

3. ԿԱՐԴԱԼ — ԳՐԵԼ

Երբոր լեզուս բացուեցաւ
Եւ երբ խօսիլ սորվեցայ ,
Քարի մօրքս ձեռքի տակ
Գրել — կարդալն սկսայ :
Շատ ժամանակ չ'էր անցած ,
Այլ ևս գիր կարդալը
Այնպէս դժուար չ'էր թուեր ,
Որպէս կ'ըսեն ծոյլերը :

Այսուհետեւ ինձ համար
Հոլ-վէզի , դնդակի չափ
Սիրելի են թուղթ , գրիչ ,
Գիրք , քանոն , մատիտ , տետրակ :

4. ՄՐՋԻՒՆԸ ԵՒ ԱՂԱՒԻՆ

Մրջիւնը առուակին մօտ գնաց որ ջուր խմէ : Ջրոյն ալիքները ներս քաշեցին զայն եզերքէն : Մրջիւնը խեղդուելու վրայ էր , երբ օգնութեան հասաւ Աղանին : Սա չոր տերեւ մ'առաւ ու նետեց Մրջիւնին առջեւը : Մրջիւնը տերեւին վրայ ելաւ և խեղդուելէն ազատեցաւ :

Երկար ատեն չ'անցաւ ասոր վրայ : Որսորդը հրացան 'ի ձեռին մտակցաւ առուակին : Աղանին անհող կը կենար ծառին վրայ : Որսորդը դէպ անոր ուղղեց հրացանին բերանը : Յանկարծ Մրջիւնը , որ Որսորդին քովը գացած էր , կծեց անոր ձեռքը : Որսորդը ցնցուեցաւ և հրացանին հարուածը չը դպաւ Աղանին : Այս վերջինը շուտով թռաւ և ազատեցաւ :

5. ՀՐԱՒԷՐ

Հաւը խօսեցաւ , օդը բացուեցաւ ,
Արեւն ալ վաղուց ելաւ , բարձրացաւ .
Խելօ՛ք մանուկներ , շուտով հագուեցէ՛ք ,
Շուտով դասարան դուք հաւաքուեցէ՛ք :

Մարդ և անասուն, թռչուն և գազան,
 Ամենքն ալ իրենց գործերուն կ'երթան.
 Մըջին բերանով ուտեսա կը բերէ,
 Մեղուն ծաղիկէն հիւթեր կը ծըծէ:

Դաշար գոյնզգոյն ծաղիօք զարդարած,
 Մարգագետինը կանաչ է հագած.
 Անտառը ձմեռուան քունէն արթնցած,
 Իւր տերեւները կը շարժէ կամաց:

Չկնորաներն իրենց ուռկան կը քաշին,
 Հնձողներն իրենց մանգաղը շարժեն...:
 Դուք ալ, մանուկներ, ձեր գրքերն առէ՛ք,
 Աստուած ծուլութիւն չը սիրեր երբէք:

6. ԱՌԱԻՕՏԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ

Կարմիր արեւը բարձրացաւ երկնից վրայ և սկսաւ ամէն
 կողմ տարածել իւր ոսկեփայլ ճառագայթները որ երկիրս
 արթնցնէ:

Առաջին ճառագայթը թռաւ, ինկաւ արտուտին վրայ:
 Արտոյտը թըփրբաց, թեւերը շարժեց, դուրս թռաւ բոյ-
 նէն, արագ արագ բարձրացաւ և երգեց իւր գեղեցիկ եր-
 գը. «Ահ ի՞նչ քաղցր է առաւօտեան պարզ և զով օդին մէջ
 թռչիլ, ի՞նչպէս լաւ է, ի՞նչ ազատութիւն:»

Երկրորդ ճառագայթն ինկաւ նապաստակին վրայ: Նա-
 պաստակն ականջները շարժեց և ուրախ դէմքով սկսաւ
 ցատկոտել ցօղապատ մարգագետնաց վրայ: Յետոյ վազեց
 գնաց նախաճաշիկ ընել հիւթալի խոտերով:

Երրորդ ճառագայթը հաւնոցը մտաւ: Աքաղաղը թա-
 փահարեց իւր թեւերը և երգեց « կո՛ւ-կու-լիկ-կո՛ւ »:
 Հաւերը թառերուն մէջ հաւաքուեցան, կրկնացին, սկսան
 աղբը յուզել և ճճի որոնել:

Չորրորդ ճառագայթն ինկաւ փեթակին վրայ: Մեղուն
 դուրս սողաց իր մոմեղէն խցիկէն, կեցաւ փեթակին դրան
 առջեւ, թեւերը բացաւ, և բզզալով թռաւ գնաց մեղր հա-
 ւաքել հոտաւէտ ծաղիկներէն:

Հինգերորդ ճառագայթն ինկաւ մանկանոցը, փոքրիկ
 ծոյլ մանկան անկողնոյն վրայ և սկսաւ ուղղակի նորա աչ-
 քերը ծակել. բայց նա միւս կողմը դարձաւ և նորէն
 քնացաւ:

Աւխասաւէրն ի՞նչպէս կ'ընէ:

7. ԱՄԵՆ ԲԱՆ ԻՐ ՏԵՂԸ

Մարգիս ծոյլ աղայ չ'է, բայց կարգ ու կանոն չը գիտեր:
 Երեկոյին, դասերն աւարտելէ յետոյ, իւր գիրքերն ու
 տետրակները կը թողու նա թափթփած ու ցրուած աստ և
 անդ: Առաւօտներն ալ արթննալուն պէս կը սկսի իւր
 հագուստները փնտռել: Նորա մէկ դուլպան աթոռին վրայ
 է ինկած, միւսը սեղանին տակ. կօշիկն մէկ հատը մահ-
 ճակալին ներքեւ է, իսկ միւսը սենեկին մէջն ալ չի կայ: Մար-
 գիս ամէն առաւօտ ասդիս անդին կը թափառի և դասե-
 րէն ետ կը մնայ:

Ի՞նչպէս տայ է Մարգիս:

8. ՕՐՕՐՈՅԻ ԵՐԳ

Ննջէ՛, որդեակ իմ սիրուն,
Ննջէ՛ հանդիսս դու ՚ի քուն,
Քեզ կաթնաու ես վարձեցի
Արծիւն, արեւն ու քամի:

Արծիւն իւր բոյնը թռաւ,
Արեւ սարին ետեւն անցաւ,
Քամին երեք օրէ յետ
Վազեց իւր մօր քով վէտ վէտ:

Նորա դարձին անձկալիր,
Հարցուց մայրը. — «Ո՞ւր էիր,
Աստղերո՞ւ հետ կուռեցար,
Թէ յուզեցիր ծոֆն ու սար:

— Ես ծովերը չեմ շարժեր,
Եւ ոչ զ'աստղունս հալածեր.
Քնքուչ մանկան հսկեցի,
Իւր օրօրան շարժեցի:»

9. ՃՐՆՃՂՈՒԿՆԵՐ

Պառըր ցորեն ցանեցի, չորցնելու համար,
Ճրնճղուկներ թռան—եկան, ուտելու համար.
Քարեր առի խիեցի, սպանելու համար.
Ա՛յ ճրնճղուկիկ,

Կարմիր առտիկ,
Սպիտակ փորիկ,
Ուտեն կուտիկ,
Խմեն ջրրիկ,
Առուի եզրիկ,
Պըտտիկ մըտտիկ,
Փախչին—երթան, ման գալու համար:

10. ՊԱՌԱԻՆ ՈՒ ՀԱԻԸ

Պառաւին մէկն ունէր հաւ մը որ ամէն օր մէկ մէկ
հաւկիթ կ'ածէր: Բայց պառաւն ազահ էր. նա մտածեց որ
եթէ շատ կուտ տայ, հաւն ալ մէկ հաւկիթի տեղ երկու
կամ երեքն ՚ի միասին կ'ածէ օրը: Մտածեց և կատարեց:
Հաւը սաստիկ պարարտացաւ և ալ հաւկիթ չ'ածեց:

11. ԱԳՈՍԻՆ ՈՒ ԱՂԱԻՆԻՆ

Ագուաւը տեսաւ որ աղաւնինները լաւ կը կերակրուին,
ուզեց ինքն ալ աղաւնի ձեւանալ: Ուտտի սպիտակ փոշի
ցանեց վրան և մտաւ աղաւնետուն: Աղաւնինները կարծե-
լով թէ նա ալ իրենցմէ է, ներս ընդունեցին զինքը: Բայց
Ագուաւը մտացումամբ կուտեց իւր յատուկ ձայնովը. ասկից
խարէտթիւնը շուտով երեւան ելաւ. աղաւնիններն իմանալով
զորձին եզելու թիւնը, կտցահարեցին ու դուրս վռնեցին

զայն: Ազուաւը վերագարձաւ իւր ընկերներուն քով, բայց նորքա ալ չ'ընդունեցին զինքը, որովհետեւ փոխուած էր անոր գոյնը:

12. ԻՄ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՐԹԱԼՍ

Սեպտեմբեր ամսոյ մէջ էինք: Հայրս ըսաւ որ պէտք է Ուսումնարան տանին զիս: Ես շատ ուրախացայ, շատոնց կ'ուզէի արդէն Ուսումնարան երթալ: Հայրս պայուսակ մը գնեց ինձ համար: Ես անոր մէջ զեռեղեցի հարկաւոր առարկայները և ճամբայ ելանք: Դեռ Ուսումնարան չ'էի տեսած երբէք, սիրտս կը տրոփէր: Ժամը ութին մենք հասանք մեծ շէնքի մ'առջեւ և բակին դռնէն ներս մտանք: Բակին մէջ շատ մը մանուկներ կային, ոմանք կը խաղային արձակ համարձակ, ոմանք կանգնած էին իրենց ծնողացը քով: Մենք ներս մտանք Ուսուցչաց սենեակը, ես վախի մէջ էի, ամէնքը նոր մարդիկ էին, և ոչ մէկը կը ճանչէի: Ուսուցչաց գլխաւորն — Տեսուչը տեսաւ իմ շփոթութիւնս, քովս եկաւ և փայփայեց զիս. ասով սիրտ առի ես: Յետոյ քննեցին զիս և ընդունեցին Նախակրթարանի մէջ:

13. ՏԵՈՒԻ ԵՐԵՒԱՅ

Երբ որ ծագեցաւ պայծառ արեգակ,
Աքլոր, աղաւնի, հաւ ու ծիծեռնակ,
Ոչխար, դառնուկ, այծ, ուլեր, հորթ ու կով
Գնացին իրենց գործին շտապով:

Միայն ծոյլ տղան չը գնաց դպրոց,
Գիրքը չըպրտեց ու փախաւ փողոց,
Իրիկուն ամէնք յետ դարձան ուրախ,
Միայն տղան էր տրտում, գլխակախ:

14. ԱՂՕԹՔ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ

Ծոյլ աշակերտը հարցուց ջանասէրին. «Դու ի՞նչ կ'ընես որ դասերդ այդպէս լաւ կը սորվիս:

— Կ'աղօթեմ, պատասխանեց ջանասէրը:

— Ես ալ կ'աղօթեմ», ըսաւ ինքնիրեն ծոյլը և այն գիշերը, քնանալէն յառաջ, աղօթք ըրաւ, բայց յաջորդօրը դարձեալ դասը չ'էր գիտեր:

« Ես նորէն դասս չեմ գիտեր, ըսաւ նա ընկերոջը, իսկ դու կ'ըսէիր որ եթէ աղօթք ընեմ, կը սորվիմ:

— Արդեօք դու աղօթելէ յառաջ դասերդ կը պատարաստե՞ս, հարցուց ջանասէրը:

— Ո՛չ, պատասխան տուաւ ծոյլը:

— Եթէ այդպէս է, դու չես կարող երբէք սորվիլ դասդ: Նախ պէտք է աշխատիլ և ապա աղօթել: Օգնէ՛ դու ինքզինքիդ որ Աստուած ալ քեզ օգնէ:»

15. ՀՁՕՐ ՃԱՐ

Երբ իմ ծընողքըս կամ ես եմ տկար
Եւ կամ հանդիպի մի այլ պատահար,
Երբ որ աշխարհի մէջ կայ ցաւ կամ սով,

Երբ որ մարդիկ են իրար հետ խրուով,
Այս ամէն չարին ունիմ ես մի ճար,
Այդ իմ աղօթքն է ամէնի համար:

16. Լ Ա Ի Ը Ն Կ Ե Ր

Վայրենի հասարակ ծաղիկը պատահմամբ մեխակին հետ
մէկ թաղարի մէջ անկուեցաւ: Եւ ի՞նչ կը կարծէք, անոր
նման ինքն ալ անոյշ հոտ ստացաւ: Լաւ ընկերոջ հետ ապ-
րիլը մեծ օգուտ կը բերէ մեզ:

17. ԱՌԻԻԾՐ ԵՒ ԳՈՐՏԸ

Առիւծը կը լսէ Գորտին կռկռալը և ինքնիրեն կ'ըսէ.
« Այս գոռացողը մեծ գազան մ'ըլլալու է: » Բայց այս խօս-
քերն ըսելու ժամանակ, մէկ մ'ալ տեսնես որ Գորտը ճա-
հիճին մէջէն դուրս ելաւ: Առիւծն իսկոյն իւր ուժեղ թա-
թով ջարդեց զայն: « Այսուհետեւ մինչև որ չը տեսնեմ, չը
պիտի վախնամ », ըսաւ նա ինքնիրեն:

18. Մ Ա Ն Ո Ւ Շ Ա Կ

Դեռ ս'եր է ծիծեռ, դեռ ս'եր է սոխակ,
Գարնան կարապետ եկաւ Մանուշակ,
Երկնային խառնիք չորս կողմը բուրեց,
Նորածին աշխարհ նախ նա համբուրեց:
Երկինքն է անամպ, շողջողուն անձրեւ,
Տա՛նք Մանուշակին, երախա՛յք, բարեւ,

Որ մեր դաշտերուն բերաւ նոր գարուն,
Նախշուն հաւերով, ծաղկօք զարդարուն:

19. ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ

Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ, որպէս զի քեզի բարեք
համնի և երկայնակեաց ըլլաս երկրիս վրայ:

20. Հ Պ Ա Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Որդին ըսաւ հօրը. « Ըսէ՛, խնդրեմ, Հայրի՛կ, ինչո՞ւ
համար մի քանի հասկեր ծռած են մինչև դեռիս, իսկ
միւսները դէպ ՚ի վեր բարձրացուցած են իրենց գլուխներն:
— Այն հասկը, որ լեցուն է, դէպ ՚ի դեռիս կը խոնար-
հի, իսկ այն, որ դատարկ է, գլուխը վեր կը պահէ »:

Առած. — Ով որ փքանայ, շուտով չքանայ:

21. Ո Ր Բ Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Ը

Յովհաննէսի հայրն ու մայրը մեռան և նա մնաց որբ,
անտէր: Մէկը չիկար որ զինքը կերակրէր, մէկը չի կար որ
խեղճ մանուկը հագուեցնէր, տաքցնէր: Գլուխը գզգզուած
էր ու չի սանարուած, հագուստները աղաւաղ ու պատուտած:
Ո՞վ է որ կը գգուէ խեղճ որբը, գիշերը կը պառկեցնէ զայն,
կ'աղօթէ ու կը քնացնէ: Ո՞վ շարէն կ'զգուշացնէ զայն,
խնայք, գիտութիւն կը սորվեցնէ:

Ի՞նչ պիտի ընէին Յովհաննէսի ծնողքը եթէ կենդանի
լինէին:

62/53-67



22. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր

1. Չորս սաք ունիմ կարճ ու կոկիկ,
Գլուխ ունիմ ինչպէս գորտիկ.
Մարդ տեսնելուս սիրաս է դողայ,
Ոտք ու գլուխս ա՛լ չ'երեւայ:
2. Աչքեր ունի, սաքեր չ'ունի,
Մարդ կ'սպաննէ, ձեռքեր չ'ունի,
Հաւկիթ կ'ածէ, փետուր չ'ունի,
Շապիկ ունի որ կար չ'ունի:

23. Վ Ա Ր Գ Ե Ն Ի Ն Ո Ւ Փ Ո Ւ Շ Ը

Վարդենին ու Փուշը միասեղ բուսած էին: Օրին մէկը Փուշն բաւ իւր գեղեցիկ գրայւոյն. « Բարեկա՛մ, կը զարմանամ ես համբերութեանդ: Չ'գիտեմ ի՞նչու փուշերովդ չ'ես պատժեր այն մեղուները որոնք այնպէս ազդալուծ հոգալ կ'առնեն, հիւթդ ալ կը ծծեն:

— Ի՞նչու պատժեմ, պատասխան տուաւ Վարդենին համեստօրէն, չ'է՞ մի որ իմ հիւթէն մեղը կը շինեն անոնք:»

24. Մ Ե Ղ Ո Ւ

Գեղեցիկ գարնան հետ առաջին ծաղիկները բացուելնուն պէս, Մեղուն ալ դուրս ելաւ իսկոյն իւր հոտաւէտ խրճիթէն: Գնաց նա և նստաւ անուշահոտ ծաղկանց վրայ, սկսաւ հարց ու փորձ ընել իմանալու համար թէ արդեօք շուտով կը կանաչնան մարգագետինք, ե՞րբ կը բացուին ծառերու կոկոններն և ո՞չ կը ծաղկի արդեօք անուշաբոյր յամիկն:

25. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Ո՛չ ցորեն եմ, ո՛չ գարի,
Որ հողագործն զիս ցանի.
Առանց ջրի հունցած եմ,
Առանց ձեռքի կոլորած.
Ես անկրրակ թրխած եմ,
Թոնիր, ջաղաց տեսած չ'եմ,
Չեր ամենուր սիրածն եմ:

26. Ա Ր Ե Ի Ն

Նախշո՛ւն արեւ,
Հազա՛ր բարեւ,
Սյս ո՞ւր էիր երկար օրեր,
Ամպերու տակ մտեր կորեր.
Միթէ դո՞ւ ալ, յամառ մանուկ,
Գիտես պահուիլ այդպէս դաղտուկ:
Հերի՛ք, արե՛ւ, մեղ խըռովես,
Ա՛լ չը փախչիս, հողիդ սիրես:

27. Մ Ե Ր Դ Ա Ս Ա Ր Ա Ն Ը

Մեր դատարանը մեծ սենեակ մ' է: Այդ սենեկին մէջ կայ յատակ, առաստաղ և չորս պատ որոյ երկուքը երկար են, իսկ երկուքը կարճ: Առաստաղը ճերմակ գոյնով ներկուած է, յատակը դեղին, իսկ պատերուն թուղթ փակցուած է: Պատերուն մէջ դռներ և պատուհաններ բացուած են: Պատուհաններէն լոյս կը մտնէ, իսկ դռներէն մարդ: Սենեկի մէկ անկիւնը դրուած է վառարան, երկրորդ ան-

կիւնը՝ դասական առարկայներու պահարան մը, իսկ եր-
րորդը՝ գրատախտակ: Սենեկին մէջտեղ շարուած են նստա-
րաններ աշակերտաց համար, իսկ նստարաններուն առջեւ
դրուած են սեղան և աթոռ ուսուցչին համար:

28. ՀԱՆԵԼՈՒԿ

Ես կը շարժիմ անդադար,
Ո՛չ անիւ եմ, ո՛չ ալ լար:
Սարեր լեռներ դըղըրդեմ,
Թէ՛ կը շինեմ, թէ՛ քանդեմ,
Ամենէն ալ զօրեղ եմ,
Բայց վանդակը փակուած եմ:

29. ՍՏԱԽՕՍ

Փոքրիկ հովիւ մը ոչխարներ կը պահէր: Օրին մէկը
միտքը դրաւ նա խարեւ իւր ընկերները և սկսաւ բարձրա-
ձայն պոռալ. «Գա՛յլը, գա՛յլը, օգնեցէ՛ք, հասէ՛ք:» Մեր
հովիւները վազեցին եկան և տեսան որ խաբուեր են: Այս-
պէս ըրաւ նա մի քանի անգամ: Բայց անգամ մ'ալ գայլն
իրաւ եկաւ և յարձակեցաւ հօտին վրայ: Փոքրիկ հովիւն
սկսաւ սրտապատառ ձայնիւ օգնութիւն խնդրել, սակայն
ընկերները թէև լսեցին անոր ձայնը, բայց տեղերնուն ան-
գամ չը շարժեցան՝ կարծելով թէ այս անգամ տլ գիտամա՞ք
կ'ընէ: Գայլն ալ, տեսնելով որ տէր ու տիրական չըկայ,
սկսաւ մէկիկ մէկիկ խեղդել խեղճ ոչխարները:

Առած. — Սուա ըսողի տունը կրակ ինկաւ, ոչ ոք հա-
ւատայ:

30. ՀՐԱԻԷՐ ԳԱՐՆԱՆ

Արի՛, գարո՛ւն,
Արի՛, սիրո՛ւն,
Բե՛ր պարզ արեւ,
Առատ անձրեւ.
Խնդրէ՛ Տէրէն,
Հաճար, ցորեն:
Զմեռն էր մեծ,
Ողջ սպառեց,
Ամբար մտռան
Դատարկ դարձան:

31. ՈՒԺԸ ԻՐԱԻՈՒՆԻ ԶԷ

Մկրտիչ այգիէն ներս վազեց, քրոջը Սաթինկան ձեռքէն
խլեց պաճուճապատանքը և սկսաւ այգւոյն մէջ վազվզել
իր փայտէ ձիուն վրայ նստած: Սաթինիկ կեցած կ'արտա-
սուէր: Մկրտչին մեծ եղբայրը՝ Վահան անէն դուրս վազեց:
Վահան կ'ուզէր ինքը խաղալ, այս պատճառաւ Մկրտչի
ձեռքէն պաճուճապատանքն ալ խլեց, ձին ալ: Մկրտիչ
գնաց հօրը գանգատեցաւ, իսկ հայրը պատուհանին առջեւ
նստած ամէն բան տեսեր էր:

Ի՞նչ կրսէր Մկրտչին հայրը:

32. ԳԱՅԼԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Գայլը լսեց որ Հովուին բոլոր հօտը ջարդուեր էր: Ար-
տասուալից աչօք Հովուին մօտ եկաւ և ըսաւ. «Կը ցաւիմ
վրադ, ո՛վ բարի մարդ, շատ կը ցաւիմ:» Հովիւը Գայլին

արտասուքին նայեցաւ և պատասխանեց. «Շնորհակալ եմ, բարեկամ, բայց ո՞վ գիտէ թէ ինչո՞ւ կուլաս, արդեօք վերաս ցաւելո՞ւք թէ ոչ այն պատճառաւ որ դու ինքդ այսուհետեւ ա՛լ ապրելու միջոց չ'ունիս:»

33. ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

Սուրբ Կարապետ բարձր է բոլոր,
ճամբայ ունի ոլոր մնոր,
Կ'երթայ կուգայ շատ ուխտաւոր,
Թէ՛ ձիաւոր, թէ՛ ոտաւոր:
Մոռոտ կուտայ ոտաւորին,
Ձուղտ կուտայ ձիաւորին:

34. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1. Քոյր և եղբայր մէկ տեղէ մը իրարու ետեւէ կը վազեն, բայց իրարու չ'են հասնիր:

2. Ձուտ թելէ չ'է, կը հիւսէ,
Մէջը նստած՝ կ'սպասէ.
Ձէնքեր չ'ունի՝ որս կ'ընէ,
Լաւ կը ծըծէ, կը մարսէ:

35. ԸՆԿՈՅՁ ԵՒ ԳԳՈՒՄ

Ամառուան տաք եղանակին, գիւղացի մը ընկուզենուոյն շուքին տակ նստած կը զովանար: Վեր նայելով՝ ծառին վրայ շատ ընկոյզներ տեսաւ նա. «Ձարմանալի՛ բան, մրտածեց գիւղացին, այս ծառին մեծութեա՞նը նայիս թէ պտուղներուն: Արմատը ահագին, ձիւղերը բազմաթիւ և

լայնատերեւ, կարծես թէ կատարեալ բլուր մ'է. բայց պտուղներն այնքան մանր են որ եթէ շուխտ շուխտ կամ երեք երեք չ'լինէին, տերևոց մէջտեղը ծածկուելով դժուարութեամբ պիտի տեսնուէին. մինչդեռ դդումը, որ մարդուս գլխէն ալ մեծ է, շատ բարակ ու քնքոյշ ցօղուններու վրայ կ'ածի: Ձէ՛, ասոնք ուրիշ կերպ ըլլալու էին:» Խօսքն աւարտելուն չի մնաց, յանկարծ ընկոյզ մը բրդելով վար ինկաւ և այնպէս զարնուեցաւ գիւղացւոյն քթին որ սկսաւ արիւն հոսիլ:

Մեղա՛յ Աստուծոյ, գոչեց գիւղացին, պատիժս պիտի գանէի եթէ ընկոյզին տեղ դդում մ'իյնար գլխուս: Ձէ՛, Աստուած ամէն բան իմաստութեամբ ստեղծեր է և ես, խեղճ արարածս, կարելի չէ որ համարձակիմ անոր գործոց մէջ սխալներ գտնել:»

36. ԼՈՒՍԻՆՆ ՈՒ ԱՐԵԻԸ

«Արի՛, Է՛մ քոյրիկ, լոյս տո՛ւր գեշերը
Թէ որ կ'ամաչես դուրս գալ պարզ օրը:
— Ո՛չ, ո՛չ, կը վախնամ ես, լուսի՛ն եղբայր,
Գիշերը շրջիլ ու մարդկանց լոյս տալ:
— Յերեկը շրջի՛ր, կուտամ ասեղ քեզ,
Որ մարդ թէ նայի՝ աչքերը ծակես:»
Այն օրէն ՚ի վեր աննման քոյրը
Կուտայ միշտ երկրին տաք, փայլուն օրեր:
Իսկ գեշերները աստղեր անհամար
Լուսին եղբօր հետ կը փայլին պայծառ:

37. ՓՈՒՔՐԻԿ ԳԻՒՂԱՅԻՆ

Անդամ մը, ձմեռուան եղանակին, անտառէն դուրս ելայ: Սաստիկ ցուրտ էր: Տեսայ որ ծանր ծանր սարէն վեր կ'երէնէր փայտ բեռացած ձի մը և անոր կապէն բռնած կը քաշէր փոքրիկ գիւղացի մը հանդարտաքայլ: Մեծ մեծ կօշիկներ հագած էր նա, կարծ մուշտակ մը, իսկ ձեռքերն անցուցած էր բրթէ թաթպաններ. «Բարի՛ երթաս, բարեկամ: — ձանբաղ գնա՛: — կը տեսնեմ որ դու շատ բարկացոտ ես, ուսկից կը բերես այդ փայտը: — Բնական է որ անտառէն չե՞ս լսեր, հայրս այնտեղ կը կարէ, ես ալ կը կրեմ:»

Ի՞նչպիսի տղայ էր փոքրիկ գիւղացին: Ինչո՞ւ այնքան կոպիտ էր նա: Ի՞նչ տեսակ պատասխան պիտի տար քաղաքաբնակ տղան:

38. Պ Ա Յ Տ

Հարուստ գիւղացի մը որդւոյն հետ քաղաք կ'երթար: «Աչքդ բա՛ց, կարապետ, ըսաւ հայրը, ձանբուն վրայ պայտ մ'ինկած է, վեր ա՛ռ: — Է՛հ, Հայրի՛կ, այն չնչին բանին համար ծռիլ կ'արժէ՞», պատասխանեց կարապետ: Հայրը ձայն չի հանեց, ինքն պայտը վերցուց և պարկին մէջ դրաւ: Ձանբան պայտը մէկ դահեկանի դարբինի մը ծախեց և այդ ստակով բալ գնեց: Առաջ գնացին: Օդը տաք էր, արեգակը սաստիկ կ'այրէր և շրջակայքը ո՛չ աղբիւր կար, ո՛չ ծառեր: Կարապետ ծարաւէն կը տանջուէր և հազիւ հօրը ետեւէն կրնար երթալ: Յանկարծ հայրը, իբր թէ անդիտաբար, բալ մը վար ձգեց: Կարապետ խնայելով վերցուց զայն, կերաւ և ասով քիչ մը զովացաւ: Փանի մը քայլ ա-

ռաջ երթալէն ետքը, հայրը հատ մ'ալ վար ձգեց, յետոյ երրորդը, չորրորդը . . ., մինչև որ ամէնքն ալ հատան, իսկ կարապետ ծռելով շարունակ զանոնք կը հաւաքէր ու կուտէր: Երբ նա վերջին հատիկը վեր առաւ, հայրը ետին դարձաւ և ծիծաղելով ըսաւ. «կը տեսնե՞ս, զաւակս, եթէ մէկ անգամ պայտին համար ծռէիր, այսքան անգամ չ'պիտի ծռէիր բալերուն համար: Այս քեզի խրատ որ ուրիշ անգամ ծուլութիւն չ'ընես:»

39. ՀԱՅՆ ՈՒՏԵԼՈՎ, ԳՈՐԾԸ ՏԵՄՆԵԼՈՎ

Շատոնց է որ մանուկը պատուհանին առջևը նստած կը պատրաստէ իւր դասերը և փայլուն արևը դրսէն զինքը կը հրաւիրէ. «Բաւական չե՞ ինչ որ կարդացիր, ոտքի ե՛լ, խաղերդ սկսէ՛:» Իսկ տղայն արեգակն պատասխանեց. «Ո՛չ, պայծա՛ռ արեւիկ, ո՛չ, հիմայ խաղալու միջոց չ'ունիմ, թո՛ղ, առաջ դասս վերջացնեմ:»

Մանուկը կը գրէ ու կը կարդայ, իսկ պատուհանին տակ, ճիւղին վրայ նստած, սիրուն թռչունը կ'երգէ և միշտ այսպէս կ'ըսէ. «Բաւական չե՞ ինչ որ կարդացիր. ոտքի ե՛լ, խաղերդ սկսէ՛:» Իսկ մանուկը թռչունին կը պատասխանէ. «Ո՛չ, սիրո՛ւն թռչնակս, ո՛չ, հիմայ խաղալու միջոց չ'ունիմ, թո՛ղ որ առաջ գործս աւարտեմ:»

Մանուկը դարձեալ նստած է, գիրքը առաջին, և պատուհանին կողմն ալ չի նայիր, իսկ պարտիզին կարմիր կեռասը ակնջին տակ կը փախայ. «Բաւական չե՞ ինչ որ կարդացիր. ոտքի ե՛լ, խաղերդ սկսէ՛:» Մանուկը կեռասին կը պատասխանէ. «Ո՛չ, ի՛մ քաղցրատեսիլ կեռասս, ո՛չ, հիմայ խաղալու միջոց չ'ունիմ, թո՛ղ նախ դասս աւարտեմ:»

Մանուկը կարգաց ու գրեց, բոլոր գործերը վերջացուց, գրքերն արկղին մէջ դրաւ, ապա դէպի 'ի այգին վազեց և համարձակ ձայնով գոչեց. « Ո՞վ էր դիս հրաւիրողը: » Արեգակն այժմնորա համար աւելի գեղեցիկ կը փայլէր, փոքրիկ թռչունը իւր երգը անոր կը նուիրէր, իսկ կեռասնին իր քաղցրիկ պտուղները կ'ընծայէր ծիծաղագէմ:

40. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր

1. Նեղ ու մութ տուն,
Սատանան մէջը քուն:
2. Թռչուն մը կար սեւ ու սպիտակ,
Կ'երնէր 'ի ծառ, կ'իջնէր 'ի տակ:



ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԻ

1. Պ Ա Պ Ը

Պապը սաստիկ ծերացեր էր: Նորա աչքերը լաւ չ'էին տեսներ, ախանջները ծանրացեր էին, ձեռքերը և ոտքերը ծերութենէ կը դողդողային, այնպէս որ դժուար բերանը տարած ժամանակ կերակուրը կը թափթփէր:

Նորա որդին ու հարսը աս բանէս չ'էին ախորժեր: Ծերունին իրենց հետ մի և նոյն սեղանը չ'էին նստեցներ, այլ առանձին անկիւն մը հացը առջին կը դնէին և կաւէ ամանով կերակուր կուտային խեղճին: Անգամ մը հաց կ'երած ժամանակ ծերունուն ձեռքերը դողդողացին, ամանը վար ինկաւ և կտորեցաւ: Հարսն ու որդին սաստիկ բարկացան և այնուհետև փայտէ ամանով միայն կուտային կերակուր:

Ծերունին թոռ մ'ունէր: Օր մը սա գետինը նստած փայտի կտորուանքով բան մը կը շինէր:

Մայրը հարցուց նմա. — « Ի՞նչ կ'ընես, զաւակս:

— Փայտէ աման կը շինեմ, ըսաւ, որ երբ դու և հայրիկս ծերանաք, անով կերակուր կերցնեմ ձեզ:»

Հայր ու մայր իրարու երես նայեցան և ամթէն կարմրեցան: Այնուհետև սկսան ծերը պատուով պահել:

Պասուէ՛ ծերերը որ ծերանաս: Երբ ծերանաս, ծերի պատիւը կ'իմանաս:

2. Մ ԵՐ Ը Ն Տ Ա Ն Ի Բ Ը

Մեր ընտանիքը բազմաթիւ է: Ես ունիմ հայր և մայր, երկու եղբայրներ և երկու քոյրեր. ես ամենէն մեծն եմ:

Նաև ծեր պապ մ' ունինք: Նա շատ քիչ անգամ անէն դուրս կ' ելնէ, այն ալ եկեղեցի երթալու համար. նա կը սիրէ զմեզ ու կը փայփայէ:

Իմ հայրս շատ կ' աշխատի, մենք ամէնքս անոր աշխատութեամբ կը կերակրուինք և կը հագուինք: «Առանց անոր մենք ի՞նչպէս կրնանք ապրիլ», կ'ըսէ շատ անգամ մայրս:

Մայրս անտեսութիւն կ'ընէ. ճաշը և ընթրիքը պատրաստել կուտայ, ներքնատուներ և մառանը կ'երթայ: Եթէ գիտնայիք թէ ո՞րչափ կը սիրեմ անոր հետ մառանը երթալ: Ամբողջ օրը մայրս մեզ համար կ'աշխատի և հագուստ կը կարէ: Նա կը սորվեցնէ մեզ խաշակնքել և աղօթել: Երեկոյները քնանալէ առաջ կ'աղօթենք մենք:

Ես փոքրիկ քոյր մ' ալ ունէի, բայց գերեզմանատուն տարին զինքն և կանաչ բլրակին տակ թաղեցին: Մայրս մինչեւ այսօր կուլայ մեր փոքրիկ Եղիսարեթին վրայ:

Քանի՞ անդամներէ կը բաղկանայ ձեր ընտանիքը: Պատմածնիդ կարդացածնուդ հետ բաղդասեցի՞ք:

3. ԶԱՒԱԿԱՅ ՄԵԻԹԱՐԱՆՔԸ

« Եկէ՛ք, եղբա՛րք, շուրջ պատե՛նք,
Մեր մօր վիշտը փարատե՛նք »:
Մատաղ աղայք ցատքելով՝
Մօր չորս կողմը կտրեցին,
Կէս վշտագին, կէս ուրախ՝
Այս խօսքերը ձայնեցին:
« Մայրի՛կ, մայրի՛կ, քանի՞ լաս,
Մինչ ե՞րբ տանջուիս, հառաչես,
Մանուշակը վատ տեղ չէ,

Հերի՛ք սիրագ մորմնքես:
Երբ մեր քոյրը մեզ թողուց,
Մենք ճիշ բարձինք լալագին,
Մա՛յրիկ, դու սա խօսքերով
Վախճան դըբիր մեր լացին.
— « Երկինքի մէջ մեզնէ լաւ
« Հրեշտակները ձեր քրոջ
« Փայփայանքով սէր կուտան.
« Սէ՛ր, օրհնութի՛ւն մեր Տիրոջ:
« Ինչպէս անմեղ թիթեռնիկն
« Ծագկանց վրայ կ'ուստոստէ,
« Որպէս ասողիկն երկնից մէջ
« Պարզ գիշերին կը փայլէ,
« Այնպէս հոգին մեր քրքոջ
« Ատուածաբնակ դրախտի մէջ
« Հրեշտակներուն հաւասար
« Պիտի գանէ ել և էջ: » —
Մա՛յրիկ, մա՛յրիկ, նոյն խօսքերն
Լըսէ՛ մեզնէ սրտաբայ,
Երջանիկ է Մանուշակն,
Սըբէ՛ աչերդ, ուրախ կա՛յ: »

4. ՀՐԱՇԱԼԻ ԽՈՏ

Երկու աղախին, Աննա և Կատարինէ, քաղաք գացեր էին: Իւրաքանչիւրը մէյմէկ կողով խնձոր կը տանէր: Աննա շարունակ կը արանջար և կը հառաչէր, իսկ Կատարինէ կը ծիծաղէր ու կատակներ կ'ընէր:
— « Ի՞նչ է պատճառը որ դու այդպէս ուրախ զուարթ կը ծիծաղիս, հարցուց վերջապէս Աննա: Չէ՞ որ քու կողովդ

ալ իմինիս պէս ծանր է և դու ալ ինէ աւելի ոյժ չ'ունիս :

— Ճշմարիտ կ'ըսես, պատասխանեց կատարինէ . բայց ես կողովիս մէջ այնպիսի խոտ մը դրեր եմ որ բոլոր բեռը կը թեթեւնայ :

— Իրա՞ն, ի՞նչպիսի խոտ է այդ և ո՞ր տեղէն ճարեր ես, հարցուց Աննա զարմանալով :

— Ուսկից ճարելաւ ես ալ չ'գիտեմ, պատասխանեց կատարինէ, միայն անունը կրնամ տալ. հո՞գիտե՞ս կը կոչուի այն որմէ զուրկ ես, սիրելի՛ Աննա : »

5. ԵԱՏ ԵՏԱՊՈՂԸ ԵՌԻՏ ԶԸ ՀԱՄՆԻՐ

Պարոն մը, սայլակին մէջ նստած, ամենայն արագութեամբ կ'արշաւէր : Գիւղացւոյ մը հանդիպեցաւ և հարցուց թէ արդեօք քաղաքը հեռո՞ւ էր : Գիւղացին անիւներուն նայեցաւ և ըսաւ . « Եթէ կամաց երթաս, երեկոյին կը հասնիս : » Պարոնը բարկացաւ Գիւղացւոյն յիմար պատասխանին վրայ և սայլապանին հրամայեց որ ձիերը մտրակէ : Բայց դեռ երեք մ'ըն չի գացած՝ յանկարծ սայլակին առջևի ահիւր կոտորեցաւ և սունակը սաստիկ ընթացքէն դետինը ճեղքեց ու երկու կտոր եղաւ : Բարեբաղդաբար ճամբուն մօտ դարբնոց մը կար : Մեծ գժուարութեամբ սայլակը մինչև այն տեղ քաշեցին և ամբողջ օրը դայն նորոգելու աշխատեցան : Մեր պարոնը միւս օրը երեկոյին հաղիւ քաղաք հասաւ :

6. ԾԻԾԵՌՆԱԿ

Մարտն անցաւ, հասաւ Ապրիլ գեղեցիկ, Հեռու աշխարհէն եկաւ ծիծեռնիկ .

Բարո՞վ դու եկար, գարնան կարապե՛տ,
Բոյն շինողներուն ամենէն վա՛րպետ :

Կուռնկը թըռաւ, գնաց վերերէն,
Սոխակն ալ փախաւ մեր պարտէզներէն .
Միայն դու մնացիր ճնճղուկներու հետ,
Սիրո՛ւն ծիծեռնիկ, գարնան կարապե՛տ :

Պատուհանիս մէջ շինէ՛ . քո բունը,
Անոյշ ճըռուղով երգէ՛ դարունը,
Ածէ՛ ձու, հանէ՛ գեղեցիկ ծագեր,
Մ'նա՛ մեր մօտը մինչեւ Սեպտեմբեր :

7. ՏՈՒՆԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԵՒՆԵՆ

1. — Փայտէ տուները հիւաները կը շինեն գերաններով : Քարէ տուները որմնադիրները կը շինեն աղիւսով կամ տաշած քարերով : Ամենէն առաջ հիմը կը դնեն : Հիմանց վրայ կը բարձրացնեն պատերը : Պատերուն մէջ բացուածներ կը թողուն դրան և պատուհանի համար : Երբ պատերը կը բարձրանան կ'աւարտին, անոնց վրայ գերաններ կը ձգեն, իսկ գերաններուն վրայ կոճեր : Յետոյ անոնց վրայ կը շինեն տանիքը : Տանեաց մէկ կողմը ծռած է, որպէս զի անձրևին ջուրը վրան չի մնայ : Տանիքը ծածկուած է հողով, երկաթի թիթեղներով, կղմինտով կամ եղէգով :

2. — Տունը դրսէն պատրաստ է, բայց ներսի կողմը դեռ շատ գործ կայ, պէտք է յատակը և առաստաղը տախտակով գոցել, վառարանները պատրաստել, դռները կախել, ներկել և կամ թուղթ փակցնել : Երբ տունը բոլորովին պատրաստ է, անոր մէջ կը զետեղեն զանազան կարասիք և ա-

մաններ, յետոյ քահանայն կը կանչեն: Քահանայն տունը կ'օրհնէ և այնուհետև կ'սկսին բնակիլ հոն:

Պատմեցէ՛ք մի առ մի թէ տունը ի՞նչպէս կը շինեն:

8. ՄԵՐ ՏՈՒՆԸ

Մեր տունը մեծ չէ: Միայնակ է և ունի ութ սենեակ, դահլիճ, հիւրանոց, սեղանատուն, ննջարան, մանկանոց, առանձնասենեակ, նախասենեակ ու խոհանոց: Դահլիճն ամենէն մեծ սենեակն է, իսկ նախասենեակն ամենէն փոքրը: Մանկանոցը մասնաւորաբար մեզ համար շինուած է, այն տեղ կը պատրաստենք մեր դասերը: Չորս պատուհան ունի այն և երկու դուռ: Մեր սենեակը շատ լուսաւոր է, վասն զի պատուհանները մեծկակ են: Սենեկին մէկ անկիւնը վառարանը դրուած է, իսկ միւս անկիւնը՝ գրոց ու թղթոց պահարանը: Սենեկին մէջ սեղան մը և քանի մ'աթուոններ կան: Պատերէն վար կախուած են շատ մը կենդանեաց և բուսոց նկարներ որոնք հարկաւոր են մեզ դասերնիս պատրաստելու ժամանակ:

Համեմատեցէ՛ք ձեր տունն ու սենեակը այս տեղ նկարագրուածին հետ:

9. ՏԱՆ ՄԷՋ

Փոքր եղբօրը հարցուց. «Քեզ համար ո՞րտեղը լաւագոյն է, տո՞ւնը թէ՛ ուսումնարանը: — Ուսումնարանը լաւ է, պատասխանեց եղբայրը, բայց տունն ալ գէշ չէ: Աղախինը մեր հագուստները կը լուայ, իսկ մանուկները կ'ուսանին կամ կը խաղան: Տան մէջ ամէն բան ծանօթ է

ինձ, սեղանները, աթուոնները և պահարանները: Ես ամէն սենեակ կը վազվզեմ, հօրս հետ ներքնասենեակը կը մտնեմ, մօրս հետ՝ ննջարանը, կը մտնեմ դահլիճը, հիւրանոցը, նաև խոհանոցը ուր ճաշէն առաջ ա՛յնքան անոյշ հոտեր կը բուրեն, և մասանը ուր կեռերու վրայ կախուած են պատուական նպարեղէնք: Տան մէջ առաւօտուն նախաճաշիկ կ'ընենք, ցերեկը՝ ճաշ և երեկոյին՝ ընթրիք, իսկ գիշերները հանգիստ կը քնանանք մեր անկողնոց մէջ:»

Դո՛ւք տունը մէջ ինչ կ'ընէք. պատմեցէ՛ք եւ համեմատեցէ՛ք:

10. ԽՐՃԻԹԻՆ ՆԵՐՍԸ

Յաճ խրճիթի մը մէջ, որու պատուհաններն բաց էին, գիշերը ձէթով լի ճրագ մը կը վառէր: Հնոցին թոյլ կրակը կա՛մ բոլորովին կը մարէր, կա՛մ աղօտ լուսով մը կը լուսաւորէր ծխէն դեղնած պատերը: Խրճիթը շատ մաքուր աւլուած էր, պատուհանին կտաւէ վարագոյրը միայն մթութեան մէջ սպիտակ կ'երեւար: Սենեկին մէջտեղը հնոց մը շինուած էր, իսկ պատին մէջ՝ փոքրիկ վառարան մը: Արեւմտեան պատին մօտ երկար տախտակ մը կապուած էր և վրան հին կապերաներ սփռուած էին, իսկ հիսիսիսային պատին քով գիւղացւոյն գործիքները դրուած էին:

Նկարագրեցէ՛ք ձեր բնակարանի ներսիդին: — Յոյց տուէ՛ք եւ պատմեցէ՛ք թէ ի՞նչպէս կրնաք գտնել երկրի չորս կողմերը եւ ի՞նչ անուն կուտաք անոնց ամէն մէկուն:

11. ԽՐՃԻԹ

Կէս գիշերին պայծառ լուսինն
Երկնից վրայ բարձրացաւ .
Սըփռեց աղօտ իւր ճաճանչներ
Եւ խրճիթը լոյս առաւ :

Փոքրիկ հիւղ մի էր այն մաքուր ,
Անշըքապէս կառուցուած .
Մի դուռ ունէր , ցած ու նեղկիկ ,
Եւ մի երթիք ալ բացուած :

Լուսընկային աղօտ լոյսը
Երգիւթէն ներս թափանցեց
Եւ նայողի աչքի առաջ
Սա տեսարանը պարզեց .

Խրճիթին մէջ երգիկին տակ ,
Կլոր հնոց կար շինուած ,
Որոյ շուրջը երեք հոգի
Գործ 'ի ձեռին են նստած :

Պառաւ կինը վարպետութեամբ
Ճախարակը կը փաթթէ ,
Բրդի թելերէ վիլակներ ,
Արագ արագ կը կազմէ :

Համեստագէժ կոյս աղջիկը՝
Սանտերքն առած իւր առջին ,
Հանգարտօրէն բուրդ կը գզէ ,
Նըստած մօտ իւր մայրիկին :

Երիտասարդ այն պատանին
Արագ արագ կը տաչէր
Եւ մէկ ժամէն ամբողջ գութան ,
Վաղուան համար պատրաստէր :

Հաւը ձայնեց . Պառաւն մեղմով
Ձեռքի գուլպան վերջացուց .
— « Կէս գիշերը վաղուց անցաւ ,
Պէտք է ննջել » , իմացուց :

Անցան ժամեր , խրճիթին մէջ
Խոր լուսթիւն կը ախրէր ,
Մինչ աղջիկն այն ժրաջան ,
Թեթև քունէն արթնցեր :

Լուսամուտէն դուրս նայեցաւ
Եւ չըթունքը մեղմով խաղաց .
Արշալոյսը նոր կը բացուէր ,
Կուժն ունն առաւ , ջուրի գնաց :

12. ՄԵՐ ՓՈՂՈՅԸ

Այն փողոցը , ուր շինուած է մեր տունը , շատ երկայն
է : Բաղաբին մէջտեղէն կ'անցնի այն և անոր վրայ շինուած
է Մայր Եկեղեցին : Չանազան կողմերէ անոր կը միանան
շատ մը փոքրիկ փողոցներ : Մեր փողոցին երկու կողմը շատ
հոյակապ տուններ շինուած են . տուներուն առջև զետե-
ղուած շատ մը վաճառանոցներ կան . անոնցմէ ամէն մէկն
ունի իրեն ազգը որ կը յայտնէ թէ վաճառանոցին մէջ ի՞նչ-
պիսի ապրանք կը ծախուին : Երէկ ևս կարդացի հացավա-

ճառին, դերձակին, կօշկակարին և շատ վաճառականաց ազգերը:

Ձեր փողոցն ալ այսպէ՞ս է:

13. ԵՐԿՈՒ ՏԱԿԱՌՆԵՐ

Երկու տակառ միասին ճամբայ ինկան, մէկը գինւով լեցուն, իսկ միւսն՝ դատարկ: Առաջին տակառը հանդարտ գլորուելով առաջ կ'երթար, իսկ միւսը խենդի պէս և գորգոռալով կը թռչկոտէր քարէ ճամբուն վրայ և սաստիկ փոշի կը հանէր:

Անցորդները վախերնուն ճամբուն մէկ կողմը կը կծկրտէյին, հեռուէն անոր գոռուժ գոչումը լսելով: Բայց որչա՛փ ալ գորգոռար սա, այսու ամենայնիւ առաջին տակառին չափ օգտակար չ'էր ՚ի հարկէ:

Անպիսան մարդուն լեզուն երկայն կ'ըլլայ:

14. ԾԱՌԵՐՈՒՆ ՎԵՃԸ

Ծառոց մէջ վէճ մը բացուեցաւ թէ իրենցմէ ո՞րն աղէկ է: Կաղնին ըսաւ. «Ես բոլոր ծառերու թագաւորն եմ. իմ արմատս գեանի մէջ խորունկ մտած է, բունս հասա է, գագաթս գէպ երկինք կը նայի, աերեւներս կտրտուած են, իսկ ճիւղերս կարծես թէ երկաթէ ձուլուած են: Փոթորիկներու առջեւ չ'եմ խոնարհիր ես, կայծակներու տակ չ'եմ ընկճիր:»

Սօսին այս խօսքերուն վրայ ծիծաղեցաւ. «Շատ կը պարծենաս, ըսաւ նա, դու կը մոռնաս որ ինձ նման ծառ ամբողջ

Ասիոյ մէջ չի կայ. արմատներս երկրիս անդունդը կը հասնին, գագաթս ամպերու հետ կը խաղայ, հարիւրաւոր ճիւղեր ունիմ, ամէն մէկ ճիւղս քու բունէդ հաստ: Գիտէ՛ թաթանման տերեւներս որոնց մօտ քու աերեւներդ այնչափ փոքր են որչափ ճանճը ուղտին քով, իսկ իմ բունիս տակը կրնայ մարդ պատասպարուիլ ՚ի ստիպել հարկին: Համեստութեան համար պտուղներդ չի յիշեցիր, բայց անոնք ալ խոզերը քեզ մօտ կը հրաւիրեն. իսկ իմ պտուղներս, թէև սընընդաբար չ'են, սակայն աերեւներուս հետ ձեռք ձեռքի տուած սօսափելով՝ յոգնած և արեւէն տոչորեալ անցորդն իրենց ստուերին տակ կ'առնուն և արեւէն ու անձրեւէն կը պաշտպանեն զայն:»

Խնձորենին լսեց այս երկուքին խօսակցութիւնը և ըսաւ. «Գուք երկուքդ ալ շատ կը հպարտանաք, բայց ըսէ՛ք, տեսնեմ, միթէ դուք կուտա՞ք մարդոց այն բանը զոր ինձմէ կ'ստանան: Տեսէ՛ք իմ կարմրորակ խնձորներս. անոնք մինչեւ անդամ թագաւորաց սեղանը կը զարդարեն:»

Զայս լսելով, Մայրին իւր փշոտ գլուխը շարժեց և ըսաւ. «Սպասեցէ՛ք, շուտով կուգայ ձմեռը և ամէնքդ ալ կը մերկանաք, իսկ իմ կանաչ փշերս միշտ վրաս կը մնան: Առանց ինձի կարելի չ'է ցուրտ երկիր ապրիլ. ես մարդոց վառարանները կը տաքցնեմ և նոքա իմ փայտովս իրենց համար խրճիթ կը շինեն:»

Համեստեցէ՛ք կաղնին սօսի ծառին հետ եւ մայրին խնձորենույն հետ:

15. ՊԱՐՏԵՂ

Պարտեղները տուներու մօտ կ'ըլլան և չորս կողմէն ցանկ կամ պատ կ'ունենան: Պարտիղին տէրը կամ պարտիղպանը

պարտէզը կը մշակէ և աղբով լաւ մը կը բարւոքէ զայն : Պարտիզին մէջ մարգեր կը շինեն . մարգերուն վրայ պարտիզի բոյսեր կը ցանեն ու կը տնկեն : Պարտիզին վնաս կուտան որդերը , թռչունները , հաւերն և ընտանի կենդանիք : Տաք ժամանակ մարգերը կը ջրեն : Մարգիկ պարտիզին բանջարեղէնները իբրև կերակուր կը գործածեն , իսկ միւս ումպէս մասերն անասնոց կուտան :

16. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՌԱՒՕՏ

Գարնանային արեւն հպարտ բարձրացաւ ,
 Երկրագործն իրեն մածը ձեռք առաւ ,
 Արօրին քովէն հանգարտ կը քալէ
 Եւ ուրտխ զուարթ բարձրաձայն կ'երգէ .
 «Ո՞վ կեանք կը վարէ երկրագործին պէս ,
 «Գարնան սկիզբէն միշտ ուրախ երես :»

17. ԵՐԿՐԱԳՈՐԾԸ ԵՒ ԾԱՂԻԿԸ

Համե'ստ ծաղիկ դաշտային , գէշ ժամի հանգիպեցար .
 Երբ արօր քշեցի , անոր առջին ինկար դու :
 Ո՞ր դաշտերու գեղեցկութիւն , զ'քեզ չի կրցայ փրկել .
 ցաւօք սրտի և ախամայ քաղցր կեանքդ կարճեցի :
 Խոտերուն մէջ իբրև գոհար խոնարհաբար փայլելով
 միամտաբար կ'սպասէիր արեգական ծագման :
 Յանկարծ սրածայր արօրն անգթափար կարեց զ'քեզ և
 այսպէսով մաաազ կենացդ դժբաղդ վերջ տուաւ :

18. ԱՅԳԻՆԵՐԸ

Այգիները տուներուն մօտ կը տնկեն կամ քաղաքէն դուրս , և չորս կողմէն ցանկ կամ պատ կը քաշեն : Այգիներու մէջ կը բուսնին նաև պտղատու ծառեր , թփեր և պարտիզի ծաղիկներ : Գեղեցիկ հասարակ ծառեր ալ կը բուսնին հոն : Այգիին ճամբաները աւազ կը ցանեն որպէս զի խոտ չի բուսնի և ցեխ չ'ըլլայ : Այգին կա'մ տէրն ինք կը պահպանէ , կա'մ այգեպանը : Այգիները մարդուս մեծ օգուտ ունին :

19. ԱՅԳԻ

Կանանչցիր , ո՛հ , կանաչցի՛ր ,
 Գալարագե՛ղ իմ այգի .
 Ծաղկեցէ՛ք՝ դուք , ծաղկեցէ՛ք ,
 Ի՛մ վարդագոյն ծաղիկներ :

Հասէ՛ք և դուք , շուտ հասէ՛ք ,
 Ո՞վ քաղցրահամ պտուղներ .
 Ինձ մօտ կուգան , հաւաքուին ,
 Իմ սիրելի շատ հիւրեր :

Ինձ մօտ դայ հայրս սիրական
 Եւ այգւոյն մէջ կը զբօսնու .
 Ամէն պտղէ կ'առնու համ ,
 Եւ զիս փոքրս կը դովէ ,

Որ այս այգին եմ պահեր ,
 Ջուր եմ տուեր անխնայ ,
 Տաքէն , ցրտէն պահպաներ .
 Եւ այն՝ քրտանցս վարձ կ'ըլլայ :



20. ԲՈՒՍՈՅ ՏԵՍԱԿՆԵՐ

Բոյ՝ ըսելով կ'իմանանք ծառեր, թուփեր, հացաբոյսեր, բանջարեղէններ, սունկեր ու խոտեր:

Ծառն ունի մէկ հաստ բուն, շատ ճիւղեր և սառեր: Ոստերուն վրայ կա՛մ տերեւներ կան և կա՛մ ասեղի նման փուշեր:

Թուփը մէկ բունի տեղ մի քանի բարակ բուններ ունի: Հացաբոյսերը բունի տեղ դատարկ ծղօտներ ունին:

Խոտը բարակ ցօղուն ունի: Սունկը ո՛չ տերեւ ունի և ո՛չ սառեր, միայն կոթ մը և գլխուն վրայ իր չեւրէ:

Մենք քանի մը բանջարեղէններու պատեաները և միջի սերմերը կ'ուտենք, միւսներուն արմատը, իսկ մէկ քանինքրուն ալ տերեւները:

Ի՞նչ ծառեր, թուփեր, հացաբոյսեր, սունկեր, բանջարեղէններ ու ծաղիկներ գիտէ:

21. ՎԱՐԳ

Իւր գեղեցիկ տեսքին և անուշահոտութեանը համար վարդը ծաղկանց Բաբուսի կը կոչուի: Վարդը թփերու վրայ կը բուսնի: Վարդին արմատները երկար են ու պինդ. շագանակագոյն բունը և կանաչ նորաբոյս շաւիղները մանր փշերով չըջապատուած են: Վարդենոյն տերեւը կլորածեւէ, չուրջը սուր ատամներով: Մնոր ծաղիկներն սպիտակ կ'ըլլան, երբեմն ալ կարմիր ու դեղին: Մէկ թուփի վրայ բոլոր ծաղիկները մի և նոյն գոյնը կ'ուսենան: Մեծ վարդենիներն անթիւ գնտածեւ կոկոններ ունին:

22. ԿԱԿԱՉ

Կակաչը պարսիցի գեղեցիկ ծաղիկ մ'է, բայց հոս չունի: Սոխին արմատէն կը բուսնի այն: Սոխարմատը (կոճղէզ) հողին մէջ թեւի նման մանր ծիւրեր կ'արձակէ: Յօղունի վրայ կը բացուի զանգակի պէս ծաղիկ մը: Կակաչները դեղին, կարմիր ու գոյնզգոյն կ'ըլլան:

Համեմատեցէ՛ք կակաչը վարդին հետ:

23. ՄՈՐԻ ՆԻ ԿԱԿԱՉ

Մորի հասարակ սպիտակ ծաղիկը խոտերուն մէջէն համեստաբար կը նայէր, իսկ փռուայեղ կակաչը դուռնաբար անոր վրայ կը շարժէր իւր փայլուն գագաթը: Տասն օր անցաւ, սպիտակ ծաղիկն տեղ կը տեսնուէր մորի կարմրագոյն ախորժաճամ պտուղը, իսկ դուռն կակաչին տեղ կը տատանէր անոր թոռմած ցօղունը:

24. ԾԱՂԻԿՆԵՐՈՒ ԵՐԳԸ

Վ Ա Ր Գ

Զիս ամէնքը կը կոչեն
Ծաղիկներու թագուհի,
Որովհետեւ իմ ծաղիկս
Սիրուն գոյն ու հոտ ունի:

Թէեւ կանաչ իմ թուփը
Շատերու ձեռք կը ծակէ,
Բայց այս անմեղ յանցանքը
Ինձ ամէն մարդ կը ներէ:

Շ Ո Ւ Շ Ա Ն

Իմ սպիտակ կոկոնի
Մէջ կան բուրմունք շատ ու շատ,
Ոսկենման և փոշի՝
Մեղուններուն բազմաշխատ:

Իմ ցօղունս է խիստ բարակ
Եւ գազաթըս գեղեցիկ,
Տերեւներս ընդարձակ,
Իսկ ես ինքս խիստ հեղիկ:

Թերթերուս մէջ հիւրասէր
Թիթեռ, մեղու և մրջին
Հանգիստ կարող են գտնել
Զերթ բարեկամք իմ սիրուն:

Յ Ա Փ Ր ՈՒ Կ

Իմ թուփերըս փարթամ չ'են
Եւ ոչ ծաղիկս փառաւոր:
Բայց անոյշ հոտըս կ'առնեն
Ամէն մարդիկ հեռաւոր:

Այս պատճառաւ կրնաք դուք
Յափրուկ գտնել ամէն տեղ,
Փունջերու մէջ պարզ անշուք
Կամ պարտիզաց մէջ շքեղ:

25. ԽՆՁՈՐԵՆԻՈՅ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1. Անտառին մէջ կ'աճէր վայրի Խնձորենի մը: Այնան
անկից վայրի ինձոր մը վար ինկաւ: Թռչունները թէ՛ ինձորը
կացահարեցին և թէ՛ անոր սերմերը: սերմ մը միայն ազա-
տեցաւ անոնց կտուցէն և հողին տակ պահուրտեցաւ:

Ամբողջ ձմեռը սերմը ձիւնին տակ մնաց, իսկ գարնան՝
երբ արեգակը խոնաւ գետինը տաքցուց, սերմն սկսաւ աճիլ:
նա ծիլեր արձակեց դէպ 'ի խոր, իսկ դէպ 'ի վեր ուղարկեց
առաջին երկու թերթիկները: Թերթիկներուն մէջէն դուրս
ելաւ ցօղունը և անոր վրայ երեւցաւ առաջին տերեւներուն
փոքրիկ կոկոնը որուն մէջէն վեր բարձրացան կանաչ տե-
րեւներ: Այնուհետեւ նոր նոր կոկոններ, տերեւներ և ու-
տեր իրարու ետեւէ բուսան և հինգ տարի վերջը այն տեղ,
ուր առաջին անգամ սերմը վար ինկած էր, գեղեցիկ Խըն-
ձորենի մը կանգնեցաւ:

Այգեպանը ձեռքը բաճ մը բռնած անտառը եկաւ, Խըն-
ձորենին տեսաւ ու բաւ. «Ի՛նչ գեղեցիկ ծառ, ինձ հար-

կաւոր է այս:» Դողաց խեղճ Խնձորենին երբոր Այգեպանը սկսաւ անոր տակը փորել, և կը մտածէր թէ ինքը կորսուած էր բոլորովին: Բայց Այգեպանը զգուշութեամբ փորեց, արմատներուն քնաս չի տուաւ, հանեց զայն, իր այգին տարաւ և աղէկ տեղ մը անկեց:

2. Խնձորենին հպարտացաւ և ինքն իրեն կ'ըսէր. «Կերելի թէ հազուագիւտ ծառ մ'եմ ես որ անտառէն զիս դէպ 'ի այգին փոխադրեցին:» Այս ըսելով բարձրէն կը նայէր նա չորս կողմի ազեղ կոծղերուն վրայ որոց գլուխները լաթով փաթթուած էին. կ'երելի թէ խեղճը չ'էր գիտեր որ զինքը կ'ըսէր տարեր են:

Միւս տարին Այգեպանը եկաւ կոր դանակը ձեռքը բռնած և սկսաւ Խնձորենին կրթել: Դողաց խեղճ Խնձորենին ու կը մտածէր. «Հիմա ա'լ բոլորովին կորսուեցայ:»

Այգեպանը ծառին բոլոր կանաչ վերին մասը կտրեց և միայն բունը թողուց, զայս բաւական չի համարելով՝ բունն ալ վրայէն ձեղքեց, այդ ձեղքին մէջ անցուց քաղցրատեսիլ շառաւիղ մը զոր ուրիշ խնձորենիէ կտրած էր, բացուած վէրքը ձիւթով ծածկեց, լաթով փաթթեց, ձեղքերն մանր սեպերով լեցուց և թողուց գնաց:

3. Խնձորենին խօթացաւ, բայց նա այժմ աւելի ուժեղ էր, այդ պատճառաւ ալ շուտով առողջացաւ և միացաւ օտար ճիւղի հետ: Օտար ճիւղը ուժեղ Խնձորենուոյն հիւթը ծծեց և կը մեծնար արագ, զուարթ. բազմաթիւ նորանոր կոկոններ, տերեւներ, ոստեր և ճիւղեր իրարու ետեւէ կ'արձակուէին, այնպէս որ երեք տարի ետքը ծառը կարմրախառն և անուշահոտ ծաղիկներով զարդարուեցաւ: Մաղկանց կարմրագոյն թերթիկները թափեցան և անոնց տեղ երեւցան փոքրիկ կանաչ փոքր փոքր սաւ փոքր մեծնալով՝ աշնան խնձոր դարձան, բայց ոչ թէ վայրենի

թթու խնձորներ, այլ մեծ մեծ, կարմրագոյն, քաղցր և կակուղ: Եւ Խնձորենին այնպիսի պատուական ծառ մ'էր դարձեր որ ուրիշ այգիներէն կուգային անոր շառաւիղները տանիլ պատուաստի համար:

26. ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ

Մայրենի՛ լեզու, մայրենի՛ բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգւոյս համար.
Առաջի՛ն դու խօսք ականջիս հասած,
Դո՛ւ սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,
Մանկական լեզուիս թոթովա՛նք տըկար,
Հընչես ու հընչես դու միշտ անգագար:

Գեղեցի՛կ լեզու, հրաշալի՛ լեզու,
Այդ ի՛նչպէս քաղցր կը հընչես ինձ դու.
Կ'ուզեմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերուն, հոգւով հայանալ.
Կ'ըսես թէ սիրով ահա զիս կանչեն
Պապեր ու հայրեր խոր գերեզմանէն:

Հընչէ՛, դու հընչէ՛ այժմ և յաւիտեան,
Մայրենի՛ լեզու, բարբա՛ռ սիրական.
Արի՛, թօթափէ՛ փոշիներդ հինցած,
Ո՛ր իմ Հայ լեզու, վաղուց մնացուած.
Ըզգեցիր նոր կեանք սուրբ գրուածներով:
Որ ամենայն սիրա վառուի քո սիրով:

Ամէն տեղ փրչէ՛ Աստուծոյ շունչը,
Սուրբ է, այո՛, միւս այլ ձեւն ու ոճը,

Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
Իմ սրտիս սէրը յայտնել արժան էր,
Իմ երանական քաղցր մտածութիւն, —
Ապա կը խօսիմ ես մօրըս լեզուն:

27. ՀԱՅՈՑ ԳԻՆԻՆ

Օ՛ն, բաժակներ առնո՛ւնք, եղբա՛րք,
Լի բաժակներ անոյշ գինւով:
Լընո՛ւնք կարմիր, ճերմակ գինին,
Թո՛ղ մեզ լինի այն քաղցր համով:

Մեր շրթներուն տանի՛նք անվախ
Նեկտար է այն և ոչ գինի,
Չէ այն խառնած և կամ խարդախ
Խըմե՛նք, թո՛ղ մեզ անոյշ լինի:

Ո՛հ, այս անոյշ գինին խըմող
Սըրտէն հանէ թո՛ղ ամէն սխ.
Ամէնքնիս ալ ըսե՛նք ամէ՛ն,
Որ շատ տարի պարգեւէ էն:



28. ՈՒՐԻՇԻՆ ՀՈՐ ՓՈՐՈՂԸ ԻՆՔԸ ՄԵՋԸ ԿՒՅՆԱՅ

Ծեր մարդ մը իւր պառաւ կնոջ հետ կ'ապրէր: Պառաւը շատ չար կին մ'էր և աղջիկ մ'ունէր Նաթալի անուամբ: Նաթալիս չարութեան կողմանէ իւր մօրմէն վարչէր մնար:

Ծերը հանգարաւ և բարի բնաւորութեան տէր էր և աղջիկ մ'ունէր Մարիամ անուամբ: Մարիամ ալ խիստ հանգարաւ, աշխատասէր ու գեղեցիկ էր:

Խորթ մայրն ամենեւին չէր սիրեր զՄարիամ: Միշտ իւր ամուսնոյն կ'ըսէր. «Մարիամին հետ կենալ չեմ ուզեր: Անտառը տա՛ր զայն, հոն գետնափոր մը գտի՛ր, թո՛ղ այնտեղ մանէ, գործէ, ինչ կ'ուզէ ընէ:»

Պառաւն ա՛յնքան ըսաւ որ խեղճ մարդուն գլուխը տարաւ: Ա՛լ ուրիշ ճար չկար. Ծերը սայլակը լծեց, Մարիամը մէջը դրաւ և ճամբայ ելաւ: Անտառը գնացին և այր մը գըտան հոն: Ծերունին շատ կը ցաւէր իւր աղջկան վրայ, բայց ի՛նչ օգուտ որ տկար էր կնոջը առջեւ: Մարիամին հրահան, կայծքար և արեթ տուաւ, տոպրակ մ'ալ բրինձ և ըսաւ. «Մարիա՛մ, զաւա՛կս, կրակ վառէ՛, աւլէ՛ և դու ալ նստէ՛ ու մանէ՛, մի՛ վախնար, վաղը ես քեզ տեսութեան կուգամ:» Ծերը մնաս բարով ըսաւ իւր աղջկան և տուն դարձաւ:

Մարիամ առանձին մտալով, ամբողջ օրը մանեց, իսկ երբ մութը կոխեց, վառարանը վառեց ու կերակուր եփեց իրեն համար: Հազիւ կերակուրն սկսեց եփ գալ, մէկ մ'ալ տեսնես գետնին տակէն Մուկ մը դուրս ելաւ ու ըսաւ անոր. «Սիրո՛ւն աղջիկս, դգալ մ'ապուր տո՛ւր ինձ, կ'աղաչեմ:» Մարիամ կուշտ մը կերակրեց Մուկը, նա ալ շնորհակալ եղաւ ու գնաց:

ինքն ալ հացը կերաւ և սկսաւ դարձեալ մանեւ: Յանկարծ կէս գիշերին, Արջ մը խրճիթը մտաւ և ըսաւ Մարիամին. « Հապա՛, աղջի՛կ, կրակը մարէ՛, ե՛լ աչքկապուկ խաղա՛նք. ձեռքդ ա՛ռ այս արծաթէ զանգակը և հնչեցո՛ւր, իսկ ես կը ջանամ քեզ բռնել:»

Մարիամ սաստիկ վախցաւ և ինչ ընելիքը չէր գիտեր: Բայց այն բողբոջին Մուկը գետնին տակէն դուրս ելաւ, Մարիամին ուսերուն վրայ բարձրացաւ և ականջն ՚ի վար ըսաւ. «Մի՛ վախնար, Մարիա՛մ, կրակը մարէ՛, դու ալ դրան ետին պահուրտէ՛, իսկ զանգակն ինձ տո՛ւր:» Մարիամ ալ այնպէս ըրաւ:

Արջն իր խաղը սկսաւ, բայց ամենեւին կարող չեղաւ Մուկը բռնել. Մուկը կը վազէր և զանգակը կը հնչեցնէր, իսկ Արջը անոր ետեւէն պառոյտներ կ'ընէր: Երկար տանն այս ու այն կողմն ինկաւ նա, բարկացաւ, կատղեցաւ, բարձրաձայն գոռաց ու սկսաւ գաւազանով բոլոր անկիւններուն ու պատերուն զարնել, բոլոր ամանները կոտրտել, բայց Մկան ի՞նչ կրնար ընել: Վերջապէս Արջը հանդարտելով «Դու շատ լաւ աչքկապուկ կը խաղաս, աղջի՛կ, այդ պատճառաւ առաւօտուն քեզ խուճի մը ձի և սայլ մը հարստութիւն պիտի դրկեմ», ըսաւ ու գնաց: ✕

Միւս օրը առաւօտուն Պառաւը անասաւ զրկեց Ծերունին. «Գնա՛, ըսաւ, տես Մարիամիչ շատ մանե՞ր է:»

Ծերը գնաց, իսկ Պառաւը պատուհանին առջեւ նըստաւ և ինքնիրեն կ'ըսէր. «Ահա ծերուկս կուգայ և Մարիամին ոսկորներն ալ հետը կը բերէ:

Այսպէս ամբողջ երեք ժամ նստաւ և կ'սպասէր. յանկարծ անտառին կողմէն ջրիսկ-ջրիկոցի ձայն մը լսեց, փոքրիկ շունն ալ տախտի տակէն կը հաջեր ու կ'ըսէր. «Ահա Ծերունույն աղջիկը կուգայ, հետն ալ խուճի մը ձի կը քշէ,

սայլ մ'ալ հարստութիւն կը բերէ:» Պառաւը նանը բարկացաւ. «Մուտ կ'ըսես, անպիտան, այդ ջրիսկ-ջրիկոցը Մարիամին ոսկորներուն ձայնն է: Այս խօսքերն ըսաւ չ'ըսաւ, բակին դռները բացուեցան, ձիերը ներս լեցուեցան, իսկ Մարիամ՝ հօրը հետ սայլին վրայ նստած, անթիւ հարստութիւն կը բերէր: Պառաւը բարկութիւնէն կատղեցաւ, շըրթունքը սեւցան և զարմացած կ'ըսէր. «Այս ի՞նչ հրաշք է. վաղն ալ իմ աղջիկս պիտի տանիս անպատճառ: Նախալիսաքու Մարիամիչ չի նմանիր. նա երկու խուճի ձի կը բերէ և երկու սայլ ոսկի:»

Հետեւեալ օրը Ծերը Պառաւին աղջիկը անտառին այրը տարաւ և Մարիամին տուած բոլոր բաները անոր ալ տուաւ: Նախալիսան կրակ վառեց և ճաշ եփեց: Մուկը գետնին տակէն դուրս նայեցաւ և ըսաւ. «Սիրո՛ւն աղջիկ, ինդրեմ՛, դգալ մը կերակուր տաս, ուտեմ»: Նախալիսա սկսաւ պոռչտալ. «Կորի՛ր, կեղտո՛տ անպիտան, դեռ կերակո՞ւր ալ կ'ուզես», ըսաւ և գաւազանով խեղճ Մկան մէջքին զարկաւ: Մուկը փախաւ, իր ծակը մտաւ: Նախալիսա նըստաւ, միայնակ բոլոր կերակուրը կերաւ, պառկեցաւ ու քնացաւ:

Կէս գիշերուն Արջը այրէն ներս մտաւ և աղջկանը ըսաւ. «Ա՛յ աղջիկ, ելի՛ր աչքկապուկ խաղա՛նք. սա փոքրիկ զանգակն ա՛ռ, վազէ՛ և հնչեցո՛ւր, իսկ ես կը ջանամ քեզ բռնել:» Աղջիկը զանգակն առաւ և սկսաւ վազվզել, բայց ո՞ւր պիտի փախչէր Արջին ձեռքէն. ծրնկուրները կը ծալլուէին, ձեռքերը կը դողդողային և զանգակը ինքնիրեն կը հնչէր: Իսկ Մուկը գետնին տակէն կ'ըսէր. «Չար Նախալիսան թո՛ղ մեռնի, արժանի է:»

Միւս առաւօտուն Պառաւը մարդն աղջկանը ետեւէն ուղարկեց. «Գնա՛, ըսաւ, ձիերը և ոսկին բե՛ր»:

Ծերունին գնաց, իսկ Պառաւը դուռը նստած կը սպասէր. քիչ ժամանակ ետք անտառին կողմէն թըխկ-թըխկոցի ձայն մը լսեց. Շունը նորէն սկսաւ դրան ետեւէն հաշել. « Ահա՛ Պառաւին աղջիկը կուգայ, ա՛խ կը քաշէ, կը հառաչէ, իսկ դատարկ սայլը թըխկ-թըխկոցի ձայն կը հանէ:» Պառաւը բարկութեամբ Շունը ծեծեց և ըսաւ. « Սուտ կ'ըսես, անպիտան, արծաթին ձայնն է այն որ արկղներուն մէջ կը հնչէ:»

Վերջապէս Ծերունին մօտեցաւ և սայլը դրան առջև կեցուց: Պառաւին աղջիկը այնպէս ջարդուեր ու կոտորուեր էր որ հազիւ կրցան սայլակէն վար իջեցնել զայն: Չար Պառաւը կատղեցաւ, բայց ի՞նչ կրնար ընել:

Քիչ ատենէն ետքը Մարիամ աղէկ երիգաստորդի մը հետ պսակուեցաւ:

29. ԵՐԿՈՒ ՔՈՅՐԵՐ

Մեզմէ շատ յառաջ կար մի թագաւոր,
 Հողւով դեռ արի, գլխով ալեւոր,
 Մեծ ծով էր պատեր նորա աշխարհը,
 Ոսկի կոչեցին գիտունք այն դարը:

Ունէր նա երկու մատղահաս աղջիկ,
 Մէկը խիստ տգեղ, միւսը գեղեցիկ:

Մի օր տգեղը սասայ միւսին.

« Երթա՛նք ծովի ափ, քո՛ւրիկ, միասին:»

Սիրունը գնաց արտում առջևէն,
 Իսկ չար տրգեղը անոր ետեւէն.

Հազիւ թէ ծովուն ափն էին հասած,
 Իւր սիրուն քըրոջ գլորեց նա ցած:

Կանչեց կիսամեռ սիրունը ծովէն.

« Քո՛ւրիկ, ի՛մ քուրիկ, փրկէ՛ զիս մահէն.

Ես ունիմ տունը գեղեցիկ մանեակ,

Ա՛ռ, այն քեղ լինի՛, պարգեւէ՛ ինձ կեանք:

— Չայն առանց քեղ ալ կարող եմ ստանալ,
 Ինձմէ փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ:

— Քոյրի՛կ, թէ այդ ալ քեղ չ'է բաւական,
 Կըտամ քեղ ոսկի պսակ պատուական:

— Չայն առանց քեղ ալ կրնամ ստանալ,
 Ինձմէ փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ:

— Քոյրի՛կ, մի՛ թողուր դու զիս անտերունջ,
 Քեղ սիրուն փեսաս կըտամ անտրտունջ: »

Տրգեղի սիրտը դարձեր էր լեռ քար,
 Քըրոջ խնդիրքն թողուց անկատար:

Չըկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
 Իրոնեց մարմինը սիրուն աղջրկան,
 Չըրէն դուրս հանեց, դրաւ ափի մօտ,
 Շատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ:

Մի «չ»-ը անցաւ, աղջիկը տեսաւ,
 Լացաւ ու առաւ, ուսին վրայ դըրաւ:
 Տարաւ իւր տունը այդ անդին գիւտը,
 Չորացուց նորա մարմնոյ դիփ հիւթը:

Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկրերէն,
 Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերէն:
 Երբոր ամէն բան պատրաստեց կարգին,
 Գրնաց Արքունիքն տաւիղն 'ի ձեռին:

Երբ մտաւ դահլիճ շքեղ զարդարած,
 Տեսաւ տըգեղը փեսի մօտ կանգնած,
 Բայցաւ բերանը, լարերը խփեց,
 Հիւրերու առաջ քաղցրաձայն երգեց:

« Հնչէ՛ , ի՛մ տաւիղ , հրնչէ՛ համարձակ ,
 « Հարազատ քոյրս խըլեց իմ փեսան .
 « Լըսէ՛ , ժողովո՛ւրդ , լըսէ՛ անխըռով ,
 « Հարազատ քոյրըս գըլորեց զիս ծով : »

Միւս օրը դահլիճը խարոյկ շինեցին ,
 Մահապարտ քոյրը մէջը գըլորեցին .
 Հուրը պըլպըլաց , աղջիկը կանչեց .
 « Իմ մեղաց համար Աստուած զիս պատժեց : »




ՇՐՋԱՆ ԵՐՐՈՐԻ



1. ՇՈՒՆ

« Կարգա՛ տեսնեմ , սիրո՛ւն շնիկս , թէ ի՞նչ գրուած է
 գրքիս մէջ » , - ըսաւ Հայկանուշ իւր փոքրիկ շան : Սա գըր-
 քին մօտեցաւ , հոտոտեց ու հեռացաւ . « Ինձ է մնացեր
 գիրք կարդալ , ըսաւ նա . ես տունը կը պահպանեմ , գիշեր-
 ները չեմ քնանար ու միշտ կը հաջեմ , գայլերը կը վախցը-
 նեմ , որսի կ'երթամ , նապաստակ կը բռնեմ , բադեր կը
 գտնեմ . ինձ համար այսքանն ալ բաւական է : »



2. ՈՐՍՈՐԳՈՒԹԻՒՆ

Իմ հօրեղբայրս ունի հրացան, որսի պարկ և շատ մը որսի շուներ: Մօտ օրերս հօրեղբայրս հրացանն առաւ ու ըսաւ ինձ. « Հետս եկո՛ւր, որսի երթա՛նք: Աղուէսը դարձեալ մեր հաւնոցէն երկու հաւ գողցեր է, զայն սպաննել կ'ուզեմ:» Գնացինք և հետերնիս առինք երկու քերձէ և մէկ որսորդ շուն: Քերձէները շուտով գաղանին հետքը գտան ու մտան անտառի մէջ: Զիրենք չ'էինք տեսներ, բայց միմիայն անոնց հաջելու ձայնը կը լսէինք:

« Նստի՛նք սա թփին տակ, ըսաւ հօրեղբայրս. իմ խելացի քերձէներս հիմայ աղուէսը դէպ'ի մեր կողմը կը հալածեն»:

Նստանք և սպասեցինք: Շուները շատ հեռուէն կը հաջէին: Ես կը կարծէի թէ անոնք ա՛լ ետ չ'պիտի դառնային: Բայց անա հաջելու ձայներնին քիչ քիչ մօտեցաւ...: Յանկարծ թփերուն տակէն դուրս ցատկեց նապաստակ մը, շիկագոյն աղուէս մ'ալ անոր ետեւէն: Հօրեղբայրս հրացանը պարպեց և աղուէսը զարնուեցաւ, իսկ նապաստակը վախ-

ցաւ, ականջները մէջքին կպցուց, գետնին փակաւ և տեղէն չի շարժեցաւ: Ողջ ողջ բռնեցինք և տուն տարինք զայն: Հիմայ կաղամբով կը կերակրեմ զինքը:



3. ԿԱՏՈՒ

Փսի՛կ, փսի՛կ, դու չար փոքրիկ, շատ սիրուն ես ու խորամանկ, մետաքսապատ թաթեր ունիս, սուր եղունգով մատներ ունիս: Ականջներդ շուտ կը լսեն, խոշոր աչքերդ մութին մէջ կը փայլին, պերեւշտներդ ոլորած, խեղճ մրկներուն մահ կը նիւթես:

Երբ ընկերդ տեսնես, պոչդ այս ու այն կողմը կը դարձնես, մէջքդ կը ծալես, կը ծռիս, աչքերդ գոց կը մլաւես, բայց թէ յանկարծ խեղճ մկնիկ մը անկիւնէ մը դուրս ելնէ, պողպատէ թաթիկներովդ գլխուն կ'իջնաս կ'սպաննես:

4. ԵՐԿՈՒ ՄԿՆԵՐ

Փօքրիկ մուկը մեծին ըսաւ. — « Ո՛րքան չար ու ժլատ է

մեր տանուաէրը, սունը կատուներով լեցուցեր է. այս ալ բաւական չէ, չորս կողմ ակնասներ կը դնէ և զ՝մեզ ջնջել կ'ուզէ ամէն կերպով: Միթէ մենք շատ բանի պէտք ունի՞նք. կտոր մը ճարպ, քիչ մը հացի փշրանք և քանի մը հատիկներ բաւական են ինձ:

— Ճշմարիտ է, պատասխանեց մեծ մուկը. մեզ ամէն մէկերնուս քիչ բան հարկաւոր է, բայց մենք ալ քիչւոր չ'ենք:»

5. Մ Կ Ն Ե Ր

Մեծ ու պզտիկ մկներն իրենց բոյնի առջևը հաւաքուեցան: Անոնց աչքերը սև են, թաթերը փոքրիկ, ատամները սուր, ականջները ցցուած, իսկ պոչերնին երկար ու կախուած:

Հաւաքուեցան, խորհուրդ բրին - մտածեցին թէ ի՞նչ պէս ընեն որ չոր հացի կտորը բոյնը տանին:

Օ՛, զգուշացէ՛ք, ընկերներ՛ր, ձեր բարեկամ կատուն ձեզմէ հեռու չ'է. նա շատ կը սիրէ զ՝ձեզ, միշտ կ'ուզէ իւր փոքրիկ թաթիկները ձեր մէջքին զարնել, պոչերնէդ բռնել, մորթերնիդ քաշել:

Ի՞նչու մուկը շարունակ կը կրծէ: Անկէց գաս ի՞նչ կենդանիներ գիտէ: Մուկը սկիւտին հետ համեմատեցէ՛ք, սկիւտն ալ նապաստակին հետ:

6. Մ Կ Ա Ն Հ Ա Մ Ա Ր Կ Ա Տ Ո Ւ Ն Ա Լ Գ Ա Ջ Ա Ն Է

Մկնիկը մկան քով վազեց և ըսաւ անոր. « Բարեկա՛մ, բարի լուր կայ, լսեցի՞ր. կ'ըսեն թէ կատուն առիւծին ճանկըն է ինկեր. փա՛ռք Աստուծոյ, այսուհետև ա՛լ հանգիստ պիտի ապրինք:»

Մեծ մուկը պատասխանեց. « Այդչափ մի՛ ուրախանար, աչքի լոյս և պարապ յոյսեր պէտք չ'են. թէ որ գործը կրուի հասաւ, հաւատա՛ որ առիւծը ողջ չի մնար. կատուէն գորաւոր դազան չի կայ:»



7. Գ Ա Յ Լ Ե Ւ Կ Ա Տ Ո Ւ


Գայլն անտառէն գիւղը փախաւ, ոչ թէ հիւր ըլլալու, այլ իւր գլուխն ազատելու համար. ամբողջ մարմնով կը դողար, վասն զի որսորդներն իրենց շներով ետևէն ինկած կը հալածէին զինքը: Առաջին հանգպած դռնէն ներս պիտի մտնէր նա ուրախութեամբ, բայց ցաւալին այն էր որ բոլոր դռները գոցուած էին: Գայլը կատուն տեսաւ և կ'աղաչէր՝

«Փսի՛կ, իմ բարեկա՛մս, այս գիւղացիներէն ո՞րն այնքան բարի է որ զիս հիւր ընդունի և չար ոտիներուս ձեռքէն ազատէ: Կը լսե՞ս շուններուն հաջիւնը և փողերուն ձայնը, բոլորն ալ իմ ետեւէս ինկած են: — Շուտով Ստեփանին աղաչէ՛, ըսաւ Կատուն, նա խիստ բարի մարդ մ'է: — Այդպէս է, բայց ես անոր ոչխարն յափշտակած եմ ատենսօք: — Ուրեմն փորձէ՛ Կարապետէն օգնութիւն գտնել: — Կը վախնամ որ նա ալ բարկացած չ'ըլլայ ինձ դէմ, վասն զի անոր ալ այժը գողցայ: — Այն ատեն Մարկոսին քով վազէ՛: — Չէ՛, չ'եմ կրնար, նա դեռ այս դարնան բարկացած էր ինձ. անոնց հորթը լափեցի: — Այդ աղէկ բան չէ, բայց ապահով եմ որ Կիրակոս զ'քեզ պիտի պաշտպանէ: — Ա՛հ, Կատո՛ւ եղբայր, անոր ալ գառնուկը կերայ: — Ուրեմն, Գա՛յլ, բոլոր գիւղացւոց ֆեսաս հասուցեր ես դու, ըսաւ Կատուն. ալ ի՞նչ պաշտպանութիւն կը փնտռես այս տեղ: Չէ՛, աղէկ միաքդ դէ՛ր որ մեր գիւղացիք այդքան յիմար չ'են որ իրենց ֆեսասկար թշնամին պահեն, պաշտպանեն: Եւ իրաւունք ունին, մեղաւորը դուն ես. ի՛նչ որ ցանեցիր, նոյնը կը հնձես:»

8. ԴԵՂՁՍՆԻԿՆ ՈՒ ՍՈՆԱԿ


Տան մը պատուհանէն կախուած վանդակին մէջ կ'երգէին դեղձանիկը և սոխակը: Սոխակը երգելու սկսած ատեն տան պզտիկ աղան հօրը առջև կը վազէր, միշտ թըռչունը ցոյց կուտար և կ'ըսէր թէ գեղեցիկ երգողը այս է: Հայրը երկու թռչունն ալ վար առաւ և որդւոյն տալով ըսաւ. «Հիմա իմացի՛ր տեսնեմ ասոնց ո՞րն է լաւ երգողը:»

— Մանուկն իսկոյն դեղձանիկը ցոյց տուաւ. «Ահա այս է լաւ երգողը, հայրի՛կ», ըսաւ:



9. Թ Ռ Չ Ն Ա Կ

Երէկ բացի ես դունակը այն բանտի Որուն մէջը խեղճ թռչնակն էր բանտարկուած. ԲՏԻ նմա ազատութիւն ցանկալի, Եւ դաշտերուն՝ իրենց երգիչ կորուսած: Թռաւ-անցաւ նա նուրբ օդը ճեղքելով, Պայծառ օրուան թարմութիւնը զգալով. Թռա՛ւ, անցա՛ւ ազատ օդը շնչելով. Եւ ինձ համար մեղմիկ մեղմիկ երգելով:



10. Չ Ի

Չին խելացի կենդանի է: Մարդս անկից ո՛րքան օգուտ կը քաղէ: Դուք ամէն տեղ կը տեսնէք զինքը, դաշտին մէջ՝ երբ արօրը կը քաշէ, ճամբուն վրայ՝ երբ կը ջանայ որ դառի վերէն հանէ բեռցած սայլը, ախոռին մէջ՝ երբ ախորժակով գարի կ'ուտէ, արօտավայրը՝ երբ ազատօրէն կ'արածի ջուրին մէջ: Բարի, չարքաչ ու գեղեցիկ կենդանի է նա: Յետոյ մտածեցէ՛ք թէ ի՞նչ մասնաւոր յատկութիւններ կը նշմարուին անոր վրայ: Դուրսը երկայն է՝ բայց գեղեցիկ, դնչի ծայրը դուրս ցցուած է, ականջները մանր են և դէպ ՚ի վեր կը նային. երբ ձին օտար ձայն մը լսէ կամ իւր տիրոջ ոտնաձայնը ճանչնայ, այդ ականջները կը շարժին, վեր կը ցրցուին: Ականջներուն մէջ տեղը, ճակատին վրայ, մազէ փունջ մը կայ. իսկ իւր գեղեցիկ և խոշոր աչքերը ո՛րքան իմացականութիւն կ'արտայայտեն: Ուշադրութեամբ դիտեցէ՛ք անոր ակուայներն ալ. առջևի կողմը թիականման կողմէն ունի, որոնք վեց վեց են իւրաքաչիւր կզակի վրայ. անոնցմով կը կրծէ, կը կտրէ խօտը. իսկ ետևի կողմն ունի վեց վեց հատ ակուայներ վերևէն ու ներքևէն. ասոնք ձիուն Սե-

զնադաններն են որք այնպէ՛ս լայն են ու խորտուբորդ որ կարծես թէ ազօրիք են. ասոնցմով է որ ձին կ'աղայ, կը մանրէ խօտը, դարմանը, գարին, որպէս զի յետոյ ստամոքսը դըժուարութիւն չ'կրէ զանոնք մարսելու համար:

Չիուն պարանոցը կոր է սագի պարանոցին նման. պարանոցին վրան երկայն բաշ ունի, կուրծքը լայն է ու դուրս ցցուած, իսկ ամբողջ մարմինը կլորակ և երկարաձև. մէջքին նստելու տեղը տափակ է: Եւ ի՞նչպիսի վսեմ, գեղեցկատեսիլ ձիեր կան, որոնք կ'արշաւեն այնպիսի թեթևութեամբ որ շատ անգամ չ'ես իմանար թէ ի՞նչպէս իրենց բարակ ու երկայն ոտքերովը քայլ կառնուն: Չիուն ետևի ոտքերն աւելի ուժեղ են, շատ անգամ անոնցմով աքացի զարկած ատեն՝ մարդ գետին կը փռէ: Գայլերն ալ կը վախնան ձիուն այդ հարուածէն: Չին ոտքին վրայ սմբակ ունի, ճիշդ մեր եղունգին նման, այնպէս որ եթէ ծայրէն կտրես՝ ամենևին ցաւ չ'զգար: Իւրաքանչիւր ոտքին վրայ մէկ եղունգ ունի նա, որ ըսել է թէ մասն ալ մէկ հատ է: Չին քալելու ժամանակ իւր մատի եղունգը՝ այսինքն սմբակը գետինը կը կպցնէ: Աւելորդ է յիշել ձիուն գեղեցեկ, երկայնամազ պոչը որով շատ կը տարբերի նա միւս միասմբակ անասուններէն:

11. Տ Ե Ո Ի Ր Չ Ի


— « Ի՞նչ կը խրխնջես, ի՛մ ձի եռանդուն, ինչո՞ւ ես այդպէս գլուխըդ կախեր, ինչո՞ւ, ըսէ՛ ինձ, չես շարժեր բաշըդ Ու չես կրծեր քո սակեփայլ սանձեր:

Միթէ ես քեզ չ'եմ պատուեր ու յարգեր
 եւ կամ տար քեզի միշտ դարի առատ .
 Քո սարք միթէ չ'ե՞ն փայլուն շողջողուն ,
 կապրդ ու փորքաշք չ'ե՞ն մետաքսապատ :
 երկզոյդ պայտերդ չ'ե՞ն արծաթաջրած ,
 եւ ասպանդակներդ ոսկիով պատած » :
 Տխուր ձին ինծի պատասխան տուաւ .
 « Ես անոր համար տրտում եմ այսչափ
 « Ձի որոտմունքի ձայնն ինծի հասաւ :
 « Ահա՛ փողերու թինգ ու դղրդիւն ,
 « Ձաշխարհ կը լեցնէ նետերու ճայթիւն .
 « Ես կը խրխնչեմ մորմոքիչ ձայնով ,
 « Պատճա՛ռ զի կ'զգամ թէ հովիտն 'ի վեր
 « Չպիտի վազվզեմ և ապրիմ պատուով ,
 « Չըպիտի կրեմ ա՛լ փայլուն զարդեր :
 « Անգութ թշնամին , գիտեմ ես ըստոյգ ,
 « Իմ որջ սարքերս պիտի կողոպտէ
 « Եւ իմ արծաթեայ պայտերս երկզոյդ
 « Թեթև ոսներէս նա պիտի քակէ : »



12. ԱՂ ԵՒ ՍՊՈՒՆԳ

Էշ մը , վրան աղ բեռցուած , առուակի մը մօտ եկաւ և
 կ'ուզէր միւս կողմն անցնիլ , բայց յանկարծ ոտքը սահելով
 ջուրն ինկաւ : Երբ առուէն դուրս ելաւ , սաստիկ զարմացաւ
 զգալով որ իւր բեռը թեթեւցեր էր . « Այս ի՛նչ աղուոր
 բան , ըսաւ , ջրին մէջ թէ՛ ես զովացայ և թէ՛ բեռս թե-
 թեւցաւ : Այս բանս չ'պիտի մոռնամ : » - Քանի մը օր ետքը
 դիպուածը բերաւ որ մեր իշուկը նոյն ջրին քովէն կ'անցնէր
 դարձեալ , բայց այս անգամ սպունգ բեռցուցած էին վը-
 րան : Առուակին մէջտեղը հասնելուն պէս , էշը ջրին մէջ
 պառկեցաւ անշարժ , որպէս զի բեռը թեթեւցնէ , բայց
 հակառակը եղաւ : Շատ չարչարուեցաւ խեղճը , բայց ոտքի
 ելնելն անկարելի եղաւ և խեղդուեցաւ :



13. Կ Ո Վ

Գոմը մտնե՛նք, տեսնե՛նք թէ տանտիկիները ի՞նչպէս կաթ կը կթեն: Այդ թարմ և փրփրուն կաթէն՝ կթելուն պէս խմե՛նք: Բայց միայն խմելը բաւական չ'է, պէտք է բան մ'ալ սորվինք: Ուշագրութիւն ընենք մեր կովին թէ ի՞նչպէս մարմին ունի, ի՞նչ բանով կը զանազանուի նա ձիէն: Սա ձիէն քիչ մը ցած է, բայց հաստ մէջքն ալ, տե՛ս, ի՛նչպէս ցցուած է. բոլոր ոսկորները դուրս ցցուած են, իսկ կողերը ուռած են. կովուն գլուխը այնչափ գեղեցիկ չ'է, գունչը բութ է. պարանոցը բարակ, իսկ կուրծքին վրայ աւելամիս ունի կախուած: Ետեւի ոտքերուն մէջ տեղը մեծ կուրծք մ'ունի ուր առատ կաթ կը պատրաստէ:

Կովուն ոտքերը հաստ են և ձիուն ոտքերէն կարճ, անոնց վրայ ո՛չ թէ մէկ-մէկ, այլ երկ-երկու եղունգներ (կրճղակներ) կան: Պոչը չուանի պէս կախուած է և միայն ծայրը մազէ փունջ մ'ունի:

Նշանակութեան արժանի է որ կովը ձիուն չափ գեղեցիկ չէ, նա վաղել չի սիրէր, վրան նստին ալ յարմար չ'է: Այսու ամենայիւ եզները կը գործածուին բեռ կրելու համար, որովհետև անոնք ուժեղ են ու համբերատար:

Ահա կովը երեսը դէպ 'ի մեզ դարձուց և քաղցրաբար կը նայի, բայց իւր աչքերը չ'ունին այն իմացականութիւնը զոր կ'արտայայտեն ձիուն աչքերը: Պարանոցն ալ կարճ է և եռանդոտ ձիուն նման չի կրնար վերցնել նա իւր լայն գունչը: Կովը ճակատին վրայ երկու մանդաղաձև կոտոշներ ունի, որոնք ոսկորէն կակուղ են. ականջներն աւելի մեծ են և դէպ 'ի մէկ կողմ ուղղուած: Կովն ալ, ձիուն պէս, բերնին մէջ կտրողներ (առաջնատամներ) և սեղանատամներ ունի, բայց անոր կտրողներն ութ հատ են ևստորին կզակին վրայ դասաւորուած, իսկ վերին կզակին վրայ ակռայներու տեղ միայն հաստ կաշի կայ: Սեղանատամները թէ՛ թուով և թէ՛ տեսակով ձիուն սեղանատամներուն նման են: Չիերուն ըստորին կզակը միայն դէպ 'ի վեր և դէպ 'ի վար կրնայ շարժիլ, իսկ կովերուն ասկից զատ աջ ու ձախ կողմն ալ կը շարժի և այս կերպով խոտը մանրելու դիւրութիւն կուտայ: Իսկ ի՞նչու համար կովուն «բռն» կենդանոց անուն կուտան: Գուք անշուշտ դիտած էք որ երբ հանգիստ նստի նա, մինչև անգամ քնացած ժամանակը, շարունակ կը ծամէ-կ'որոծայ: Խոտը, զոր փոքր ինչ ծամելով կը կլլէ, նախ առաջին երկու ստամոքսին մէջ կը կը մտնէ, իսկ յետոյ գունտ գունտ յետս կուտայ դէպ 'ի բերանը և կ'սկսի լաւ մը ծամել ու մանրել. լաւ ծամելէն ետքը, կերակուրը կը զրկէ միւս երկու փոքր բաժանմանց մէջ: Լաւ նշանակեցէ՛ք որ կովին համար ուտելն ըստ ինքեան մեծ գործ մ'է. այդ պատճառաւ է որ նա ուրիշ շատ բան չի գործեր ձիուն նման:

14. ԿՈՐՍՈՒԱԾ ՀՈՐԹ

Ձիւնը կուգար փաթիլ-փաթիլ,
Հեան ալ անձրև կաթիլ-կաթիլ.
Այդ միջոցին մի պառաւ կին
Հորթ մը փնտռէր դաշտի միջին:

Կովըն եկաւ երբ արօտէն՝
Կուրծքն ու ծիծեր լեցուն կաթէն,
« Հորթուկս ո՞ւր է », նա բառաչեց,
Խեղճ պառաւին ցաւ պատճառեց:

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
Կ'արտառուէին լաց ու կոծով,
Յանկարծ լսուեց մի բարակ ձայն,
Կովը իմացաւ որ հորթն է այն:

Քովը վազեց բառաչելով,
Պառաւն ետեէն տըքալով.
Կորսուած հորթը մայրը գտաւ,
Լիք ծիծերը բերանն առաւ:

Ծծեց բոլոր կաթն ու հատցուց,
Տանտիկնոջը բան չը թողուց.
Բայց պառաւը այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին:

15. ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒ ՎԷՃԸ

Կովը, Ձին և Շունը կը վիճարանէին իրարու հետ թէ
տանուտէրը իրեցմէ զո՞վ աւելի կը սիրէր:

— « Ի հարկէ նա զիս ամենէդ աւելի կը սիրէ, ըսաւ Ձին.
Ես անոր արօրը և ցաքանը կը քաշեմ, անտառներէն անոր
համար փայտ կը բերեմ. շատ անգամ վրաս կը հեծնայ և
քաղաք կերթայ: Առանց ինձի բոլորովին կորսուած է նա:

— Ո՛չ, մեր տէրը զիս աւելի կը սիրէ, ըսաւ Կովը. քու
ըրածդ ի՞նչ է որ մեծ մեծ կը ջարդես. ատոնց մեծ մասը
իմ եղբայրս եզն ալ կրնայ ընել. իսկ ես անոր բոլոր ընտա-
նիքը կաթով կը կերակրեմ:

— Դուք երկուքդ ալ կը սխալիք, սոնաց Շունը. մեր
տէրը զիս ամենէդ աւելի կը սիրէ, որովհետև անոր բոլոր
հարստութիւնը ես կը պահպանեմ: »

Կենդանեաց Տէրը այս վէճը լսեց ու ըսաւ անոնց. —
« Ի զուր մի՛ վիճիք իրարու հետ: Դուք ամէնքդ ալ ինձ
հարկաւոր էք և ձեզմէ ամէն մէկը լաւ է իր տեղը: »

Մարդոց ի՞նչ օգուտ ունին ձին, կովը, շունը եւ կատուն:





16. ԱՅԾ

Մազոտ երկարամորուս այծը հպարտ հպարտ կը շըր-
ջագայէր. կոտոշները և մօրուքը կը շարժէր, տոտիկներով
գետինը կը զարնէր, կը պտըտէր ու կը մկթար, փոքր ուլե-
րն իր մօտ կանչելով: Իսկ ուլերն անոր ձայնը չէին լսեր,
պարտէզը մտած էին՝ կանաչ խոտ կ'ուտէին, արմատները
կը կրժէին, մատաղ ստերը կը խլէին, յետոյ ետ կը դառնա-
յին կոտոշ կոտոշի զարնելով և իրարու հետ կռուելով:

«Սպասեցէ՛ք, ահա պարտիզին տէրը կուգայ, ամէնք-
նիդ ալ կարգի կը դնէ:»

Համեմատեցէ՛ք այծը ռան ու կովին հետ:

17. ԱՂՈՒԷՍ ՈՒ ԱՅԾ

Աղուէսը գլուխը բարձրացուցած՝ ազուաւին կը նայէր
ու կը վազէր և վազած միջոցին յանկարծ ջրհորին մէջ դը-

լորեցաւ: Ջրհորին մէջ այնքան ջուր չի կար որ խեղդուէր
նա, բայց այնքան ալ խորունկ էր որ դուրս ելնելն անկա-
րելի էր: Աղուէսը նստած իր սև բաղդը կուլար: Յանկարծ
տեսնես մեր խելօք Այծը մօրուքը շարժելով այն տեղէն
կ'ացնի: Բան գործ չունէր, ի՞նչ ընէ, ջրհորին մօտեցաւ,
ներս նայեցաւ, Աղուէսը տեսաւ ու հարցուց.

— «Աղուէ՛ս ընկեր, այդ տեղ ի՞նչ կ'ընես:

— Կը հանգստանամ, սիրելի՛ս, պատասխանեց Աղուէ-
սը. վերը շատ տաք է, անոր համար վար իջայ որ քիչ մը
զովանամ: Բայց եթէ գիտնայիր թէ այս տեղ ի՞նչպէս զով
է և ջուրն ալ որչա՛փ պաղ:»

Այծը շատ ծարաւած էր. «խմելու ջուր է», հարցուց
Աղուէսին:


— «Հիանալի՛ ջուր, հրամմէ՛, պատասխանեց Աղուէսը.
մաքո՛ւր ու լաւ: Նե՛րս մտիր, եթէ կուզես, հոս երկուք-
նուս ալ տեղ կայ:»

Յիմար Այծը ջրհորին մէջ նետուցաւ և քիչ մնաց Աղ-
ուէսը կտոր կտոր պիտի ընէր:

«Է՛հ, յի՛մար կենդանի, ցատկելդ անգամ շնորհքով չ'է,
բոլոր ջուրը ազատեցիր:»

Այս ըսաւ Աղուէսն ու մէկէն Այծին մէջքին վրայ ե-
լաւ, մէջքէն կոտոշներուն վրայ և անկէց ալ ցատկեց ջըր-
հորէն դուրս:

Քիչ մնաց որ խեղճ Այծը ջրհորին մէջ անօթութենէ
պիտի սատկէր. շատ վնասուելէ ետքը հազիւ զինքը գտան
և կոտոշներէն չուան կապելով դուրս հանեցին:



18. ՈՉԽԱՐ

Կ'ըսեն թէ ոչխարը յիմար է. ես ալ կարծեմ որ ճշմարիտ է այդ: Հրդեհի ժամանակ ոչխարներն իրենք իրենց կ'իյնան կրակին մէջ, իոկ երբոր գայլը տեսնեն, փայտի պէս տեղերնին կը կենան և յիմարաբար կճղակներով գետինը կը զարնեն: Բայց մեզ ի՞նչ փոյթ ոչխարին խելքը. մեզ հարկաւոր եղած բանն է անոր բուրդը՝ գուլպա շինելու համար, ճարպը՝ օճառի և ճրագի համար, կաշին՝ կօշիկներու և մուճակներու համար, իսկ միսը՝ խորովելու համար:

Համեմատեցէ՛ք ոչխարը այծին հետ:


19. ԸՆՏԱՆԻ ԵՒ ՎԱՅՐԵՆԻ ԵԶՆԵՐ. — ՈՐՈՃՈՂ ԿԵՆԴԱՆԻՔ

Մեր ընտանի կոյն ու եզր ամենահանգարտ և խոնարհ կենդանիներ են, բայց վայրենի ցուլէն աւելի կատաղի գազան քիչ կայ: Երբ զայրանայ, բանէ մը չի վախնար նա. կըճղակներով գետինը կը փորէ, գլուխը կը ծռէ և ուղղակի

գլխացինին վրայ կը յարձակի. այն ժամանակ աշխատէ՛ շուտով ծառը ելնել, եթէ ոչ մէկ վայրկենին մէջ եղջիւրներով վեր կը նետէ զճեղ և յետոյ ոտքերուն տակ կը տրորէ: Ամենէն աւելի չի սիրած բանը փայլուն գոյներն են և այդ գոյները տեսնելուն պէս իսկոյն կը յարձակի: Չայն սպաննելն ալ դիւրին չէ. եթէ ուղղակի ըղեղն չի հարուածեցիր, շատ դժուարաւ կը մեռնի: Բայց այս կենդանւոյն օգուտը այնքան մեծ է որ մարդիկ շատ հին ժամանակէ ՚ի վեր զայն ընտանեցուցած են: Եզն, ինչպէս նաև վայրենի ձին, ընտանեցնելը շատ դժուար չէ: Չուաններով անոնց ոտները և կոտոշները փաթթելով կը բռնեն, վզին լուծ կը դնեն և նա ալամայ կը խոնարհի: Աշխատութեան ալ այսպէս կ'ընտելացնեն. սայլի կը լծեն զայն և եթէ գետինը տափարակ է, կը թողուն որ ազատօրէն վազէ: Տղան որ սայլին վրայ նըստած է, խորազանով կը հարուածէ, կը քշէ մինչև որ յոգնի: Ասիոյ մէջ գիւղացիք շատ եզներ, կովեր և ոչխարներ կը պահեն: Անոնց հարստութիւնը անոնցմէ կը բաղկանայ: Գիւղացին եզով իւր վարուցանը կ'ընէ, եզով իւր արտերուն բերքը դէպ ՚ի կալ կը կրէ և շատ անգամ ալ եզին միջոցաւ կալ կ'ընէ: Եզան ու կովու ամբողջ նախիրները մտաւոր քաղաքները կը տանին վաճառելու: Անոնց մտով մարդիկ կը կերակրուին, կաշիէն այլ և այլ բաներ կը շինեն, եղջիւրները, ատտիկները և ոսկորները պարապ չեն նետեր: Մեծ ոսկորներէն գանակի կոթեր կը շինեն, մանրերը կ'այրեն և անոնց մրուրէն սեւ ներկ և կոշկաներկ կը պատրաստեն, կճղակներէն սոսինձ կ'եփեն: Աս ալ յայտնի է ձեզ որ ամբողջ աշխարհ անոնց կաթով կը կերակրուի: Կաթը առողջարար կերակուր է, կաթով պատրաստուած պանիրն ալ ոչ նուազ առողջարար է. պանիրը սա յատկութիւնն ունի որ կարելի է զայն հարկաւոր ժամանակի համար պահել, շատ

անգամ ալ ճամբորդութեան ժամանակ հետ տանիլ: Եթէ կարենային զայն լաւ և աժան պատրաստել, մեծ բարեբաղդութիւն կ'ըլլար այս բանն խեղճ մարդուն համար, որովհետեւ հացը և պանիրը մասամբ մը մսին տեղ կրնան գործածուիլ:

Որոճողաց կարգին կը պատկանին, բաց 'ի կովէն ու եզէն, եղջերուն, այծեամբ, այծը և սչխարը: Հիւսիսային կողմերը, ուր սառած ճահիճներու մէջ մամուռէ զատ ուրիշ



20. ԵՂՋԵՐՈՒՆ

բան չը բուսնիր, մարդիկ շատ բարիք կ'ընդունին հիւսիսային եզերուներէն. առանց անոնց այն տեղի բնակիչները չ'էին կրնար ապրիլ: Հիւսիսային եղջերուն նման է մեր երկրի եղջերուն: Իր սնունդն է մամուռը, զոր կճղակներովը կը հանէ ձեան տակէն: Անոր կճղակները լայն են և դիւրաւ չ'են մտներ ձեան մէջ: Այս կենդանին բալխիրներու կը լծեն, սերի նման թանձր կաթը և միսը կ'ուտեն, կաշիէն հագուստ կը կարեն, ոսկորներէն և եղջիւրներէն նետեր, պատառա-

քաղներ և ասեղներ կը շինեն, շէրը թելի տեղ կը գործածեն:


Այծերն ու ոչխարները բուրդ և մազ կուտան հագուստի և կաշիէ ոտնամաններու համար: Ոչխարի մորթէն հասարակ մուշտակներ կը կարեն, անոր կաթը կ'ուտեն: Այծին կաթը թոյլ կուրծք ունեցողներուն օգտակար է, բայց միան այնքան համեղ չ'է: Ոչխարին միսը շատ համեղ է և դիւրամարս: Այսպէս ուրեմն, հարկ է այս օգտակար կենդանիները պահել գիտնալ: Տաք և լուսաւոր դոմերու մէջ պահէ', շատ խոնաւ տեղեր մի' արածեր զանոնք և ոչխարները չ'են հիւանդանար:

Այս յոդուածը հասուածներու բաժնեցէ' Է կարգաւ պատմեցէ' Բ:

21. ԳԱՌԸ ԳԱՅԼԻ ՄՈՐԹՈՎ

Մի օր Գառը, ո՞ր հով փչեց,
Խեղճովն արդեօք ի՞նչ երազեց,
Վրան մորթ մը առաւ գայլի,
Գնաց մտաւ մէջ իւր հօտի.
Բայց երբ զինքը տեսան շըներ
Ըսին. «Լեռնէն գայլ է եկեր:»
Յարձակեցան ամէն դիաց,
Յօշօտելուն բան չի մնաց:
Խեղճին բաղդէն քանի մ'հովիւ
Գաւազանով մեծ աշխուժիւ
Հասան այն տեղ և զինք՝ կատաճ
Ազատեցին բերանէն շանց:

Արիւնաթաթախ և անդդայ
Սողոսկելով գեանին վրայ,
Հազիւ Գառնուկն իր գոմն հասաւ
եւ հրաշքով աղատեցաւ :



22. ԽՈՋ

Մեր խոզը շատ աղտեղի է, աղտեղի և շատակեր: Ամէն
բան կ'ուտէ, ամէն բան կը ջարդէ, տիղմերու մէջ կը թա-
ւալի, և իբրև թէ պարզ ջուրի մէջ ըլլար, մեծ յօժարու-
թեամբ ճահիճներու մէջ կը նետուի, և յետոյ կը խռխուայ
և ետ քաշուիլ չ'ուզեր:

Խոզին կնճիթը գեղեցիկ չ'է - բութ է, քիթը գեանին
կը հասնի, բերանը ականջներուն. իսկ ականջները ազտոտ
լաթի պէս կը տատանին: Իւրաքանչիւր ոտքին վրայ չորս
կճղակ ունի նա, բայց քալած ժամանակը կը սահի: Պոչը ո-
լոր է, ողնաշարը գուրս ցցուած և վրան ալ կոշտ մազեր
բուսած են: Խոզը երեքի չափ կ'ուտէ, հինգի չափ կը գեր-
նայ, տէրերն ալ զինքը լաւ կը պահեն. բայց եթէ պա-
տահմամբ բանջարանոցը մտնէ, տեսնես ինչպէս գաւազան-
ներով գուրս կը վաննն զինքը:


Համեմատեցէ՛ք ոչխարը խոզին հետ:

23. ԽՈՋԸ ԿԱՂՆԻ ԾԱՌԻՆ ՏԱԿ

Խոզը հաստատուն կաղնւոյն տակ կեցած, գլուխը կախ
կաղին կ'ուտէր. մինչև կոկորդը կերաւ, լեցուեցաւ, յետոյ
ծառին տակ հանդարտօրէն քնացաւ: Քիչ մ'ետքը արթըն-
նալով աչքերը բացաւ և բութ կնճիթով սկսաւ փորել այն
կաղնի ծառին արմատները, որ քիչ մ'առաջ իրեն սնունդ
տուած էր: - «Բայց այդ բանը ծառին վնաս կ'ընէ, կ'ըսէր
Ագուաւը վերէն. եթէ այդպէսով արմատը բանաս, աղէկ
գիտցի՛ր որ կը չորնայ անիկայ:

— Չորնալէն ինծի ի՛նչ վնաս կայ, պատասխանեց վա-
րէն ագահ Խոզը, ես անոր վրայ ամենեւին չ'եմ ցաւիր, ինձ
պէտք եղածը կաղինն է. այն է որ զիս կը գիրցունէ:

— Ապերախտ, գոչեց Ծառը բարձրէն, ուսկի՞ց կը թա-
փին այն կաղինները. գոնէ կարենայի՛ր անգամ մը վեր նա-
յիլ և կոյր աչքովդ այդ բանն ստուգել:»



24. ԱՔԱՂԱՂ ԵՒ ԻՒՐ ԸՆՏԱՆԻՔԸ


Աքաղաղը լայն բակին մէջ կը ճեմէր, գլխուն վերև ոս-

կիէ կատարը կը ճօճէր, կառուցին տակ կարմիր մօրուքը կը շարժէր: Կառուցը թուրի պէս է, պոչը չքեղ զարդարուած, ոտքերն բիտեր ունին, թեւերն՝ սիրուն շերտեր: Ճանկերով հողը կը փորէր և հաւերն ու ձագերը կը հրաւիրէր. « ջո՛ւ-ջո՛ւ-ջո՛ւ-ջո՛ւ-ջո՛ւ, հաւիկնե՛ր, դուք հողատա՛ր մայրիկներ, խտտուտիկնե՛ր, սեւե՛ր, սպիտակնե՛ր, դեղիննե՛ր ու մոխրագոյննե՛ր, հաւաքուեցէ՛ք ձագերով, ձեր քնքոյշ որդիներուն հետ. ձեզի համար աղբ յուզեցի, հատիկներ պատրաստեցի: »

Հաւ ու ձագ հաւաքուեցան, կռկռացին, մօտեցան, բայց փոխանակ ձաշելու իրարու հետ կռուեցան:

Աքաղաղը այս բանս չ'սիրեց, զանոնք հաշտեցնել ուզեց, մէկուն գլխէն, միւսին գանկէն բռնեց, թեւերը թափիթափ զարկաւ, ամէնքն ալ հեռացուց, հատիկներն ինքը կերաւ, յետոյ տանիքին վրայ թռաւ, թեւերը շարժեց, « կու-կո՛ւ-լիկ-կո՛ւ » կանչեց և ճաշը վերջացուց:

Ահադադը հաւին հետ համեմատեցէ՛ք:




25. Բ Ա Գ

Բարսեղ լճին եզերքը նստած կը դիտէր թէ ի՛նչպէս բազերը անոր մէջ կը թաւալին, լայն կառուցին ջրին մէջ կը

սուղեն, գլուխնին կը ծածկեն, դեղին ոտքերնին կը բարձրացնեն, կարծես արեւին կը տաքնան: Բարսեղին պատուիրած էին որ բազերը պահպանէ, բայց անոնք ջրին երեսէն խաղալով գնացին, հեռացան: Ի՞նչ ընէր, զանոնք ի՞նչ պէս տուն դարձնէր: Մէկ ճար մը կար. սկսաւ բարձրաձայն կանչել. « Ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ, ի՛մ շատակեր, լայնաքիթ բազեր, բաւական է որչափ որդեր որսացիք, խտտ կերաք, ախլմ կուլ տուիք, կոկորդնիդ լեցուցիք, շուտ ինձ մտիք ըրէ՛ք ու տուն դարձէ՛ք: »

Բազերը Բարսեղի ձայնը լսեցին, լողալէ դադրեցան, դուրս ելան ափին վրայ և դէպ ՚ի տուն դարձան: Բայց տեսնելու բան էր թէ վաղվա՞ծ ժամանակնին ի՛նչպէս կը թըմթըբային, այս և այն կողմ կը տատանէին:

Պատկերէ՛ք եւ համեմատեցէ՛ք բազը հաւին հետ:



26. Ս Ա Գ Ե Բ

Սազերը գնացին գետին ափունքը կերակուր գտնելու և ճճիններ որսալու: Երեկոյեան Պառաւն առաւ գաւազանը և գնաց որ տուն բերէ զանոնք: Սազերը Պառաւը տեսնել-

նուն պէս ջուրը նետուեցան և սկսան լողալ: Պառաւր ձայն տուաւ անոնց.

« Զո՛ւ, ջո՛ւ, շատակեր
Սեւ ու սպիտակ ի՛մ սագեր,
Հերի՛ք որչափ լողացիք,
Հերի՛ք որչափ դետի մօտ
Որդեր կերաք դուք ազմտ:
Երթա՛նք, երթա՛նք դէպ ՚ի տուն,
Զեզ կուտ կուտամ իրիկուն:»

Իսկ չար սագերը չ՛ուզեցին ականջ կախել հանդարտ Պառաւին, վիզերնին երկնցուցին, կարմիր ոտքերնին շարժեցին, լայն թեւերնին զարկին, կտուցնին բացին և

« Ղա՛, զա՛, գոռացին,
Զուր պիտ՛ մանենք մենք կրկին,
Դեռ չ՛ենք ուզեր երթալ տուն:
Մանեւ ազտոտ հաւատուն,
Զրի մէջը վայր ու վեր,
Պէտք է մաքրենք մեր թևեր:»

Պառաւը նստաւ գետին եզերքը: Սագերը լողացին, լողացին, մէյ մ՛ալ յանկարծ թեւերնին զարկին, իրարու ետև գորգոռալով դուրս թափեցան ջրէն ու դէպ ՚ի տուն վազեցին գաւազանի վախէն:

Համեմատեցէ՛ք սագր բաղին ու հաւին հետ:

27. ԿՌՈՒՆԿՆԵՐ

Կըռ - կըռ կըրկըռան
Կըռունկները հա՛ թըռան.
Կըռունկներու թեւի տակ
Եկաւ ամառ մեր դըրբան:

28. ԱՂԱՒՆԻՆԵՐ

Սիրուն աղանիներ, թաւտան թռչուններ, տանիքի վրայ նստած՝ իրարու նայելով զիրար կը սիրեն, կը համբուրեն միշտ և ձագուկներնուն մնաս բարով ըսելով դէպ ՚ի դաշտ կը շտապեն, հատիկներ կը հաւաքեն, որկորնին կը լեցնեն, քնքոյշ ձագերնուն նախաճաշիկ կը պատրաստեն: Իսկ բոյնին մէջ ձագերը, մերկ աղանեակները, նստած կ'սպասեն, ուտելիք կ'ուզեն: Մայրը տուն կը վերադառնայ և պատրաստած աննդովը փոքրիկները կը կերակրէ:

Աղանին հաւին հետ համեմատեցէ՛ք:

29. ՈՒՐԻՇԻ ՎՐԱՅ ԾԻԾԱՂԻԼ ՊԵՏԻ ԶԵ՛

Դեղձանիկը գէշ թակարգի մը մէջ ինկաւ. խեղճն անոր մէջ կը թըփըրտար ու կը չարչարուէր, իսկ փոքրիկ աղանին զինքը կը ծաղրէր. « Ամօթ չէ՞, կ'ըսէր, որ ցերեկը, լոյս

աչքով, թակարդի մէջ ինկար: Ես համարձակ կրնամ ապահովցնել զքեզ որ զիս այդքան դիւրութեամբ չէին կրնար որոգայթի մէջ ձգել:» Այս ըսաւ չըսաւ, մէկ մ'ալ տեսնես իր ոտքերն ալ բռնուեցան ցանցին մէջ: Եւ արժանի ալ էր, թո՛ղ ուրիշին վրայ չի խնդար:

30. ԿԱՂԱՄԲԻ ԹԻԹԵՈՒ

Մանուկը պարտիզին մէջ սպիտակ թիթեռ մը բռնեց և հօրը բերաւ. «Շատ փնտասկար թիթեռ մ'է այդ, ըսաւ հայրը. եթէ ատոնք բազմանան, մեր կաղամբը բոլորովին կը չորնայ:

Միթէ այդքան ագա՞ն է այդ կենդանին, հարցուց Մանուկը:

— Ոչ թէ ինքը ագահ է, այլ իւր թրթուրը, պատասխանեց հայրը. այդ թիթեռը շատ մը մանր ձուեր կ'ածէ, իսկ անոնցմէ դուրս կը սողան որդեր որոնք կ'անուանուին Երեւո՛ւր: Թրթուրը շատ ոկրամու է. ուրիշ բան չ'դիտեր նա բայց եթէ ուտել ու մեծնալ: Երբոր մեծնայ, կը պատենաւորի: Այդ միջոցին նա ո՛չ կուտէ, ո՛չ կը խմէ, այլ անշարժ կ'իյնայ: Ժամանակէ մը ետքը անկից թիթեռ դուրս կուգայ, այդ բռնածիդ նման: Այսպէս կը կերպարանափոխուին ամէն թիթեռները, հաւկիթէն կը դոյանան թրթուրներ, թըրթուրներէն պատենաւորներ, անոնցմէ ալ թիթեռներ: Իսկ թիթեռները ձու կ'ածեն և կը մեռնին:

Կարգով պատեցէ՛ք թիթեռին կերպարանափոխութիւնը:

31. ԶԱՏԻԿ

Որդին. — «Տե՛ս, հայրի՛կ, ինչպիսի՛ գեղեցիկ կըրիկ բզէզ մը բռներ եմ: Գլուխը սև է, թևերը կարմիր են և անոնց վրայ բծեր կան: Միթէ սա կենդանի՞ է, հայրի՛կ: Ամենեւին չի շարժիր:


Հայրը. — Կենդանի է, բայց մեռած կը ձեւանայ, իւր վեց ոտքերը ծալլեր, փորին փակցուցեր, ընչացքը պահեր է և կ'ըսպասէ որ զինքը վար նետես խտտերուն մէջ: Անոր անունը շո՞ք է և շատ օգտակար բզէզ մ'է: Ինքը և իրմէ աւելի իր թրթուրները կը փծացնեն շատ մը կանաչադոյն փնտասկար միջատներ որոնք խմբովին տերեւներուն կը կպչին և մեծ փսաս կը հասցնեն բոյսերուն:


Որդին. — Տե՛ս, հայրի՛կ, բզէզն արթնցաւ և բարձրացաւ մատիս ծայրը: Այն տեղէն ո՞ւր կերթայ նա:

Հայրը. — Ահա կը տեսնես, ի՛նչպէս կը շարժէ նա իւր բարձր վերնաթեւերը, իսկ տակէն կը հանէ, կը տարածէ իր իսկական թեւերը որոնք թեթև են ու թափանցիկ:

Որդին. — Ահա թռաւ. ի՛նչ խորամանկ բզէզ է եղեր:»

Համեմատեցէ՛ք զատկը թիթեռին հետ:





32. Թ Ի Թ Ե Ռ


Մ Ա Ն Ո Ի Կ Ն

Ըսէ՛ ինծի, ի՞նչ բանով
Կ'ապրիս, թիթե՛ւ ու գ իմ սիրուն,
Ամբողջ օրըդ խաղերով
Կ'անցնես, չը զգաս յոգնութիւն:

Թ Ի Թ Ե Ռ Ն

Սիրուն կանաչ դաշտին մէջ
Կեանք կը վարեմ համարձակ,
Ծաղկանց բուրմունքըն անոյշ
Իմ կերակուրս է միակ:

Բայց իմ կեանքըս խիստ կարճ է,
Հազիւ օրուան չափ երկար.
Բարի՛ եղիր, ո՛վ մանկիկ,
Խնայէ՛, զիս ձեռք մի՛ տար:



33. Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ

Ծիծեռնակը կը տեսնե՞ս, ամենեւին չի հանդատանար,
ամբողջ օրը կը թռչի, ծղօտներ կը հաւաքէ, կտուցովը կաւ
կը կրէ, իրեն համար բոյն կը շինէ: Բոյնը շինեց, վերջա-
ցուց, մէջը երեք ձու ածեց, անոնց վրայ երեք շաբաթ շա-
րունակ նստաւ ու փոքրիկ ձագեր գոյացուց: Ձագերը եր-
բոր դուրս ելան, բերանին բացին և կերակուր խնդրեցին:
Ծիծեռնակը թռաւ, դաշտը գնաց, մէկընէր բռնեց, զա-
նոնք կերակրեց:

Ժամանակը հասաւ, ձագերուն փետուրները բուսան.
Թեւաւորեցան նոքա, իրենց բոյներէն դուրս թռան, հեռու
ճամբայ ինկան, կապոյտ ծովերու, միթին անտառաց և
բարձր սարերու վրայէն անցան:

Չմեռն անցաւ, դարունը եկաւ: Ծանօթ ծիծեռնակը
նորէն ետ դարձաւ, գտաւ իր բոյնը, նորոգեց զայն, նոր
նոր ձուեր ածեց, նոր ձագեր հանեց, պահեց, մեծցուց և
աշնան նոյն կարգով թռցուց զանոնք:

34. ԲՁԷՁԸ ԵՒ ԾԻԾՆՈՆԱԿԸ

Բզէզի պատեանը ամբողջ ձմեռը հողին վրայ ինկած էր . կարծես թէ մեռած էր նա , բայց ո՛չ : Գարնան , բզէզը պատեանէն դուրս եկաւ և ծառին վրայ ելնելով՝ սկսաւ նորաբոյս տերեւներ ուտել :

Ծովուն այն կողմէն Ծիծեռնակը վերադարձաւ և սկսաւ կարկատել իւր հին բնակարանը : Աղէկ մը զայն նորոգելէն ետքը , Բզէզը նշմարեց և ըսաւ . « է՛ , դու ալ աշխարհ եկար : Բայց , սիրելի՛ս , մարդկանց օգուտ չունիս դու , կարծեմ : Դու տերեւները կ'ուտես , ձագերդ արմատները կը կրծեն և ծառը կը չորնայ : Քիչ մ'ալ սպասէ՛ , դու ինծի պիտանի պիտի ըլլաս նախաճաշիկի համար : »



35. ԱՐԾԻԻ


Թխաթե արծիւը բոլոր թռչնոց թագաւորն է : Նա իւր բոյնը կը շինէ ժայռերու և մեծ կաղնիներու վրայ : Խիստ բարձրէն կը թռչի նա , հեռուն կը տեսնէ և արեւուն կընայի առանց աչքերը թարթափելու :

Արծիւին կառուցը մանգաղաձև է , ճանկերը կարթածև են , թեւերը երկար ու սուր , կուրծքը հսկայական ու դուրս ցցուած :

Արծիւը ամպերուն մէջ կը սլանայ և շատ բարձրէն կը դիտէ իւր որսը : Նա կը յարձակի սրապոչ բադերու , կարմրաթաթ սագերու և խաբեբայ կկուններու վրայ և այնքան շուտ կը թռի որ միայն անոր փետուրներուն ցրուիլը կը տեսնես :

Համեմատեցէ՛ք արծիւը հաւից հետ :

Խոր անտառին մէջ սեւ փայտփորը ծառերուն վրայ հիւսնութիւն կ'ընէ, թը'կ-թը'կ-թը'կ, ճանկերով պինտ կը փակչի անոնց, պոչը նեցուկ կ'ընէ, կտուցով կը զարնէ և մըրջիւններ ու միջատներ դուրս կը քաշէ կեղեւին տակէն, արմատին չորս կողմն ալ արագութեամբ պտոյտ կ'ընէ, և ո՛չ մէկ միջատ աչքէն չ'փախցնէր: Միջատները վախցան. այս աղէկ բան չէ՛, ըսին ու ներս փախան: Փայտփորն սկսաւ թը'կ-թը'կ-թը'կ, ծառին կեղեւը ծակեց, երկար լեզուն ներս մտցուց և միջիւնները դուրս քաշեց ձկներու պէս:



37. Կ Կ Ո Ւ

Մոխրագոյն կկուն անտուն և ծոյլ թռչուն մ'է. նա ինքն իրեն համար առանձին բոյն չի շինէր, այլ ուրիշներու բոյնին մէջ ձու կը դնէ, զաւակներն այլոց կը յանձնէ սնունդ:

տալու համար, և ինքն հեռուն կեցած անոնց վրայ կը ծիծաղի և հպարտաբար կը կըրկըչայ իր որձակին առջև. — «Հա՛, հա՛, հա՛, տե՛ս, սիրելի՛ ընկեր, ես դրախտապանի համար ձու կ'ածեմ:» Իսկ անոր հպարտ արուն ծառին վրայ նստած՝ պոչը տնկեց, թեւերը վարառաւ, վիզը երկնցուց, գլուխն այս և այն կողմը շարժեց և սկսաւ երգել, — իւր օրերը համրել:

Համեմատեցէ՛ք կկուն փայտփորին հետ :

Շատ գեղեցիկ է ճանճը մանրագիտի ապակւոյն տակ, այնպէս չէ՞. անոր թեւերը մեծ ճարտարութեամբ հիւսուած են և կը փայլին ծիածանի գոյներով: Գլխուն վրայ երկու մեծ աչք ունի, բայց իւրաքաչիւր աչքը կազմուած է բազմաթիւ փոքրիկ աչքերէ: Իրգոտ ոտքերուն ծայրը մածուցիկ մաշկ կայ, որ ճանճին դիւրութիւն կուտայ շիտակ ապակւոյն և առաստաղներուն վրայ ման գալու:

Ճանճը խոնաւ տեղուանք, աղբի մէջ ձու կ'ածէ: Յաջորդօրը ձուերէն որդեր դուրս կ'ելնեն (թրթուր). երկու շաբաթ ետքը որդը բժոժ կը դառնայ, երկու շաբաթ ալ կ'անցնի և բժոժէն դուրս կուգայ փոքրիկ ճանճ: Այս ճանճը միւսնոյն տարին կարող է ձու ածել. բայց որովհետեւ ճանճը տարին չորս անգամ ձու կ'ածէ, և ամէն անգամ 80 կամ 90 հատ, ապա մտածեցէ՛ք թէ ինչչա՛ր պիտի բազմանային, եթէ ցուրտէն, թռչուններէն և մանաւանդ սարգերէն չի ջարդուէին:

Նկարագրեցէ՛ք ճանճը եւ անոր կերպարանափոխութիւնը:

39. ԳԱՇՏԱՅԻՆ ՄՈՒԿԸ

Վախկո՛ւ գազան գաշտերուս,
Քու երկիւղը շատ մեծ է.

Ըզգուշութեամբ քայլ կ'առնուս,
Սիրարդ միշտ դողի մէջ է:

Սակայն քիչ մը քի՛չ վախցիր,
Կարծածիդ չափ չար չ'եմ ես.

Միշտ միամիտ դու կեցի՛ր,
Չ'եմ հալածեր ես զ'քեզ:

Գող ես դու, ի՞նչ ընես.

Թըշուա՛ւ, ինչո՞վ պիտ' ապրիս,
Ինչո՞վ կեանքըդ պահպանես.

Քանի մը հասկ, սիրելի՛ս,

Իբրև պաշար

Ձմրան համար

Ա՛ւ, ի՞նչ կ'ըլլայ, երբ գաշտին

Մէջ շատ առատ կը հասնին:

Քու խրճիթըդ քանդուեցաւ,

Եղաւ գետնին հաւասար:

Դու նոր հողը պիտ' փորես,


Փափուկ մամուռ պիտ' ճարես:

Նոր տուն կանգնես,

Հոն կեանք վարես,

Ամէն կողմէ փչող հովէն,

Սառն ու փուքէն պատասպարուիս:



40. ՆԱՊԱՍՏԱԿԻՆ ԳԱՆԳԱՏԸ

Մոխրագոյն նապաստակը թփին տակ նստած կը դող-
դըղար, կուլար և կ'ըսէր.

« Իմ վիճակէս աւելի գէշ վիճակ չ'կայ, և ո՞վ է որ ակ-
ռայներն իմ վրաս չի սրեր: Որսորդները, շուները, գայլը,
աղուէսն ու գիշատող թռչունը, կորակառուց բազէն, չար-
աչուի բուն, մինչև անգամ յիմար ագռաւն ալ իւր ծուռ
ճանկերով կը յափշտակէ սիրուն ձագերս: Ամէն կողմէ վը-
տանդ կ'սպառնան ինձ, ինքզինքս պաշտպանելու միջոց չ'ու-
նիմ ամենեւին. սկիւռին նման չ'եմ կարող ծառերուն վրայ
բարձրանալ, ճագարին նման որջեր փորել գետնին մէջ: Ճըշ-
մարիտ է, թէև իմ ատամներս կրնան կաղամբ ու արմա-
տեղէնները կրծել, բայց և այնպէս չ'եմ համարձակիր անոնց-
մով ուրիշներու վնասել: Վաղելու մէջ վարպետ եմ ես, ցատ-
քելու մասին ալ ոչ նուազ. բայց աւելի աղէկ կ'ըլլար եթէ
յաջողէի միշտ ուղիղ գաշտի վրայ կամ գարիվեր վաղել.
բայց եթէ դարիվար վաղելու ստիպուիմ, այն ժամանակ

գլխի վար կուգամ և կը գլորիմ, որովհետև առջեւի ոտներըս կարճ են:

«Դարձեալ կրնայի ապրիլ, եթէ այս անիծեալ երկչոտութիւնը վրաս չ'ըլլար: Շնկոց մը լսելուս պէս, ականջներս կը տնկուին, սիրտս կը արփէ, դեռ լոյսը չի ծագած դուրս կը փախչիմ թփերուն տակէն, բայց դարձեալ ուղղակի կա՛մ թակարգի մէջ կ'իյնամ, կա՛մ որսորդին ոտից տակ կը փռուիմ:

«Ա՛հ, ցաւալի է խեղճ նապաստակիս վիճակը: Խորամանկութիւն կ'ընես, թփերու ներքև կը ծածկուիս, կաղամբի տակ կը պառկիս. հետքերդ կորսնցնել կուտաս, բայց դարձեալ ուշ կամ կանուխ փորձանքէն չ'ես ազատիր և խոհարարը երկար ականջներէդ բռնած խոհանոց կը տանի ղ'քեզ:

«Մխիթարութիւն մը միայն ունիմ, այն ալ պոչիս կարճ ըլլալն է, որով շունը բռնելու տեղ չի գտնար: Եթէ աղուէսին պէս պոչ ունենայի, ի՞նչ ձիւն պիտի գար գլխուս: Այն ժամանակ, անպատճառ կ'երթայի կը խեղդուէի:»

Համեմատեցէ՛ք նապաստակը կասուիին հետ:



41. ՍԱՆԱՀԱՅՐ ԱՂՈՒԷՍԸ

Սանահայր աղուէսի ատամները սուր են, դունչը բարակ, ականջները տնկուած, պոչը ուղղաձիգ, մորթը տաք ու փափկիկ:

Մեր սանահայրը աղէկ զարդարուած է, բուրդը փափուկ է և ոսկեփայլ, կուրծքն ունի լաւ կրծկալ, իսկ պարանոցն փողպատ կապուած է:

Աղուէսը ման կուգայ կամաց կամաց, գետնին վրայ կը խոնարհի, կարծես թէ գլուխ կուտայ քեզ, իւր բրդոտ պոչը զգուշութեամբ կը պահպանէ, քնքոյշ կերպիւ կը նայի և կը ժպտի սպիտակ ակուայները ցոյց տալով:

Աղուէսը խելացի է, խորունկ սրջեր կը փորէ, շատ մուտքեր կը պատրաստէ, ներքնատուն և ննջարան կը շինէ և յատակը կը ծածկէ կակուղ խոտով:

Աղուէսը լաւ տուն կառավարող կ'ըլլար, եթէ փոքր ինչ գող չ'ըլլար: Նա բագեր կը սիրէ, վարպետութեամբ գիրուկ սագերուն պարանոցը կը ծալէ, ճագարներուն ալ չը խնայեր:

Համեմատեցէ՛ք աղուէսը նապաստակին հետ:



42. ՉՈՒԿԸ

Օդը տաք է, իսկ գետեզերաց ստուերներուն տակ առոյգ ձկները խմբովին կը շարժին, նորանոր առուակներուն մէջ համարձակ կերակուր կ'որոնեն կամ ազատօրէն կ'ըզբօնուն: Ահա՛ տեսէ՛ք, ինչպէս ձուկը ուրախ կը խաղայ ջրին յատակը:

« Զո՛ւկ, ա՛յ ձուկ, խաղա՛ որչափ և կ՛ուզես, միայն զգուշացի՛ր պողպատեայ կեռերէն. ահա մանուկը կարթը ձեռքը՝ նստած է ուռենւոյն տակ և զգուշութեամբ հետքդ կը դիտէ: »

Զուկը չի տեսներ մահաբեր կարթը որուն ծայրին անցուած է պարարտ որդը: Զուկն ագահաբար յարձակեցաւ անոր վրայ և զայն իր փոքրիկ բերնին մէջ առնելով՝ մինչև ջրին յատակը խորասուզեցաւ: Մանուկն արագապէս քաշեց մազէ քուղը... խեղճ ձուկ, կեանքդ կարճեցաւ:

Նկարագրեցէ՛ք կարթն ու ձուկը:



ՇՐՋԱՆ ԶՈՐՐՈՐԴ


1. ԳԱՇՏ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Մարդիկ դաշտը կը հերկեն և հացահատիկներ կը ցանեն: Մանուկները Ուսումնարան կերթան և Աստուծոյ խօսքը կը սովորին:

Հատիկները կակուղ հողին տակ կը ծածկուին: Աստուծոյ խօսքը մանուկ սրտերու մէջ կը մտնէ: Երկիրս անձրևէն կը փափկանայ, արեւէն կը տաքնայ: Խելացի խօսքերով եւ քնքշութեամբ հողին եռանդ կ'զգենու: Հողին տակ, խաւարի մէջ սերմերը չ'են կորսուիր: Բարի ուսմունքներն ալ սրտէն չ'են ջնջուիր: Սերմերը կը բուսնին կանաչ ընձիւղով: Ուսումը խելացի խօսքերով կ'աւանդուի: Արտերը կը ծածկուին ոսկեգոյն հունձքով: Աստուծոյ խօսքը կը պսակուի բարի գործերով: Ո՛վ Տէր, ժամանակին տո՛ւր անձրև ու արեւ, բայց աճեցո՛ւր նաև մեր սրտերուն մէջ բարութեան սերմերը:

Արտերուն մէջ եղածը Ուսումնարանին մէջ եղածին հետ համեմատեցէ՛ք:





2. ԳՐԱՏԱԽՏԱԿ ԵՒ ՔԱՐԵՏԱԽՏԱԿ

Ատաղձագործն կը շինէ գրատախտակն և ներկարարը սև գոյնով կը ներկէ զայն: Քառանկիւնի ձև ունի և դրուած է շարժուն ոտքերու վրայ կամ պատէն կախուած է: Գրատախտակը դասարանի մէջ կը մնայ միշտ: Նորա վրայ կաւիճով կը գրեն:

Քարետախտակը քարակոփերը կը կարեն հերձաքարերէն, իսկ հիւսնը փայտէ շրջանակի մէջ կ'անցնէ զայն: Քարետախտակները գրասեղաններուն վրայ՝ աշակերտաց առջևը դրուած են: Աշակերտներն իրենց քարետախտակները հետերնին սուն կը տանին. քարետախտակին վրայ քարեգրիչով կը գրեն:

Համեմատեցէ՛ք քարետախտակը գրատախտակին հետ:

3. ԿԱԻԻՃ

Փոքրիկ Սաթենիկ վաղուց գիտէր որ գրատախտակին վրայ կաւիճով կը գրեն, թէ անով ասուին կը գծեն ձեւերու ժամանակ, կաւճով կարելի է ձեւքերը և հագուստները ճերմկցնել, թէ սպիտակ ու փափուկ է այն և կարելի է փշրել ու փոշի դարձնել զայն: Սաթենիկ ասկէց զատ ուրիշ բան մը չ'էր գիտեր կաւճի մասին: Անգամ մը հարցուց նա իրենց աղախնոյն թէ ո՞ւր կ'ստանային կաւիճը:

— « Յայտնի բան է որ խանութներէն կը գնեն, հոգի՛ս, ըսաւ աղախինը:

— Շատ լա՛ւ, բայց խանութներ՞ն ուր տեղէն կ'առնուն:

— Սարերէ . . . այդպիսի սարեր ալ կան:

— Հա՛, ըսել է հող է այն », մտածեց Սաթենիկ եւ ալ բան չի հարցուց:

Բայց ո՛րչափ զարմացաւ նա երբ օր մը գրքի մը մէջ պատկեր մը տեսաւ և ստորև կարդաց Վա՛ւճ: Սաթենիկ մօրը քով վազեց. « Մայրի՛կ, սիրելի՛ մայրիկ, միթէ հոս նկարուածը կաւիճ է », հարցուց:

— Այո՛, զաւա՛կս, չե՞ս տեսներ, գրուած է:

— Բայց մեր կաւիճն այսպէս չ'է, մայրի՛կ:

— Այն ալ այսպէս կ'երեւայ եթէ մանրագիտի տակ գնենք: Մանրագէտն խողովակ մ'է որ առարկայները մեծ գիրքով կը ցուցնէ: Կաւիճը այն փոքրիկ կենդանիներու բոյնն է որոնք կը շինեն կաւճէ և կրէ լեռներ: Արդ այնչափ մանր են նոքա որ կարելի չէ հասարակ աչքով տեսնել զանոնք: Ուսումնականք այդ մանրիկները Ըրա՛ն րտ կ'անուանեն: Գոքա բազմաթիւ են և իրենց նուրբ մորթին մէջէն կը սողան ջրին յատակը, նոյն տեղ կ'ապրին ու կը մեռնին, իսկ իրենց մորթվահանը ջրին յատակը կը թողուն:

Ձուրն ալ իր ալիքներով աւազին հետ կը քչէ զանոնք
 դէպ 'ի ծովակը: Այդ մեռեալ մարմինները՝ իրենց մանրու-
 թեան հակառակ, իրարու վրայ կը դիզուին ծովուն տակ և
 մէկ մ'ալ կը տեսնես որ կը բարձրանան և հպարտաբար կը
 փայլին արեւուն դէմ իբրեւ ամբողջ տարր մը: Ահա ինչպիսի
 կենդանիներ են ամբողջ սարեր որք արեգական տակ կը
 փայլին ձեան նման. երբեմն այդ սարերուն վրայ խոտեր կը
 բուսնին և մարդիկ կը շինեն մեծ ու փոքր քաղաքներ, գիւ-
 ղեր: Մեր պատերը ճերմկցնող կիրն ալ այդ մանրիկ պատ-
 եաններէն բաւական կը պարունակէ:

Սաթենիկ լուռ նստած կը մտածէր և մտածելու շատ
 բան կար: Մօրը պատմութիւնը ազախնոյն պատասխանին
 նման չէր. այս կէտս պէտք էր հասկնալ և աղէկ հասկնալ:

4. Ջ Ր Ա Ղ Ա Յ

Ձուրը նաւէն արշաւելով
 Կատաղաբար կը հանէ ձայն,
 Զրազացքի յատակին տակ
 Կարծես ամպերը կ'որոտան:

Անիւներուն խիստ շարժումէն
 Յատակն ամբողջ կը դղրդի
 Եւ երկանին պտուտակէն
 Փոքր լեզուակը ճըռընչէ:

Կը շարժի այն օրօրուելով
 Եւ լեցուն տաշտը կը շարժէ,
 Որուն վրայ, երկանին մէջ,
 Մաքուր ցորեն կը կաթկթէ:

Իսկ քարի տակ մանրուելով
 Ալիւրն ամբար կը թափի,
 Զրազացն ալ սիրուն տեսքով,
 Իբրև ծերուկ, հոն կ'երեւի:

5. ԻՆՉ ԿԸ ՅԱՆԵՍ, ԱՅՆ ԿԸ ՀՆՁԵՍ

Աղուէսը Կռունկին հետ բարեկամացաւ և զայն իւր
 տունը ճաշի հրաւիրեց. «Եկո՛ւր, կ'աղաչեմ, թանկագի՛ն
 բարեկամս, եկո՛ւր տե՛ս քեզի ի՛նչ պատիւ պիտի ընեմ:»

Կռունկը գնաց: Աղուէսը կերակուր եփեր էր, մէկ եր-
 կու դգալ դրած էր պնակին մէջ և Կռունկը կը հրաւիրէր.
 «Հրամմէ՛, հրամմէ՛, կե՛ր, սիրելի՛ բարեկամս, շատ պատուա-
 կան եփուած է:» Կռունկն իր երկար կտուցը շատ կտկը-
 տացուց այն տափակ պնակին մէջ, բայց բերանը բան չի
 մտաւ: Աղուէսը գլուխը կախած ամէնը լզեց: Երբ որ կերաւ-
 վերջացուց, Կռունկին ըսաւ. «Կը ներես, բարեկա՛մս, ու-
 ըրիչ բան չ'ունիմ, որով կարողանայի զ՛քեզ պատուել:

— Ծնորհակալ եմ, բարեկա՛մ, ըսաւ Կռունկը: Կա-
 ղաչեմ որ վազն ալ դուք մեր տունը ճաշի հրամմէք:»

Միւս օրը Աղուէսը Կռունկին գնաց: Կռունկը կերակուրը
 եփեր էր և նեղաբերան ամանի մը մէջ դրեր էր, բայց այն-
 պէս որ միայն իր երկար կտուցը կը մտնէր անոր մէջ: Ամա-
 նը սեղանին վրայ դրաւ և աղուէսը հրաւիրեց. «Հրամմէ՛,
 մօտ եկո՛ւր, Աղուէս եղբա՛յր, կե՛ր, պատուական կերակուր
 է»: Աղուէսը շատ պտրտեցաւ, այս ու այն կողմն ինկաւ, ա-
 մանը դուրսէն լզեց, շատ մ'ալ հոտուրտաց, բայց բերանը
 բան չի մտաւ: Իսկ Կռունկը իր երկար ու կեռ կտուցով
 կերակուրը դուրս կը քաշէր, կ'ուտէր: Երբոր կերակուրը

վերջացուց, հիւրին դառնալով բառ. «կը ներես, պատուակա՛ն բարեկամ, ասկից ուրիշ կերակուր չ'ունիմ, որով կարողանայի գրեզ հիւրասիրել: — «Աղուէսը փորը անօթի ու բարկացած տուն դարձաւ և այդպէսով անոնց բարեկամութիւնն ալ վերջացաւ:

6. Մ Ա Տ Ի Տ

Յոլակ, որ սրամիտ երեխայ մ'էր, իր հօր գրասեղանին առջև նստած՝ մատիտներ կը կարէր իրեն և հօրը համար: Ամէն անգամ կտրելուն՝ կը կտորէր. թէև մատիտ կտրելը շատ դժուար չ'է, սակայն նոյն օրը ձեռքը առաջ չ'էր երթար: Յոլակ մտածման մէջ էր և բոլորովին անուշադիր, անոր համար գործը գլուխ չ'էր կրնար հանել:

«Ի՞նչ կ'ընես, աղա՛ս, հարցուց հայրը ներս մտնելով. կ'երեւայ թէ խելքդ ուրիշ բանի վրայ է, անոր համար է որ չ'ես յաջողիր:

— Այո՛, հայրի՛կ, իմանալ կ'ուզեմ թէ ի՞նչպէս այս սև ու փայլուն նիւթը փայտէ ճիւղոտին մէջ է մտեր և մատիտ եղեր:

— Է՛հ, որդեա՛կ, կ'ուզես հարիւր մատիտ կտրէ ու կտորրատէ, բայց անկարելի է որ քու խելքովդ հաստատ տեղեկութիւն մ'առնուս: Այդ արդէն յայտնի բան մ'է: Գրքին մէջ կարդա՛, հարցո՛ւր . . . , իսկ ինչ որ ամէնքն ալ վաղրաց ՚ի վեր գիտեն, անոր համար հարկ չ'է գլուխ ցաւցնել:

— Գրքերուն մէջ այդ բանին չ'եմ պատահած ես, իսկ եթէ դու պատմես, հայրի՛կ, շատ շնորհակալ կ'ըլլամ: Միայն թէ շուտ, վասն զի պէտք է երթամ դասերս պատրաստեմ:

— Շա՛տ լաւ, նայէ՛ այն կտորներուն զոր այդ տեղ նետեցիր, անոնք սև են. ինչի՞ կը նմանին:


— Աժխոյ կը նմանին, հայրի՛կ:

— Աղէ՛կ, բայց ուշադրութիւն ըրէ՛, ածուխն աւելի փափուկ է և երբ որ կտորես, հաւասարապէս չի կտորուիր. իսկ երկաթը, տեսա՞ծ ես ի՛նչպէս կը կտորի. համեմատէ՛ . . . :

— Հասկցայ, այդտեղ խառնուած են երկաթն և ածուխը:

— Ճշմարիտ է: Ուրեմն մտքիդ մէջ տպաւորէ՛ հետեւեալը. ածուխն ու երկաթը անհաւասար չափով, այսինքն մէկէն քիչ, միւսէն շատ, հողի տակ իրարու կը խառնուին, կը միանան և անոնցմէ առաջ կուգայ կապարաքարը: Մարդիկ զայս դասն, սղոցեցին, ճիւղոտի մէջ անցուցին և այդպէսով մատիտը պատրաստուեցաւ: Բայց սա ևս պէտք է գիտնաս որ մարդիկ սարերէն գտնուած կապարաքարերով չ'են բաւականանար. այժմ՛նորա մի և նոյն բանը կը շինեն արուեստական կերպով, այսինքն գործարաններու մէջ. ատոր համար առանձին շինուած հնոցներու մէջ երկաթը կը հալեցընեն, հետն ածուխ կը խառնեն և կապարաքարը կը պատրաստեն, պատրաստելէն ետքը կը զատեն և կ'ունենան զանազան տեսակներ, փափուկ, պինդ: Փափուկ մատիտներուն մէջ երկաթը սակաւ է, իսկ պինդերուն մէջ համեմատաբար աւելի: Հասկցա՞ր այժմ:

— Այո՛, շնորհակալ եմ որ պատմեցիր:»



7. ԿՐԹՈՒԱԾ ԱՐՁ

— «Տղա՛յք, աղա՛յք, կանչեց մայրը, եկե՛ք Արջը տեսե՛ք» :
 Մանուկները դուրս վազեցին, ուր արդէն շատ մարդիկ ժողվուեցին :
 Մօրուսաւոր գիւղացին, երկաթէ մեծ ցից մը ձեռքը, Արջին ունգունքէն շղթայ մը անցուցած՝ կը խաղցնէր : Փոքրիկ աղայ մ'ալ թմբուկ կը զարնէր :
 — «Հա՛պա, Ա՛րջ, ըսաւ գիւղացին շղթայն թուլ ձգե-

լով, ոտք ե՛լ, բարձրացի՛ր, այս ու այն կողմ շարժե՛, պարոններուն առջև խոնարհե՛, շնորհքդ ամենուն ցո՛յց տուր :»

Արջը մոնչեց, ակամայ կանգնեցաւ ետեւի թաթերուն վրայ և սկսաւ օրօրուելով առաջ երթալ, աջ ու ձախ կողմ գլուխ շարժել :

— «Հա՛պա, Ա՛րջ, շարունակեց գիւղացին, ցո՛յց տուր թէ փոքրիկ աղայքն ի՞նչպէս սիսեռ կը գողնան. ուր որ գետինը չոր է, երեսի վրայ գնա՛, իսկ ուր որ չոր չ'է, ծնկի վրայ գնա՛ :»

Արջը սողաց, փորի վրայ պառկեցաւ, թաթով գլուխը քերեց, մազերը քաշեց, իբր թէ սիսեռ կը գողնար :

— «Հիմա ցոյց տո՛ւր թէ պառաւանդն ի՞նչպէս գործի կ'երթան :»

Արջը կ'երթայ, կ'երթայ, կը նայի, ետ կը նայի, թաթով ականջին տակ կը քերէ ու կը մտածէ :

Մի քանի անգամ Արջը զայրացաւ, գոռաց, չ'ուզեց վեր ելնել. բայց շղթային երկաթէ օղակը, որ անոր ունգունքէն անցած էր, և գիւղացւոյն ձեռաց երկաթէ ցիցը խեղճ գազանը կ'ստիպէին հնազանդիլ : Երբոր Արջն իր բոլոր հնարքն ու գիտութիւնը ցոյց տուաւ, գիւղացին ըսաւ .

— «Քեզ տեսնեմ, Ա՛րջ, երկու ոտքիդ վրայ առաջ գընա՛, պարոններուն առջև գլուխ խոնարհեցո՛ւր, միայն մի՛ ծուլանար, շատ խոնարհե՛, գլխարկդ վեր ա՛ռ, եթէ հաց դնեն մէջը, դու կ'ուտես, իսկ եթէ փող ինձ կը բերես :»

Արջը գլխարկը բացած, ետեւի ոտքերուն վրայ օրօրուելով յառաջ գնաց, բոլոր հանդիսականաց առջև մէկ մէկ քիչ կենալով :

Տղայք գլխարկին մէջ մի քանի դրամ դրին, շատ խըղճացին Առջին վրայ. խեղճին շրթունքներէն վար արին կը կաթկըթէր :

Երկու գիւղացի արջ մը կը տանէին ցոյց տալու: Երեկոյեան դէմ գիւղ մը հասան և իջեւան մը մնացին գիշերն անցընելու համար: Իջեւանին տէրը դեռ նոր ծախած էր իւր խոզը, ուստի խոզանոցը դատարկ էր: Արջն հոն տեղաւորեցին: Կէս գիշերուան գող մ'եկաւ որ խոզը գողնայ: Խոզանոցին դուռը կամաց մը բանալով ներս մտաւ, բայց հագիւ ձեռքն երկնցուցած էր որ շօշափելով խոզը գտնէ, արջը գոռալով գրկեց զայն իր ուժեղ թաթերով և այնպէս սաստիկ սեղմեց որ խեղճ գողը ցաւէն և երկիւղէն սկսաւ աղաղակել: Մարդիկ արթնցան և գոմը վազեցին, բայց մեծ դժուարութեամբ կրցան ազատել դժբաղդ գողը զայրացած գազանին ճիրաններէն:

9. ՌԵՏԻՆ

Վարդուհի, որ փոքրիկ, աշխատասէր ու խելօք աղջիկ մ'էր, անգամ մը գրքէն դասը օրինակելու ժամանակ Բ գրին տեղ Պ գրեց: Վարդուհի իւր սխալը տեսաւ և սկսաւ լալ:

— «Մի՛ լար, սիրունի՛կ, ըսաւ նմա մայրը, փոխանակ արցունք թափելու՝ ոտքի ե՛լ և սխալդ ուղղէ՛:»

— Բայց այն ատեն կ'աղտոտի, մայրի՛կ. վարժապետը պատուիրեց որ մաքուր և անսխալ օրինակենք:

— Է՛հ, այդ ցաւին ալ ճարը կը գտնուի: Չեռք ա՛ն ուսեալինը կամ գրչահատը և կամաց ու զգուշութեամբ քերթէ՞ սխալ գրած տառը, միայն զգոյշ կեցի՛ր որ թուղթը չիծակես:

— Յետոյ այդ քերթուած տեղը ի՞նչպէս Բ գրեմ, մայրի՛կ. չէ՞ որ քերթուած տեղը թանաքը կը ծծէ, որով աւելի գէշ կ'ըլլայ:

— Տե՛ս ինչպէս պէտք է ընել. զգուշութեամբ քերթելէդ

եաքը՝ գրչահատին կոթովը կը տրորես զայն, լաւ մը տրորելէդ եաքը՝ շուտով կը գրես հարկաւոր եղած տառը և իսկոյն աւազ կը ցանես վրան. . . : Այն ատեն ամենեւին յայտնի չ'ըլլար:»

Լացը դադարեցաւ, տառն ուղղուած էր արդէն և Վարդուհի սկսաւ իր մօրը հարց ու փորձ ընել:

— «Ո՞ւսկից է, մայրի՛կ, այդ պատուական ուսեալն որ այդպէս զարմանալի կերպով կ'երկնայ, մատիդ կը փաթթուի, իսկ երբոր բաց թողուս, նորէն կը կծկուի, կը քարանայ: Իսկ այն միւսը փայտի մէջ անցուած է և ի՛նչպէս երկար է ու մեծ. . . : Ո՞ւսկից են այդ բոլոր ուսեալները, մայրի՛կ:


— Տեսակ մը ծառ կայ, ըսաւ մայրը, որ տաք երկիրներու մէջ կ'աճի. այդ ծառէն հիւթ դուրս կուգայ, իսկ այդ հիւթէն կամ խէժէն մարդիկ զանազան տեսակ ուսեալներ կը պատրաստեն, որոնցմէ ոմանք կը ծառայեն թանաքով գրուածը քերթելու, իսկ այլք՝ մատիտով գրուածը. անոնցմով կը շինեն նոյնպէս կօշիկներ, և այլն: Ուրիշ անգամ մ'ալ, երբ ժամանակ ունենամ, ցոյց կուտամ քեզ թէ ուսեալն ի՛նչպէս լաւ կ'այրի:

— Հիմա՛, սիրելի՛ մայրիկ, հիմա ցոյց տո՛ւր. լուցկին քսելուդ պէս կրակը պատրաստ է:»

Մայրը ուսեալն վառեց և սա սկսաւ այրիլ արձակելով կապոյտ, փափուկ ու շիտակ բոց մը և կծու խէժային հոտ մը: Վարդուհի հանդարտ և անշարժ նստած էր: Կարծես նորա աչերն ալ կրակ էին կտրած և կը վառէին ուսման բոցով, երբ տեսան այդ կենդանի պատկերը զոր առաջ երբէք չէին ճանչցած:

10. ԱԳՌԱԻՆ ՈՒ ԽԵՅԳԵՏԻՆԸ

Ագռաւը լճին վերեւէն թռած ատեն տեսաւ Խեցգետինըն որ ջրին երեսը կը լողար: Ագռաւն իր կտուցովը զարկաւ անոր, բռնեց զայն և ուռեհնայն վրայ կենալով՝ ուտել կ'ուզէր: Խեցգետինը՝ տեսնելով որ մահը կը մօտենար՝ «Այ ագռաւ, ըսաւ, բարի՛ Ագռաւ, ես քու հայրդ ու մայրդ շատ լաւ կը ճանչնայի. ի՞նչ պատուական թռչուններ էին: — Ը՛հր՛: Ըրաւ Ագռաւը առանց բերանը բանալու — Գոյրերդ ու եղբայրներդ ալ կը ճանչնայի, աւելցուց միւսը. ամենապատուական թռչուններ էին: — Ը՛հր՛, կրկնեց Ագռաւը: — Այո՛, շատ պատուական թռչուններ էին, բայց քեզ չէին հաւասարեր: — Ահա՛, զհա՛», կռկռաց Ագռաւը բերանը բանալով և Խեցգետինը ջրին մէջ ինկաւ ազատեցաւ:



11. ԳՈՐՏԸ ԵՒ ԵՁԸ

Գորտին մէկը դաշտին մէջ եղմը տեսաւ, մեծ ու գէր: Կը կարծուի՞ որ Գորտն ալ նախանձ ունենայ: Ինքնիրեն ըսաւ. «Գորձ փորձե՛մ, տեսնե՛մ պիտի կարենա՞մ եղան հաւասարիլ:» Գորտն սկսաւ ուռիլ, փքացաւ, տրկուեցաւ և

ընկերովը դառնալով ըսաւ. — «Տե՛ս, կռկռո՛ւն ընկեր, արդեօք եղան չ'ե՛մ հաւասարիլ: — Չէ՛, սանտամայր, ըսաւ նա. դուն ո՛ւր, ան ո՛ւր. ձեր մէջը մեծ սարեր կան: — Հապա հիմա՞յ, նորէն տե՛ս թէ ո՛րքան փքացայ, տե՛ս, ի՞նչպէս եմ, ըսէ՛ տեսնենք, հիմայ կը նմանի՞մ այդ եղան:

— Չէ՛, չէ՛, հողի՛, չէ՛:

— Հապա հիմա՞յ:

— Տարբերութիւնը ոչինչ է, ինչ որ էիր՝ նոյնն ես:»

Բայց մեր Գորտը նորէն այնքան փքացաւ և ուռեցաւ որ պայթեցաւ վերջապէս:

12. ՔԱՐ ԵՒ ԵՐԿԱՌ

Ստեփան իր Ուսուցչին հետ գետափը գնաց: Այնտեղ մեծ մեծ քարեր ինկած էին, իսկ անոնց շուրջը մանր քարերու կտորուանք և շատ ալ աւազ կար: «Այսքան աւազը ուսկի՞ց հաւաքուեր է հոս, հարցուց Ստեփան: — Բոլորն ալ այս քարերէն, պատասխանեց Վարժապետը. դարնան, երբ շուրը սաստիկ կը բարձրանայ, քարերուն կը զարնէ և քիչ քիչ կը մանրէ զանոնք:

— Այսու ամենայնիւ քարը փայտէն շատ ամուր է, դիտեց Ստեփան. ահա մեր փայտէ տան պատերուն տակ որձաքարեր դրուած կան, որոնց վրայ յենած է ամբողջ տունը, սակայն անոնք չ'են փշրուիր. կ'երեւի թէ տուները աւելի երկար ժամանակ պիտի դիմանան երբ ամբողջապէս քարով շինուած լինին:

— Սակայն տեսնենք թէ ի՞նչ տեսակ քար է, պատասխանեց Ուսուցիչը. քարեր կան որ շատ շուտ կը փշրուին, բայց կան նաև այնպիսի քարաչէն տուներ որք քանի մը հարիւր տարի կը դիմանան: Տեսնե՛նք դու ի՞նչ կը կարծես:

ո՞րն աւելի ամուր է, կայծքա՞րը թէ երկաթը: Չա՛րկ և կ'ի-
մանաս: Կայծքարն ամուր է, իսկ միւս քարերը կակուղ են,
երկաթ մրճով կարելի է փշրել զանոնք: Ընդհակառակն
երկաթը ձգողական է և կռանելի. տե՛ս ի՛նչպէս դարբինը
երկաթի կտորը կը կարմրցնէ և քանի՛ մրճով վրան կը զարնէ՝
երկաթն ալ այնքա՛ն կ'երկննայ: Այսպէսով կարելի է պատ-
րաստել ամենաբարակ թերթ կամ նուրբ թելեր շինել:
Քարն այդ յատկութիւնը չ'ունի, վասն զի կը փշրուի:

13. ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԸՄՊԵԼԻՔ

Առանց ուտելեաց մարդս անօթութենէ, իսկ առանց
ըմպելեաց ծարաւէ կը մեռնէր: Մարդս իբրև ուտելիք կը
գործածէ բուսեղէն, մսեղէն և աղ: Կը խմէ ջուր, թէյ,
սուրճ, գինի, գարեջուր:

Ամենահարկաւոր ուտելիքն հացն է, ամենահարկաւոր
առողջարար ըմպելիքն ալ ջուրն է:

14. Հ Ա Յ

Հացը կա՛մ տան տիկնայք կը թխեն, կա՛մ հացագործք:
Հացը խմորով կը շինեն: Խմորը կը շաղեն ալիւրով, ջրով ու
խաշով: Ալիւրը ջրաղացքին ցորենէն կը հանեն: Յորենը ար-
տին մէջ կը բուսնի, հասկերուն վրայ: Գիւղացիք դաշտը կը
մշակեն. նոքա հողը կը հերկեն, ակօսներ կը բանան, յե-
տոյ անոնց մէջ կը սերմանեն ցորեն և ուրիշ հացահատիկ-
ներ, իսկ Աստուած կ'աճեցունէ զայնս: Աստուած կը զրկէ
մեզ ամառ, ջերմութիւն, անձրև ու փայլուն արև:

Ի՞նչով եւ ի՞նչպէս կը պահուեն հացը:

15. Հ Ա Յ Ա Գ Ո Ր Ծ

Ես շատ կը սիրեմ հացատան դռնէն անցնիլ. պատու-
հաններուն առջև շարուած են կարմրուկ հացեր, համեղ բը-
լիթներ ու պաքսիմաթներ: Բայց ես կարծեմ թէ շատ կը
տաքնայ խեղճ հացագործն ահագին հնոցին առջև պտը-
տելով: Գիտեմ որ հացը կը թխեն ցորենի ալիւրէ: Ալիւրը
ջրով կը շաղեն, մէջը թթու խմոր-խաշ կը խառնեն, խմորը
տաք տեղ մը կը դնեն կամ լաթերով կը ծածկեն: Երբ խը-
մորը տաշտին մէջ կը բարձանայ, կը նշանակէ թէ քացխեր
է այն, այսինքն եղեր է: Այդ խմորը գնտածև կը կտրեն,
և այն գունտերէն կը շինեն հացեր ու բլիթներ զոր եր-
կաթէ տախտակներու վրայ շարելով՝ տաք հնոցին մէջ կը
դնեն ու կ'եփեն, կրակը մէկ կողմ հաւաքելէ և հնոցը լաւ
մը մաքրելէ ու սրբելէ ետքը:

Հացագործը շատ գործ ունի, ցորեկը բանելէ ՚ի զատ
գիշերն ալ կ'աշխատի, որպէս զի առաւօտուն կարենայ
թարմ հաց հանել:

Կարգաւ պահուեցէ՛ք թէ ի՞նչ նիւթ եւ ի՞նչպէս կը
պահուեն հացը:

16. ԱՌԻԻԾՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Առիւծը քնացած էր երբ Մուկը ցատքեց անոր վրայէն:
Առիւծն արթընցաւ և բռնեց զայն: Մուկը խնդրեց որ ար-
ձակէ զինքը և խոստացաւ որ սորա փոխարէն ինքն ալ բարիք
ընէ օր մը Առիւծին: Սա ծիծաղելով հանդերձ Մուկին վրայ
որ այդպիսի խոստում մը կ'ընէր իրեն, ազատութիւն շնոր-
հեց նմա:

Քիչ ատենէն որսորդք բռնեցին ու շղթայներով կապեցին

զայն ծառին : Մուկը լսեց Առիւծին մունչիւնները , վազեց անոր քովը , կրծելով կրծելով կտրաեց անոր շղթայները և յետոյ ըսաւ . « Մի՞տքդ է որ ծիծաղեցար վրաս երբ խոտացայ բարիք ընել քեզ : Այժմ կը հաւատա՞ս որ մուկերն ալ կրնան բարիք ընել : »

17. Զ Ո Ի Ր

Մկրտիչ գնաց գետին եղերքը , որ անտառին մօտէն կը հոսէր : Գարնան ժամանակ անտառին և դաշտերուն մէջ շատ ձիւն ժողվուած էր , ձիւնը կը հալէր և ջուրը գետին մէջ կը թափէր . ասով կ'աճէր այն և կ'ընդարձակէր : Իսկ այժմ տաք ու չոր ամառ էր և կարելի էր գետէն ոտքով անցնիլ : Մկրտիչ գիտեց որ գետին ջուրը չափազանց նուազեր էր , այնպէս որ յատակի բոլոր քարերն անգամ կ'երեւային . « Ո՞ւր գնաց այնքան ջուրը » , մտածեց Մկրտիչ :

Տե՛ս , Մկրտիչ , երկինքը նայէ՛ : Ի՞նչ կը կարծես , այդ ամպերը ուսկի՞ց առաջ եկած են : Եթէ անոնք լեզու ունենային , պիտի պատմէին քեզ անշուշտ թէ ի՞նչպէս շողիտնալով բարձրացեր են ճահիճներէն , բազմաթիւ գետերէն , լճերէն և ծովերէն , թէ ի՞նչպէս քամին զանոնք մեր կողմը կը քշէ և թէ ի՞նչ բաներու կը հանդիպին անոնք ճամբուն վրայ : Ահա կը հաւաքուին , միմեանց կը խառնուին , կը թանձրանան ու կաթիլ կաթիլ վար կը թափին և այն ջուրը , որ երկինք գացեր էր , դարձեալ ճահիճներուն , գետերուն , լիճերուն մէջ և ուրիշ տեղուանք կը թափի :

Առանց ջրոյ ամենափոքր միջատն անգամ չի կրնար ապրիլ , ամենափոքր բոյսն անգամ չ'է կարող աճիլ :

Անջուր տեղուանքը քար և աւազ միայն կ'երեւայ : Այդ տեղուանքը անպարտ կը կոչուին : Զուրն աղբիւրներու , ջրհոր-

ներու , գետերու , լճերու և ծովերու մէջ կը գտնուի . ծովի ջուրը դառն է և աղի : Գետերու և մէկ քանի լճերու ջրերը քաղցրահամ են : Ընտիր ջուրը պարզ և թափանցիկ կ'ըլլայ , ո՛չ հոտ կ'ունենայ և ո՛չ համ :

Զուրը տաքութեամբ կ'եռայ և գոլորչի կը դառնայ , իսկ ցրտէն կը պաղի , սառոյց կը դառնայ :

Գու՛ք ի՞նչպէս ջուրը կը խմէք . ջուրը ի՞նչպիսի սեղուանք կը գտնուի :

18. Կ Ր Ա Կ

Սիմոն դաշտ գնաց : Սաստիկ ցուրտ էր և անձրև կուգար . բոլոր մարմնով կը դողդղար նա : Սիմոն անտառը մըտաւ , չոր ճիւղեր ժողվեց , գրպանէն հրահանը հանեց , կայծքարին զարկաւ և կրակ վառեց : Անով տաքցաւ , հագուստները չորցուց և ցամաք հացի կտորը տաքցնելով կերաւ : Կրակին առջև նստած՝ Սիմոն կը մտածէր . « Ի՞նչ լաւ բան է կրակը . առանց անոր կարելի չ'է հաց թխել , ո՛չ կերակուր եփել և ո՛չ ալ ցրտէն պատսպարուիլ : Տե՛ս որքան դործ կը շինուին դարբնոցին ու գործարաններուն մէջ : Եթէ կրակը չ'ըլլար , մենք երկաթէն ի՞նչպէս պիտի շինէինք պայտեր , խոփ , կացին և ուրիշ շատ բաներ : Ճշմարիտ , թէ և երբեմն անկից վրաս կը կրենք , բայց ան ալ մեր անզգուշութեան , մեր յիմար անհոգութեան արդիւնքն է : Մենք արեգակէն ալ կը տաքնանք . նա ալ կրակի նման կ'այրի երկնից երեսը : Առանց արեգական բան մը չ'աճիր , ո՛չ դաշտին մէջ և ո՛չ անտառներուն ու պարտէզներուն մէջ , եթէ նա չ'ըլլար , բոլոր կենդանիք ու մարդիկ անօթութենէ

կը մեռնէին: Իսկ հիմա, Աստուծոյ ողորմութեամբ ապահով կ'ապրինք:

19. Դ Ա Ր Բ Ի Ն

Մեր քաղքին մէջ շատ դարբնոց կայ: Դարբնոցին մէջ մեծ հնոց կայ: Հնոցին մէջ շատ վառած ածուխներ կան, իսկ մէկ կողմը կախուած է մեծ փուք մը: Փուքին ետեւը մարդ մը կայ կեցած և շարունակ կը փչէ զայն որպէս զի հնոցին բոցը սաստկանայ:

Դարբինը երկաթին կտորը կ'առնու և հնոցին մէջ կը դնէ: Երկաթը կը տաքնայ ու կը կարմրնայ, յետոյ կը ճերմըկնայ ու կը փափկանայ: Դարբինը մեծ ունելիքով մը կարմրացած երկաթը հնոցէն կը հանէ, սալին վրայ կը դնէ, ծանր մուրճով կ'սկսի ծեծել զայն և ուզածը կը շինէ անով, պայտեր, դամեր, կայիններ և երկաթէ սունակներ: Դարբինը առջին կաշեայ գոգնոց մը կը կապէ, որպէս զի տաքցած երկաթի կայծերը չի կարենան զինքն այրել:

Դարբնոցը քաղքին մօտ կը շինեն և տանիքը հողով կը ծածկեն, որպէս զի կայծերէն չի բռնկի:

20. Օ Գ

Օդ տեսած ես դու. միշտ քու մօտդ է այն և դու զինքն չ'ես տեսներ: Բայց կարելի է ըսել թէ նա ի'նչպէս ձայն կը հանէ: Տեսնե՛նք. ահա քամին կը զողանչէ խողովակներու մէջ և սուլելով ներս կը մտնէ տան բոլոր բացուածքներէ. ապա պատուհանները կը փակէ այն և սաստիկ փոշի կը հանէ ճանապարհին վրայ: Եւ ի'նչ բան է քամին:

Նա օդն է որ կը շարժի, մէկ տեղէն միւս տեղը կը փախչի: Փախչելու ժամանակ որեւիցէ առարկայի կը զարնուի և կը լսուի աղաղակ և սուլմունք, երբ փողդ հնչեցնես կամ սրբինդդ չալիս և կամ մտրակդ շառաչեցնես, ամէն անգամ ձայն կը լսուի: Փորձի համար թղթէ պարկ մը շինէ՛ և փոքրիկ ծակ մը թողլով փչէ՛, ուռեցո՛ւր զայն, իսկ յետոյ ափովը խփէ այդ փչած պարկդ, սաստիկ ճայթիւն կը հանէ և կը պատուի: Սա այն օդն է զոր բերնէդ անոր մէջ լեցուցիր: Երբ վազես, կ'զգաս թէ ի'նչպէս օդը երեսիդ կը զարնուի: Կը նշանակէ թէ միշտ քեզի հետ է այն և դու անով շունչ կ'առնուս: Առանց օդի բոցէ մ'անգամ ապրիլ կարելի չ'է: Երբ ջրին տակը լողաս, չորս կողմը ջուրը կը պատէ: Օդն ալ այնպէս կը շրջապատէ զ'քեզ ցամաքին վրայ և եթէ զայն չ'ես տեսներ, պատճառն այն է որ շատ նուրբ է ու թափանցիկ: Օդը մինչև անգամ քու ներսիդիդ ալ կը մտնէ:

21. Հ Ա Գ Ն Ե Լ Ի Ք

Հագուստը կը շինեն քթանէ, ասուիէ, զանազան կերպամաներէ և կաշիէ:

Քթանէ կը կտրեն ճերմակեղէններ: Քթանը թելէ կը գործեն: Թելը կը մանեն կանեփէն կամ վուչէն: Կանեփը և վուչը կ'աճին դաշտերուն և պարտէզներուն մէջ:

Ասուիէ ապրանքները կը շինեն բրդէ թելի գործարաններուն մէջ: Բուրդը ոչխարներուն վրայէն կը ժողվեն:

Մետաքսեղէն ապրանքները մետաքսէ կը գործեն: Մետաքսը շերամները կը պատրաստեն:

Կոշիկները, բարակ մուճակները, հողաթափները և միւս օտնամանները՝ կոշկակարները կը կտրեն կաշիէ: Կաշեգործ-

ները կը պատրաստեն մաշկեղէն ապրանքները ձիու, եղան, ոչխարի և այծի մորթերէ:

Մուշտակները մուշտակավաճառք կը կարեն մազեղէններէ: Մազեղէնները թաւամազ գաղաններուն-արջին, աղուէսին և կղաքիսին-մորթերէն կ'ստանան:

Դուք ի՞նչ կը հագնիք: — Ո՞վ կը կարէ ձեր հագուստները եւ ի՞նչ բաներէ:

22. Դ Ե Ր Ձ Ա Կ

Հայրը ուզեց Վահանին համար ասուէ բաճկոնակ մը կարել տալ: Գերձակը եկաւ և անոր չափն առաւ: Տուն դառնալով գերձակը ասուին կտորը փռեց և կաւճով գծեց վրան բաճկոնին մասերը — մէջքը, կուրծքը, քղանցքը, թեւերը, օձիքը, ծալքը, խշտեկները: Յետոյ վեր առաւ մեծ մկրատը, բոլոր այդ մասերը կարեց և իր բանւորներուն տուաւ որ կարեն: Անոնք սկսան բաճկոնակին մէկ մասը միւսին հետ կարել և կարերը հարթուելով հաւասարցունել: Շաբաթէ մը ամէն բան աւարտած էր. կոճակները կպցուցած, լամբակները բացած, աստառած էին: Այս ամէնը լմնալէն ետքը, գերձակին աշկերտը մաքրեց զայն և առաւ իւր վարպետին, իսկ սա Վահանին տարաւ ու հագցուց: Բաճկոնակը խիստ յարմար եկաւ անոր: Վահանին հայրը վարպետին վճարեց ասուին, աստառին գինը և կարելու վարձքը. իր որդւոյն ալ դառնալով ըսաւ. «Բարով վայլե՛ս, զաւա՛կս, միայն թէ զգուշութեամբ պահէ, վասն զի սուղի նստաւ մեզ:»

Որո՞նք են բանկոնակին մասերը: Ո՞վ կը կարէ զայն եւ ի՞նչպէս:

23. Կ Օ Շ Կ Ա Կ Ա Ր

Կոշկակարը նախ և առաջ սաքին չափը կ'առնու: Այս չափին համեմատ փայտէ կաղապար կը շինէ: Մուր դանակով կը կտրէ նա կոշկին երեսը և ճիւղը, ջրի մէջ կը թրջէ զայն և կաղապարի վրայ կը գամէ: Երբոր կաշին չորնայ և կոշկի ձեւ առնու, այն ժամանակ կոշկակարը գամերը կը քակէ, կոշիկը կաղապարէն կը հանէ ու յետոյ նրբանը կը կպցնէ: Նրբանը եղան հասա կաշիէն կը կտրէ: Կոշկակարը ասեղով չի կարեր, այլ հերիւնով կը ծակէ, յետոյ այն ծակէն կ'անցունէ մոմած թելը որուն ծայրը, գիւրութեան համար, պնդացուցած է խողի մազ:

Նրբանը կարելէն ետքը, կոշկակարը կրունկը կը կպցնէ և շատ բեւեռներ գամելով կը պնդացնէ, յետոյ ճիւղերուն ականջները կը կպցնէ, կոշիկը կը սեւցնէ, կոշկաներկով կը սրբէ, կը փայլեցնէ և կը տանի զայն այն մարդուն որուն համար որ կարեց:

Որո՞նք են կօշկին մասերը. ինչո՞վ կը կտրեն եւ ի՞նչպէս:

24. Ս Ե Ղ Ա Ն Ե Ի Ա Ռ Ո Ւ

Սեղանը ատաղձագործը կը շինէ փայտէ: Սեղանն ունի երեսի տախտակ, արկղ և ոտներ: Երեսի տախտակը կա՛մ քառանկիւն կ'ըլլայ, կա՛մ կլոր:

Աթոռն ալ նոյնպէս ատաղձագործը կը շինէ փայտէ: Աթոռն ունի թիկունք, նստարան և ոտներ: Նստարանը կա՛մ հասարակ փայտէ կ'ըլլայ, կա՛մ ծղօտներէ և կա՛մ որ և իցէ պատառէ հիւստած:

Սեղանը արոտին հետ համեմատեցէ՛ք:

Ամանները կը շինեն փայտէ, կաւէ, ապակիէ, երկաթէ և պղնձէ:

Փայտէ կը շինեն գաւաթներ, տակառներ, տաշտեր, թափուրներ, շերեփներ ու դդաղներ: Տակառները կը շինեն տակառագործները, իսկ միւս ամանները՝ խառատները:

Բրուտները հասարակ կաւէն կը շինեն խեցեղէններ, ծաղկամաններ, կուժեր, սափորներ, սովորական գաւաթներ, պտուկներ, կարասներ: Աղէկ կաւէն գործարաններուն մէջ կը պատրաստեն պատուական ամաններ, գաւաթներ, պնակներ, թէյամաններ և սկուտեղներ:

Ապակիէն կը շինեն բաժակներ, շիշեր:

Երկաթէն, պղինձէն և թիթեղէն կը շինեն մեծամեծ կաթսայներ, սրճամաններ, չափեր ու կթոցներ...:

Պղնձագործները պղնձէն կը շինեն հեշտաեռներ, կաթսայներ, գաւաթներ, տապկոցներ, կթոցներ, կուժեր, շերեփներ ու չափեր:

Կլայեկները պղնձէ ամանները կը կլայեկեն: Առանց կլայեկի ամանը թունաւոր կանաչով կը ծածկուի:

Ամանները ի՞նչ նիւթ կը շինեն: Ի՞նչ ամաններ կը շինեն փայտէ, կաւէ, ապակիէ եւ պղինձէ:

Թէ՛ շինին և թէ՛ գիւղին մէջ գեղջկական շատ տունեկան: Եննին մէջ տները շատ կ'ըլլան և ունին իրենց համա մէկ կամ քանի մը եկեղեցիներ: Գիւղին մէջ տները սակաւ թիւ կ'ըլլան և մէկ եկեղեցի մը միայն կ'ունենան: Թէ՛ շինի և թէ՛ գիւղին մէջ փողոցները քիչ են և եղածն ալ ծուռ ո մուռ է: Հայ գիւղերու տները փոքր են. առ հասարակ գիւ

ղացին իւր խորճիթին մէկ մասը գետնին տակ կը շինէ և շատ անգամ պատերն ալ հասարակ ցեխով կը ծեփէ: Քարաշէն տուններ հազուադիւրս են գիւղերու մէջ: Գիւղացին իւր խորճիթին կատարը կը ծածկէ հողով: Գիւղին մէջ կան կալապաններ, կաւեր, անասնոց սրահներ, պարտէզներ և այգիներ: Այգիները սովորաբար ցանկապատ կ'ըլլան: Գիւղին փողոցներուն մէջ կը պատահի քեզ գիւղացին որ սայլին գլուխը նստած, գաւազան մը կամ երկար մտրակ մը ձեռքն առած, իւր եղն ու գոմէշը կը քշէ. շատ անգամ կը տեսնես որ գերանդին ուսին վրայ, մանդաղն մէջքն անցուցած, կա՛մ հունձքի կ'երթայ նա և կա՛մ հունձքէն կը դառնայ, հողը կը հերկէ կամ ցանք կ'ընէ, իսկ ձմեռ ատեն նոյնպէս սայլերով բեռ կը կրէ: Գիւղին և շինին բնակիչները գլխաւորապէս երկրագործութեան և անասնապահութեան կը պարապին: Բայց կան այնպիսի շէններ ալ որոնք աւելի քաղաքակրթութեամբ են և ունին շատ գործարաններ. այդպիսի շէնները քիչ-քիչ կը կոչուին: Գիւղաքաղաքի տուններն աւելի գեղեցիկ են. հոն ցեխապատ տներէն ի զատ, քարաշէն բնակարաններ ալ կը տեսնուին:

Ամէն մէկ նահանգի մէջ կան շատ գիւղեր և աւաններ, բայց նահանգական քաղաքը մէկ հատ է: Քաղաքին տները քարէ են կամ փայտէ և ծածկուած են հողով, տախտակով կամ երկաթով: Այն տեղ չի կան ո՛չ կաւեր և ո՛չ կալապաններ, բայց շատ կրպակներ կան. տներուն առջև ոչ թէ ցանկ քաշուած է, այլ պատնէշներ կամ վանդակապատներ: Մեծամեծ քաղաքաց փողոցները քարով հարթուած են և անոնց երկու կողմը սալապատակ կան: Քաղաքներուն մէջ կը պատահին


քեզ զանազան տեսակ կառքեր որոնցմով մարդիկ կը շրջա-
 գային: Քաղքին մէջ քանի մ' եկեղեցի կ'ըլլայ, որոնցմէ մին կը
 կոչուի Մայր-Եկեղեցի: Քաղքին բնակիչները արուեստներու,
 վաճառականութեան և արեւտուրի կը պարապին: Քաղաքներ
 ալ կան որոց շրջակայքը շատ գործարաններ կը գտնուին:

Ձանազան տեսակ քաղաքներ կան, գաւառական, նա-
 հանգական և արքայանիստ: Արքայանիստ քաղաքները կը
 կոչուին Մայրաքաղաք:

28. ՄԱՐԴՍ ՈՐՔԱՆ ՀՄՈՒՏ Է

Գիշատող գազանն իրեն համար որջ կը շինէ անտառին
 մէջ, թռչունը բոյն կը կազմէ, միջատն ալ ծառին մէկ ճեղ-
 քին մէջ կը տեղաւորուի: Բայց անոնց ամենքն ալ ցրտին դէմ
 իրենք զիրենք կը պաշտպանեն, որն՝ իւր սեպհական բուր-
 գով, միւսը՝ փեարով, իսկ երրորդը՝ հասա վերնամաշկով:
 Մարդս այդ բնատուր զգեստները չ'ունի, բայց ունի խելք
 որոյ օգնութեամբ ամէն բանի ճարը կը գտնէ: Նա անտառը
 կ'երթայ, ծառը կը կտրէ, անոնցմով իրեն համար տուն կը
 շինէ: Հողին տակէն երկաթ կը գտնէ որով կը շինէ իրեն հա-
 մար կային, բահ, արօր և այլ գործիներ: Նա կարող է կա-
 ւէն աղիւս պատրաստել և իրեն համար տուններ շինել: Իւր
 խրճիթին բացուածքը, երբեմն ալ պատերու ծակախրքը կը
 գոցէ մամուռով որ անտառին մէջ կը բուսնի և օգուտ մը
 չ'ունի հոն: Տունը տաք է, բայց լոյս ալ պէտք է, և ահա
 նա լեռներէն կը գտնէ տափանցիկ պտկարդ, կամ աւազը
 հալեցնելով ապակի կը շինէ: Պտկարդը կամ ապակին լու-
 սամուտին վրայ անցուելով՝ լոյսը թափանցել կուտան, ար-
 դիւնելով հանգերձ որ քամին անէն ներս չի մանէ: Բայց ան-
 ախորժ եղանակին մարդս անէն ի՞նչպէս դուրս ելնէ: Անոր

համար նա վուշ ու բամպակ կը ցանէ, անոնցմով թել կը
 մանէ, քթան կը գործէ և շապիկներ ու բաճկոններ կը կտրէ,
 այծի և ոչխարի բրդէ շալեր ու ասուիներ կը գործէ, գա-
 զաններուն մորթերէն ալ իրեն համար տաք մուշտակներ կը
 պատրաստէ: Այսպէս մարդս ամէն տեսակ նեղութեանց ժա-
 մանակ կարող է ինքն իրեն օգնել իւր հմտութեամբ:




29. ԻՆՉՊԷՍ ԿԸ ՔԱԼԷ ՄԱՐԴՍ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ

Մարդս թէև շատ կամայ չի քալեր, սակայն և այնպէս իր
 երկու ոտքերով ալ շատ հեռու չ'է կարող երթալ: Բայց Աս-
 տուած ՚ի զուր խելք տուած չէ մարդուս: Սա տեսաւ որ ձին
 իր չորս ոտքերով արագ կ'ընթանայ, տեսաւ և յաջողեցաւ
 անոր մէջքին վրայ նստիլ, թամբ հնարեց, բերանը սանձ
 անցուց և իր կամայ համեմատ սկսաւ վարել զայն: Այս բա-

ւական չ'է, յետոյ մտածեց կառքեր և բալխիրներ ալ շինել: Հիմա դիւրութեամբ հարիւրաւոր մղոն տեղ կ'երթայ օրը և ինք ամենեւին չի հոգնիր: Չիուն հող հերկել և բեռ կրել կուտայ:



Բայց մարդս մինակ ձիուն վրայ չ'իշխեց: Նա իրեն հնազանդեցուց հաստապարանոց եզը, ուժեղ դոմէշը, երկարոտն ու կուտկէնաւոր ուղտը և թեթեւագնաց եղջերուն:



Այս բաւական չ'է, ահագին փղին վրայ ալ հեծաւ նա և իբրեւ ճանճ մը անոր վրայ նստելով, սկսաւ մուրճով ծեծել անոր գլուխը եւ ուղած կողմը քշել:

Մարդս տեսաւ որ շիտակ ճամբուն վրայ անիւներն աւելի դիւրութեամբ կը դառնան, ուստի սկսաւ սայլի մեծամեծ ճամբայներ շինել և խճուղիներ ձգեց:


30. ԽՃՈՒՂԻ ԵՒ ՈՒՂԻ

Ո՛ր դու ընդարձակ և մեծ ճանապարհ,
Աշխարհիս վրայ քիչ տեղ չ'ես բռնած.
Մինչ հեռուն կ'երթաս, ուղիդ որպէս լար
Եւ իբրեւ նկար լայնութեամբ փռուած:
Մանրած քարերու, ոտից թշնամի,
Չափով ես չափուած, գին ես քրրտինքի:
Ամէն մէկ քայլիդ բանին մշակներ,
Լեռներ կը կտրեն, ձգեն կամուրջներ,
Բայց և քո քովէն, սակաւ մի հեռի
Չգուած է նոյնպէս մի փոքրիկ ուղի:
— Ուղի՛ դու, ուղի՛, ո՞ւր կ'երթաս այդպէս.
Ունի՞ս մի անուն, թէ չ'է՞ անկոչ ես:
Կ'երթաս կ'երկննաս, չափ չ'ես հարցըներ,
Կ'անցնիս դեռ ու սար, ձորեր ու փոսեր.
Ըզքեզ չեն հարթեր բահով ու թիով,
Չ'են պնդացըներ մանրած քարերով.
Դու ոտքի համար իրա՛ւ փափուկ ես,
Բայց հովի ատեն փոշիով առատ ես:

31. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՉՈՒ

Մարդս անբաւական համարեց ձիով ու սայլակով ճամբորդելը թէ՛ ճամբէն և թէ՛ խճուղիներէն. սկսաւ մտածել, ուրիշ ճար գտնել, և հնարեց երկաթաբեկ:

Մարեր քանդեց, դաշտերը հաւասարեցուց, կամուրջներ ձգեց և սլաքի նման ուղիղ ճանապարհ շինեց, այնպէս որ կարծես թէ կտոր մը կոտորէր փռուած: Այս կտաւին վրայ կը ձգէ նա երկաթէ շաւիղներ, իսկ շաւիղներուն վրայ կը դնէ երկաթէ մեքենայ մը որուն մէջ կայ հնոց, կաթսայ և ծխահան ինչպէս հեշտաեռին մէջ: Հնոցին մէջ փայտ կամ ասփալտ կը դնէ, անով ջուրը կ'եռայ և շոգւոյ զօրութեամբ մեքենայն կը դլորի առանց ձիու, բայց ա'յնքան արագ որ մարդս ո'չ մէկ ձիով կարող է անոր ետեւէն հասնիլ. մէկ ժամուան մէջ 50 փարսախը կ'անցնի նա, մէկ օրուան մէջ 1000 փարսախ: Շոգեմեքենայն կը թռի երկաթուղոյն վրայէն, կը ճչէ, կը սուլէ, երբէք չի հոգնիր, միայն իջեւաններէն փայտ և ջուր կ'առնու: Իւր ետեւէն կը քաշէ նա բազմաթիւ շոգեկառքեր որոց մէկ քանիին մէջ նստած են հարիւրաւոր մարդիկ և լուսամուտէն դուրս կը նային, իսկ միւսներուն մէջ ա'յնքան ապրանք լեցուած է որ մարդ կը զարմանայ:




32. ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մփռած կտաւ է և ո'չ թէ ուղի,
 Ձին ալ մի ձի չ'է, հարիւր ոտք ունի,
 Կը վազէ արագ, այդքան ծանրութիւն
 Մինակ կը տանի զերթ թեթեւ թռչուն.
 Ոչ թէ կը տանի, այլ ճիշդ կը թռչի,

Ո'չ կանգ կ'առնու նա և ո'չ կը յոգնի,
 Միայն ճչելով, բարձրը սուլելով,
 Ժամուան մէջ կ'երթայ յիսուն ժամուան տեղ:

Երկրս վրայ ի՞նչպէս նամբորդութիւն կ'ընեն առանց ձիու:



33. Ի՞ՆՉՊԵՍ ԿԸ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԵՆ ՋՐԻ ՎՐԱՅ

Լողալու մէջ ալ մարդս շատ կարող չ'է. որչափ որ սովորի, խեղդեանի պէս կարող չ'է լողալ, ո'ւր մնաց ձկան նման: « Այս լաւ բան չ'է », մտածեց մարդը, փայտով նաւակ շինեց, թիակը ձեռք առաւ և ջուրը մտածելով սկսաւ յառաջ երթալ:


Մարդս ասկից ալ շուտով զգուեցաւ. « Ի՞նչ բան է այս, կը թիավարես, կը թիավարես, բայց քայլ մը հեռու չ'ես կարող երթալ: » Ի՞նչ պէտք էր ընել: Մարդս սկսաւ մտածել և տեսաւ որ ծովուն վրայ գրեթէ շարունակ քամի կը փչէ, բայց պարապ կ'երթայ. « Ինչո՞ւ զուր տեղը կորսուի այն, բսաւ. ճամբուն վրայ սաստիկ փոշի կը հանէ, ծովուն վրայ ալիքներ կը բարձրացնէ, երկնքէն ալ ամպեր կը հալածէ, ուրեմն ստիպեմ զինքը որ ինձ ալ ծառայէ: » Եւ մարդս ձեռք առաւ կտաւը, սաստիկ շինեց, քամին ալ

զայն ուռեցնելով, յառաջ մղեց թէ՛ փոքրիկ և թէ՛ մեծ նաւերը: Մարդս քամին ալ լծեց այս կերպով, բայց ո՛չ մտրակ կար ձեռքը որ զայն քշէր, ո՛չ սանձ կար որ կեցնէր, ո՛չ ալ կապեր ունէր որ կառավարէր զայն:

34. ՆԱԻ

Փամին ծովուն երեսէն
Ծիծաղադէմ կը ձեմէր
Եւ կը մղէր դէպ յառաջ
Թէ՛ փոքր և թէ՛ մեծ նաւեր:

Իսկ նաւերը ճօճալով
Ալեաց հետ կը խաղային
Եւ իրենց լայն թեւերով
Բէպ ՚ի յառաջ վաղէին:



35. ԶՐԻՆ ՎՐԱՅ ԱՆԻԻՆԵՐ

Եթէ քամին մեղ հնազանդէր, աղէկ կ'ըլլար առադաստաւոր նաւով երթալ, բայց բանն այն է որ դու դէպ ՚ի հարաւ գնալ կ'ուզես, իսկ նա դէպ ՚ի հիւսիս կը տանի ըզքեզ. դու այսօր ճամբայ ելնել կ'ուզես, իսկ նա կ'ըսէ.

« Վաղրուան սպասէ՛, այսօր ես հանգստանալ կ'ուզեմ: » Դու ծանր երթալ կը փափագիս, իսկ նա քու նաւդ տաշեղի նման այս ու այն կողմ կը գլորէ և տալն ու վրայ կ'ընէ:

« Ո՛չ, աղէկ բան չ'է այս, մտածեց մարդը. շողին թէ և քամին ծանր կը քշէ, բայց և այնպէս կը հնազանդի: » Եւ նաւերուն տակ անիւններ դրաւ, շողին ալ շարժեց զանոնք և սկսան ջուրին վրայ երթալ այնպէս ինչպէս ցամաքի վրայ: Ասոր համար մարդս նաւուն մէջ հնոց է շինած, կը վառէ զայն, ջուրը կաթսայի մէջ կ'եռացնէ, ծուխը խողովակներով վեր կը բարձրացնէ, իսկ շողիով անիւնները կը շարժէ և դէպ յ'իւր ուղած կողմը յառաջ կը տանի նաւը:

Ի՞նչ օգուտ ունին շոգեմաւններ:

36. ԶԱՐՄԱՆԱԼԻ ՄՇԱԿ


Կը ճռնչէ բազմավաստակ մեքենան,
Շատ լիսեռներ և անիւններ հազար կան,
Որք կը դառնան կը ճռնչեն, կը ճչեն,
Սակայն զանոնք շարժեցնող մարդիկ չեն.

Շողին կարծես գերբընական հրամանով
Միշտ կը շարժի իրեն բոլոր շտապով.
Աշխատասէր մշակի պէս կը գործէ,
Ամէն տեսակ բամբակ և բուրդ կը մանէ:


Փող կը կտրէ, կը սղոցէ գերաններ,
Թէ հարկ ըլլայ՝ ապակիներ կը տաշէ.
Նա կենդանեաց կաթէն ալ իւղ կը հանէ
Եւ մինչև կարծր պողպատն իսկ կը յղկէ:

37. ՄԱՐԳԻԿ ԻՆՉՊԷՍ ԿԸ ԹՈՉԻՆ ՕԳԻՆ ՄԷՋ

Մարդս ծովու և ցամաքի ճամբորդութիւնը դիւրացնելէ ետքը, սկսաւ նախանձիկ երկնից թռչուններուն: Բայց Աստուած թեւեր չ'էր տուած իրեն, ուրիշէն ալ փոխ առնուլ կարելի չ'էր ի՞նչ ընէ:



Շատ կը ցանկար օդին մէջ թռչիլ, բարձրէն աշխարհս դիտել. այն ատեն ա'լ հարկաւոր չ'պիտի ըլլար սարերը ճեղքել, ճամբայներ շինել. չորս կողմը լայն ճամբայ է արդէն: Մարդն սկսաւ սովորիլ և մտածել: Մտածեց, մտածեց և բան մը հնարեց վերջապէս-Օդայարիկը: Մեծ ու դասարկ գունտ մը շինեց, տակէն նաւակ մը կապեց, մէջը նոտաւ ու վեր բարձրացաւ: Իւր ոտքին աակ կը մնան ահագին անտառներ, սարեր ու ձորեր, սրաթեւ արծիւներ, անձրեւոտ ամպեր: Բայց ափսո՛ս որ մէկ բան մը զինքը կը խանդարէր. անսանձ քամին այս տեղս ալ իւր չարութիւնը յայտնեց, սկսաւ օդուն մէջ աւելի նեղացնել մարդս. քան թէ ծովուն վրայ, քչե՛ց, տարա՛ւ զայն ուր որ կամեցաւ, կարծես բանի տեղ չ'էր դներ մարդս, և սա մինչեւ այսօր չ'է կրցած քամին կառավարել: Բայց հաւանական է որ ասոր ալ մէկ ճարը պիտի գտնէ:



38. ՆԱՊԱՍՏԱԿԸ ԵՒ ՈՋՆԻՆ

Սպիտակ և քնքոյշ նապաստակն ըսաւ Ոջնին. «Եղբա՛յր, ի՛նչ ծակծկող ու ագեղ զգեստ ունիս: — Ճշմարիտ է, պատասխանեց Ոջնին, բայց իմ՝ ծակծկող փշերս զիս շան ու գայլին սկուայներէն կ'ազատեն. արդեօք նոյն ծառայութիւնը կը մատուցանէ՞ քեզ քո գեղեցիկ մուշտակը:»

39. Փ Ի Ղ

Հնդիկին մէկը Փիղ մ'ունէր զոր շատ գէշ կը կերակրէր և որոյ հետ շատ գէշ կը վարուէր: Օրին մէկը բարկացաւ Փիղը և սպաննեց իւր տէրը իւր ոտից ներքև: Հնդիկին կի-

նը, արտասուլթորմ, բերաւ իւր որբ մնացած զաւակները
 և նետեց զանոնք Փղին ոտիցը առջև. « Փի՛ղ, դու սպան-
 նեցիր սոցա հայրը, զիրենք ալ սպաննէ՛ այժմ », ըսաւ նա :
 Փիղը կարեկցութեամբ նայեցաւ տղեկներուն, յետոյ կնճի-
 թովը վերցուց ամենէն մեծը, զգուշութեամբ նստեցուց
 զայն իւր վզին վրայ և այնուհետև սկսաւ հնազանդել նմա
 որպէս իւր օրինաւոր տիրոջը :

40. ՄԱՐԳԸ ԵՒ ՀԻԷՇԸ

Ա.

Շատ տարի առաջ հին ժամանակը,
 Երբ հրաշքներով լի էր աշխարհքը,
 Իւր զաւակացը և ամուսնոյն հետ
 Պարզ առուտուրով կ'ապրէր Մարգ մ'համեստ :
 Ուրախ և զուարթ էր նորա կեանքը,
 Պատճառ՝ միշտ ոսկւով լի էր քսակը :
 Բայց բաղդը յանկարծ երեսը դարձուց
 Եւ մեր խեղճ մարդը զամէնն կորսնցուց,
 Ուրախ կեանք ու փառք և հարստութիւն
 Եւ նոցա հետ ալ քաղցր առողջութիւն :
 Ծանր հիւանդացաւ, ընկաւ անկողին,
 Ոյժ և զօրութիւն իրմէ խոյս տուին .
 Կարող չ'էր անգամ ոտքի վրայ կենալ
 Մինչև որ կինը իրեն ձեռք չի տար :
 Յաւերով լցուած, խեղճ կինն այն առեւ
 Սկսաւ կերակրել ընտանիքն ամէն,
 Գիշեր ու ցօրեկ պէտք էր աշխատէր

Որ իւր որդիքը սովէն ազատէր :
 Օր օրի վըրայ այսպէսով անցան,
 Վերջապէս կինըն իսպառ ձանձրացաւ .
 — « Ի՞նչ կեցեր ես հող, կ'ըսէր իր մարդուն,
 « Գլխուս ցաւ կուտաս, խըլեցիր իմ քուն .
 « Մինչև ցե՞րք պէտք է չարչարուիմ այսպէս,
 « Կեանքըս մաշելով կերակրեմ ըզքեզ .
 « Մարդ ես, վեր ելի՛ր, գլուխդ քարին տո՛ւր
 Եւ որդւոցդ համար ճարէ՛ կերակուր : »

Պատասխան տուաւ խեղճ հիւանդ Մարդը .
 — « Բաւական է իմ դառն վիշտը .
 « Երբ հարուստ էր, ձեզ խնայեցի՞ .
 « Առողջ ժամանակս ե՞րբ ծոյլ մնացի .
 « Իսկ այժմ աղքատ եմ, մարմնով տկար,
 « Խղճա՛, մի՛ տանջեր ա՛լ զիս անդադար : »

Բայց կինը երկար ա՛լ չի համբերեց
 Եւ հիւանդ Մարդը տունէն դուրս վանեց .
 — « Գնա՛ ուր կուզես, գլխէս հեռացի՛ր,
 « Դու իմ խեղճ անձըս շատ չարչարեցի՛ր .
 « Որչափ ալ որ լաս և զիս ազաչես,
 « Ա՛լ ներս չ'եմ թողուր քանի աղքատ ես :
 — « Լա՛ւ, ըսաւ Մարդը ձայնով տխրադին .
 « Երթա՛մ կորսուիմ, ո՛վ դու անդուժ կին,
 « Բայց խընդրեմ տո՛ւր ինձ մաս մը չոր հացի
 « Որ չ'ըլլայ մեռնիմ ճամբան անօթի » :

Բ.

Կինը դուրս բերաւ, առաւ երկու հաց,
 Եւ մեր խեղճ Մարդը հեռացաւ գնաց,

Իւր անգուլթ բաղդէն զուր գանգաակելով,
 Թողուց քաղաքը անհաստատ քայլով:
 Ինքն ալ չէր գիտեր ո՞ւրսկից երթար, ո՞ւր,
 Միայն յառաջէր տըրտում ու տըխուր.
 Վերջը կանգ առաւ, քարի մը վրայ
 Նըստաւ որ սակաւ ինչ հանգստանայ:

Այն անդ նկատեց որ ճամբուն մտախի
 Իրմէ ոչ հեռու ինկած էր նեղկիկ՝
 Մի մտղէ հիւսուած երկար սև պարան
 Զոր վէր առաւ նա և ըսաւ զայս բան.
 — « Գիտեմ ըստ ինքեան մի չնչին բան է,
 « Բայց խեղճիս համար շատ թանկագին է: »

Այսպէս ըսելով պարանը փաթթեց
 Եւ գանձի մը պէս ծոցին մէջ պահեց:
 Յետոյ սակաւ ինչ հացով ու ջրով
 Իւր տկար մարմնոյն զօրութիւն տալով,
 Նորէն ոտք ելաւ, շունչ եկաւ վրան,
 Սկսաւ նա յառաջ տանիլ իւր ճամբան:

Այսպէսով անցաւ նա բաւական տեղ,
 Մինչև որ հասաւ մի աղքատիկ գեղ
 Ուր մէկ կողմ քաջուած տեսաւ շատ հաւեր
 Որոնցմէ մէկը հանդարտ նստած էր
 Տաք աղբի վրայ և կ'ածէր հաւկիթ:
 Մեր խեղճ մուրացկանն ալ գրաւ իւր միտք
 Որ բունէ գանձնք ու հետը տանի,
 Փոքրիկ շահով մը ծախէ ի քաղքի,
 Այս մտքով ահա նա կամաց կամաց
 Զու դնող հաւին զգոյշ մտա գնաց.
 Բայց հազիւ այն կողմ ձեռքը երկնցուց,

Յանկարծ թռաւ հաւն ու մէկ ձու թողուց.
 Իսկոյն վեր առաւ ձգուած ձուն Մարդը,
 Գրպանը գրաւ, օրհնեց իւր բաղդը.

— « Օհ, փա՛ռք Աստուծոյ, ըսաւ ինքիրեն,
 « Մէկ հաւի ձուն ալ շնորհ մ'է երկնքէն »:

Գեռ առաջ գնաց մի քիչ ժամանակ,
 Վերջապէս տեսաւ փոքրիկ մէկ գետակ
 Որ դուրս կը բղխէր մտախի յ'անտառաց՝
 Մերթ փըրփըրալից, մերթ հանդարտընթաց:
 Յոգնած, վատտակած մէր մեղաւորը
 Շատ ուրախացաւ երբ տեսաւ ջուրը.
 Իսկոյն մտա դնաց որ պարզ ցուրտ ջրով
 Փոքր ինչ զովանայ, մէջը լողալով:
 Զրի աւազի ափերուն վերայ
 Ժողովուած էին մի քանի կրիայ.
 Մօտեցող Մարդը երբ նորա տեսան,
 Շուտով վազեցին ջուրը նետուեցան:
 Այլոց պէս շուտով հասնիլ ջրին մտա
 Զի յաջողեցաւ մի կրիայ երկչոտ.
 Մարդը մերձեցաւ, զայն գեանէն ժողվեց
 Եւ իւր գրպանի մէջ հիւրընկալեց:
 Երբ լաւ մը լողաց, հանդերձներն հագաւ
 Ու զուարթ գէմքով անտառը մտաւ
 Որ շատ հեռի չէր, և ժամուան մը մէջ
 Արդէն անցած էր ուղիք, ելեւէջ:

Գ.

Շատ գնաց թէ քիչ, վերջապէս նստաւ
 Աղբիւրի մը մտա, խորհիլ սկսաւ
 Թէ ի՞նչպէս ընէ որ իւր խղճալի

Եւ անբաղդ վիճակն ուղղէ մի կերպի :
 Յանկարծ դղրդաց անտառը բոլոր,
 Արձագանք տուին հովիտք՝ ահաւոր
 Եւ հանդէպ լեռան, սև մութ այրերէն
 Դուրս ելաւ մի Հրէշ որ հին դարերէն
 'ի վեր կ'ապրէր հոն, լափէր, սպաններ
 Ով որ այն տեղէն անցնէր անվեհեր :
 Դուրս ելաւ Հրէշն այրէն գոռալով,
 Խեղճ մարդուն սիրաբ լեցուեցաւ դողով :

— « Հազար բարի քեզ, ո՛ համեղ կտոր
 « Ձոր պիտի լափէ իմ պատուական փոր .
 « Արդէն կը լինի մի ամբողջ ամիս
 « Որ չեմ կերած ես մարդու անոյշ միս :

— « Այդ ի՞նչ խօսքեր են, գարշելի՛ գաղան .
 « Դեռ կը յանդըգնի՞ս բանալ ըզբերան :
 « Ուրեմն կեցի՛ր հող, հիմայ կը տեսնես
 « Որ մէկ զարնելով մարմինդ երկու կէս
 « Կ'ընեմ : » Եւ անվախ մօտ գնաց Հրէշին,
 Բարկութեան կայծեր ժայթքելով դէմքին :

— « Ո՛չ ոք մինչև ց'այժմ, գոչեց չար գաղանն,
 « Համարձակած է ըսել այդպէս բան
 « Ինձ՝ որու ձեռքէն դեռ մինչև ց'այսօր
 « Ազատ չ'է մնացեր ոչ մէկ մեղաւոր :
 « Բայց որովհետև մեծ մեծ կը ջարդես,
 « Արի՛, մեր ոյժը փորձե՛նք դու և ես :
 « Ե՛կ գօտեմարտի՛նք, ով որ յաղթուի՛
 « Թո՛ղ նա յաղթողին կերակուր լինի :

— « Թէպէտ այդ կերպով ես քեզ կը յաղթեմ,

« Գլուխդ գետնին մէջ խրել լաւ գիտեմ,
 « Բայց կարող եմ և ուրիշ աւելի
 « Հասարակ կերպով յաղթել, գարշելի՛ :
 — « Լա՛ւ, համաձայն եմ, ցոյց տո՛ւր շքնորհքդ
 « Եւ իսկոյն և եթ կատարէ՛ խօսքըդ :

— « Ինչո՞ւ կ'ըշտապես, գոչեց անվախ Մարդն .
 « Երեք բան ըսեմ, անոնցմէ մէկ հասն
 « Թէ ընես, յայժամ քեզմէ յաղթուած եմ,
 « Իսկ թէ որ չ'ընես, գլուխդ ջախջախեմ :
 « Մէկ մազ ես հանեմ, մէկ մ'ալ դու հանէ՛,
 « Չափե՛նք ու տեսնե՛նք ո՞յր մազ երկայն է
 « Եւ ո՛վ որ մենէ երկայն մազ ունի,
 » Թո՛ղ մեր մէջը նա յաղթողըն լինի :
 « Թէ որ կարող ես ինձ պէս չոր քարէն
 « Դոյն գոյն ջուր քամել, ես քո գերին եմ :
 « Ոյր մարմնոյն վրայէն միջատ թէ ելնէ՛
 « Թո՛ղ նա միւսին գլուխը ջախջախէ :

— « Լա՛ւ », ըսաւ Հրէշն ու մի մազ հանեց
 Եւ ուրախութեամբ Մարդուն ձեռքն յանձնեց :

— « Ա՛յդ է », ըսաւ սա և հանեց ծոցէն
 Սև մազով հիւստուած պարանը մէկէն :
 Հրէշն երբ տեսաւ երկայն պարանը,
 Ահէն զարմանքէն բաց մնաց բերանը .
 Բայց իսկոյն և եթ նորէն սիրտ առաւ
 Կատաղութենէն քար մը վեր առաւ
 Եւ երկու ձեռքով այնպէս պինդ սեղմեց
 Որ աւազի պէս զայն իսկոյն փշրեց :
 Մարդն ալ բարձրացուց մէկ քար իւր կողմէն,

Հըրէչէն ծածուկ հանեց գրպանէն
Հաւէն խըլած ձուն, և սեղմելուն պէս՝
Երկու հիւթ ելան գոյներով պէս պէս:

— « Այս երկու փորձով, գոչեց Հրէչը,
« Յաղթեցիր դու ինձ, ցոյց տո՛ւր երրորդը » :
Մարդը դուրս հանեց գրպանէն կրիայն.

— « Ահա՛ միջատըս, ըսաւ, գա՛րչ գազան.
« Յոյց տո՛ւր ինձ իսկոյն միջատ մ'ասոր պէս,
« Թէ ոչ, գլուխըդ կ'ընեմ երկու կէս:
« Ո՛ւր կը փախչիս, ո՞ւր, չէ՛, կա՛ց, սիրելի՛,
« Կա՛ց որ ընդունիս մահ սարսափելի.
« Բայց լա՛ւ իմացի՛ր ո՞ւր որ ալ երթաս,
« Ձեռքէս անվընաս չը պիտի մնաս » :

Իրաւ Հրէչը սաստիկ զարմացած
Այս ծանր գէպերէն, փախաւ ու գնաց.
Մարդն ալ այս կ'ուղէր. ուրախ մտաւ այրը
Անցաւ մէկ ծայրէն մինչև միւս ծայրը,
Տեսաւ արկղներ լի ոսկով, արծաթով,
Գոյն գոյն ապուրջով, մարդարիտներով.
Ախոռներուն մէջ պէս պէս քաջ ձիեր
Պատրաստ էին զ'իւր տանիլ հարուստ բեռ :
Պարապ ժամանակ ա՛լ չը կորսնցուց,
Գաած գանձերը կենդանեաց բեռցուց,
Գուրս ելաւ այրէն, փառք ետ Աստուծոյն
Եւ կը պատրաստուէր երթալ դէպ 'ի տուն,
Երբ հեռուստ տեսաւ Հրէչը դարձեալ,
Որ Ազուէս մ' 'ի յուս գէպ յ'այն կողմ կուգար :

Բայց թո՛ղ նախ պատմեմ թէ ինչպէ՞ս եղաւ
Որ Հրէչն յանկարծ կրկին ետ դարձաւ :
Մարդէն խոյս տալով, կարճ միջոցի մէջ
Հասաւ հեւալով մինչ անտառի վերջ,
Ուր դէմը ելաւ մի կաղոտն Ազուէս
Որ քարեւ տալով խօսեցաւ այսպէս.

— « Ողջո՛յն քեզ, ողջո՛յն, իշխա՛ն ահաւոր,
« Գու մեր անտառի հըզօր թագաւոր,
« Բայց, ըսէ՛, ինչո՞ւ այդքան տրտում ես.
« Կը խնդրեմ վիշտըդ ծառայիդ յայանես,
« Գուցէ կարենամ օգտակար ըլլալ
« Եւ քու արտմալթեանդ շուտով վախճան տալ » :

Հրէչն համառօտ մի քանի խօսքով
Պատմեց Ազուէսին թէ ի՞նչ փորձանքով
Ստիպուած էր փախչիլ, թողուլ տուն և տեղ,
Յաղթուած մի Մարդէ՛ իրմէ շատ զօրեղ :
— « Այս ի՞նչ կը լսեմ, գոչեց Ազուէսը,
« Թոյլ անզօր մէկէն վախնա՛յ քեզ պէսը,
« Տուն տեղը թողո՛ւ, փախչի՛ ու երթա՛յ.
« Ի՞նչ պիտի ըսէ երբ մէկն իմանայ :
« Հաւատա՛ ինձ, տէ՛ր, նա քեզ խաբեր է,
« Իւր հնարքներով աչքդ կապեր է.
« Ե՛կ, դու լսէ՛ ինձ, ետ դարձիր իսկոյն,
« Թշնամիդ այդպէս մի՛ թողուր 'ի բոյն :
« Մինչ ժամանակ կայ, շուտ ըրէ՛, երթա՛նք,
« Գիտեմ, պատուական ընթրիք կ'ունենանք.
« Ես շատ կը ցանկամ մարդու միս ուտել,
« Քանզի այս ոտքըս մարդիկ են կոտրել » :

Աղուէսի խօսքերն Հրէչն լսելով
 Իսկոյն ետ դարձաւ և արագ քայլով
 Վազեց դէպ 'ի այր. բայց քիչ ատենէն
 Աղուէսն ետ մնաց, խնդրեց Հրէչէն
 Որ հոն չը' թողու իւր տկար ծառայն,
 Շատ ծանրը բեռ չ'էր, իւր ուսն առնո'ւ զայն:

Աղուէսն 'ի յ'ուսին, ինչպէս փոքր առաջ
 Արդէն ասացինք, Հրէչը քաջ քաջ
 Եւ արագաքայլ դէպ այրն կը վազէր,
 Ուր Մարդը կեցած իրեն կ'սպասէր:
 Բոպէի մը մէջ, իւր կարուկ խելքով,
 Նա որոշեց թէ ի՞նչ կերպ հնարքով
 Այս երկրորդ անգամ ազատի Հրէչէն,
 Եւ այս պատճառով գոչեց հեռուէն.

— « Այ, դու խաբեբայ, անպիտան Աղուէս,
 « Գիտեմ որ այսօր մահըդ կը խնդրես.
 « Հաւնոցին մէջ երբ ըզբեզ բռնեցի,
 « Այն պայմանով լոկ կեանքդ շնորհեցի,
 « Որ դու ինձ համար երկու հրէչ բերես,
 « Դու ալ խոստացար: Այժմ, սե'ւ երես,
 « Այսքան օր ետքը մէկ հատը բերիր.
 « Դա արդէն իմն էր, երբ դու չի կայիր »:

Հրէչն երբ լսեց մարդուն խօսքերը,
 Ահէն ցցուեցան նորա մազերը:

— « Խորամանկ Աղուէս, որոտաց, մեռի'ր.
 « Ուրեմն այն մտքով դու զիս հոս բերիր
 « Որ երկրորդ անգամ սորա ձեռք մատնես,
 « Ուսկից մէկ անգամ հազիւ պրծայ ես: »

Ըսաւ ու բռնեց Աղուէսի ոտքէն

Եւ ուժով նետեց զայն հեռու իրմէն,
 Իսկ ինքը փախաւ: Մարդն ազատեցաւ
 Եւ ծուներ իջնելով երկնից փառք տուաւ.
 Յետոյ ոտք ելաւ և ուրախ զուարթ,
 Կարծես թէ երբէք չ'է ցաւեր մէկ մատ,
 Ձիերը բեռցուց գտած գանձերով,
 Իրարու կապեց և ուրախ սրտով
 Ձիուն վրայ հեծաւ ու կամաց կամաց
 Առաջ քըշելով դէպ 'ի տուն գընաց:

Արդէն ծածկուած էր երկրիս երեսը
 Սեւ վարագոյրով-հասաւ գիշերը.
 Մեր հարուստ հրեկան երբոր տուն հասաւ,
 Չարկաւ տան դուռը և « կի'ն, բա'ց », ըսաւ:
 — « Ո'վ է, կանչե'ց սա դուան ետեւէն:
 — « Ես եմ, բա'ց դուռը, կանչեց նա գրսէն:
 « Շուտ ըրէ', բա'ց, կի'ն, մեղք են ձիերը,
 « Բա'ց որ վեր բերեմ ոսկւոյ բեռները »:

Ոսկւոյն անունը կինը որ լսեց,
 Շուտ դուռը բացաւ, մարդուն վրայ վազեց,
 Ամուսինն առաւ իւր թեւերուն մէջ,
 Եւ համբոյններուն կարծես չ'էր գար վերջ:
 Մարդը ներս տարաւ բերած գանձերը,
 Լեցուց անոնցմով իւր սենեակները,
 Եւ այնուհետև շատ շատ տարիներ
 Բայդ ու խնդութիւն տընէն պակաս չ'էր:





ՉՄԵՌ

1. Ի՞ՆՉ ԸՐԱԻ ՉՄԵՌԸ

Ո՞ր է շնչիւնը
Քաղցր անտառի,
Եւ կարկաչիւնը
Մերձակայ առուի,
Ո՞ր են հոտաւէտ

Ծաղկունքը դաշտի-
Ծառը մերկացաւ,
Ա՛լ տերեւ չ'ունի.
Յուրա քամին լնու-
կատաղութիւնով

Անցորդի բերան.
Չիւնէ մի սրփռոց
Ծածկեց ամէն բան,
Դաշտեր ու ձորեր
Սպիտակ եղան.
Ալեւոր պապը

Իւր թելի տակը
Չ'ամէն շղթայեց:
Սառեցաւ առուն,
Լեցուն է ձիւնով.
Երկինք ալ ծածկին
Մըռայլտա մէգով:

2. ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Իեկեմբեր.

Այսօր երբ արթնցանք, տեսանք որ մեր սենեակը շատ լոյս էր, թէև արեգակն տակաւին չ'էր ծագած: Պատուհանին առջեւը վազեցինք և սկսանք ուրախութեան աղաղակներ արձակել:

Փափուկ ու փայլուն ձիւնը հաստ կեղեւով ծածկեր էր մեր բակը, տանիքը, հաւնոցը, սրահը. ամէնքը ձիւնով ծածկուած էին: Հօրեղբայրս առաւ հրացանը և դաշա գընաց, իսկ մեր փոքրիկ շունը խոհանոցէն դուրս վազեց և թաթիկներով հաստ ձիւնը արտրելով կը խաղար:

« Չմե՛ն, ձմե՛ն », աղաղակեցինք մենք և ծափահարեցինք: Շուտով հագուեցանք, նախաձաշիկ ըրինք, խկոյն դուրս ելանք և սկսանք ուրախ զուարթ ձիւնագունտ խաղալ:

3. ԱԼԵԻՌ ՊԱՊՈՒՆ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ

Բարկացաւ ալեւոր Չմեռը, սաստիկ բարկացաւ և միտքը դրաւ որ երկրիս երեսը կենդանի շունչ մը չի թողու: Ամենէն առաջ ձեռք առաւ թռչունները որք զինքը կը ձանձրացնէին իրենց երգերով ու ճռուողիւններով:

Չմեռը փչեց ցուրտ քամին, ծառերուն տերեւները թռցուց և զանոնք ճամբուն վրայ ձիր ու ցան ըրաւ: Թըռչուններուն տեղ չի մնաց. սոքա ալ խումբ խումբ հաւաքուեցան, խորհուրդ ըրին, վերջապէս որոշում առին ու սկսան կրկնալով թռչիլ բարձր սմբերու, խոր խոր ձորերու և կապոյտ ծովերու վրայէն դէպ 'ի տաք երկիրները: Քանի մը թռչուններ միայն մնացին, բայց նոքա ալ մարդուս բնակարաններուն մօտեցան:

Չմեռը տեսնելով որ թռչուններուն ետեւէն կարող չ'էր հասնիլ, գաղանները ձեռք առաւ: Չիւնով ծածկեց դաշտերն ու անտառները, ծառերը զարդարեց սառոյցէ կեղեւով և իրարու ետեւէ զրկեց իւր սառնամանիքը: Հասան սառնամանիք, ամէն բան ձայթեցուցին, ճրճուցուցին և ահ ձգեցին չորս կողմը: Բայց գաղանները չի վախցան ամենեւին, անոնցմէ մէկ քանին հաստ մորթերու մէջ փաթթուած էին, միւսներն ալ մտան իրենց խոր որջերուն մէջ. սկիւռը իր խոռոջին մէջ ընկոյզ կը կրծէ, արջը քարայրին մէջ թաթը կը ծծէ, նապաստակը ցատկրտելով կը տաքնայ, իսկ ձիերը, կովերը և ոչխարները վազուց 'ի վեր տաք գոմերուն մէջ պատրաստ խոտը կը ծամեն և տաք ջուր կը խմեն:

Չմեռն աւելի սաստիկ զայրացաւ և ձկանց վրայ դընայ: Սառնամանիք իրարմէ կատաղի կը հասնին, իսկ ձրկունք զուարթութեամբ կը լողան, մուրճերու ձայն կը հանեն, առանց գործիքի գետերուն ու լճերուն վրայ կարմուրջներ կը ձգեն: Գետերը ու լճերը սառեցան, բայց միայն երեսէն. բոլոր ձկները խորը գնացին, սառոյցէ ծածկոցի ներքև անոնք աւելի տաք կ'ապրէին:

« Է՛հ, սպասէ՛ , ըսաւ Չմեռը, հիմայ իմ բոլոր բարկութիւնս մարդոց վրայ կը թափեմ », և իրարու ետեւէ սկըսաւ սաստիկ սառնամանիք զրկել:

Յրտէն պատուհաններուն ապակիները սառոյցով կը ծածկուին. բուքն ու քամին կը զարնեն պատերուն ու լուսամուտներուն, այնպէս որ տեղ տեղ գերանները կը ճեղքուին: Բայց մարդիկ վառարանները կը վառեն, կը նստին անոնց առջեւ, իրենց համար իւզափլիթ կը թխեն, կ'ուտեն ու ձմեռուան վրայ կը խնդան: Եթէ դիպուածով հարկ ըլլայ որ մէկն անտառ երթայ, հաստ մուշտակ և տաք թաթպաններ կը հագնի և երբ կացինը ձեռք առած կ'սկսի փայտ կոտրել, մինչև անգամ կը քրտնի: Ճանքան՝ կարծես ձմեռուան վրայ ծիծաղելով, կարավանները կը շարուին, ձիերու վրայէն գոլորչի կը բարձրանայ, իսկ ձիապանները ռաքով կ'երթան, ձեռքերնին կը շփեն, ուսերնին կը զարնեն և ցուրտը կը դովեն:

Ամենէն աւելի ամէցաւ Չմեռը երբ տեսաւ որ փոքրիկ մանուկներն անգամ իրմէ չ'էին վախնար: Սահնակներով սառոյցին վրայ կը սահին, ձիւնագունտ կը խաղան, ձիւնէ սարեր կը կանգնեն և վրան ջուր ցանելով դարձեալ կը կանչեն ցրտին: « Եկո՛ւր, եկո՛ւր, օգնէ՛ մեզ: » — Չմեռը կատաղութենէն մէկուն ականջը կը քաշէ, միւսին քթէն կը բռնէ, տղաքը կը գունատին և կը կապուտան, բայց նորէն ձեռք կ'առնուն ձիւնը, կը տրորեն, կը թրջեն, կը խաղան և այսպէսով երեսնին կը տաքնայ և կը կարմրի խնձորի նման:

Չմեռը տեսնելով որ և ո՛չ մէկուն կարող էր յաղթել, բարկութենէն սկսաւ լալ: Անոր արցունքն երկինքէն կաթկթեցաւ ... , կ'երեւի թէ գարունը մօտեցեր է:

Ի՞նչ ըրաւ Չմեռը քոչուկներուն, գազաններուն, ձրկանց ու մարդկանց:

4. ՉՈՐՍ ԵՂԲԱՐՔ

Չորս եղբարք են՝ բոլոր տարին
 Երկրիս վրայ կարգաւ շրջին,
 Չորսն ալ ջոկ-ջոկ ունին հասակ,
 Պարգեւներն են հազար տեսակ
 Առաջինըն է պատանի,
 Բողբոջ, տերև, սաղարթ ունի,
 Պայծառ արև, կանաչ արօտ
 Որոնց տղայքն են միշտ կարօտ:
 Երկրորդ եղբայրն երիտասարդ,
 Կուտայ մեզ միշտ անձրև առատ.
 Ծաղկունք ցանէ նա ամէն դի,
 Յոյսեր կուտայ առատ հնձի:
 Երրորդ եղբայրն՝ այր չափահաս,
 Միրգերով լի ունի մի թաս.
 Կը բաժանէ տրղոց իւր գանձ,
 Ծիրան, խնձոր, խաղող ու տանձ:
 Չորրորդ եղբայրն է ծերունի,
 Յուրա ուխաւար շալկած ունի,
 Այգի, անտառ ամայացած,
 Դաշտ և արօտ ձիւնով լցուած:

5. ՆԱՊԱՍՏԱԿ

Նապաստակը թփերու տակ ցատկելով
 Եւ թաթերը մին միւսին զարնելով,
 Կըսէր. « Աստուած, այս ի՛նչ տեսակ ցրտեր է,
 « Բոլոր բնութիւն կարծես սառեր, պաղեր է:
 « Բայց մի միայն ծառերը հող չ'են ըներ,

« Թաթիկներըս ցրտէն սառեր են, թըմրեր:
 « Ա՛խ, ի՞նչ կ'ըլլար որ ես ալ մարդ լինէի,
 « Անոր նման ոտքըս տրրեխ հագնէի.
 » Տաք խրճիթին մէջը նստած տիկնոջս հետ՝
 « Կը տաքնայինք ցատկըրտելով մենք յաւէտ:
 « Տանըս հացը ուտէի ես կաղամբով,
 « Եւ քաղցրահամ ստեպղինը կըձեւով:
 « Լաւ կը լինէր ձմեռն խուղին մէջ անցնել,
 « Փոքրիկ թաթերս թոնիրին մէջ տաքցնել:»

6. ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Դեկտեմբեր.

Երկու օր ետքը Նոր Տարի է, այս պատճառաւ Ուսում-
 նարանէն արձակեցին զ՛մեզ: Հաղիւ կըցանք վերջին դասե-
 րուն համբերել. դուրս ելնելուս պէս, աւրախ զուարթ
 տուն վազեցի: Մինչև Յունուարի ութ ազատ ենք:
 Դպրոցական տարւոյն առաջին և ամենամեծ եռամասն էր
 այս: Ամբողջ չորս ամիս շարունակուեցաւ: Բայց հիմա դասէ
 ազատ ենք, պէտք է ուրախանանք, ձիւնէ խաղալիքներ
 չինենք, գնդակներ պատրաստենք և անոնցմով խաղանք:

7. ՉՄԵՌՆԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ

Փոթորիկն ու մէզն երկինքը կը պատեն, ձիւնաբեր
 փուքը սաստիկ կը շառաչէ, մերթ կը մըմնչէ նա իբր տղայ
 և մերթ իբրեւ գաղան ամեհի՛ կը մռնչէ: Կա՛մ խրճիթնե-
 րու հին ծածկոցին տակ չոր ծղօտներ կը խըշխըշացնէ, կա՛մ
 դուրսը մնացած հիւրի մը պէս այս ու այն պատուհանին
 կը զարնէ:

8. ՉՄԵՌՆԱՅԻՆ ԱՌԱՒՈՏ

Երէկ, ինչպէս տեսար, սաստիկ փուք էր. երկնից վրայ մէգ կը շրջէր, լուսինը իբրև աղօա բիծ մը ամպերու աակէն կը նայէր հեզիկ: Իսկ այսօր, լուսամուտին կողմը նայէ՛, որքա՛ն պայծառ է երկնից երեսը. ձեան շերտերն արեւէն կը փայլին և անբողջ դաշտեր ցոլացմամբ կը զարդարեն, բովանդակ անտառը մերկանալով՝ սեւագոյն կը տեսնուի՝ ի հեռաստանէ. եղեւնին նոյնպէս եղեամին մէջէն երեսիդ կը ժպտի իւր կանաչ տեսքով: առուակը սառոյցի տակէն կը խոխոջայ և լուռ շրջակայքը կը կենդանացնէ:

9. ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Յուճուար 1.

Երէկ երեկոյին մեր տունը շատ հիւրեր եկան. անոնք կ'սպասէին որ Նոր Տարին գիմաւորեն: Մինչև կէս գիշեր արթուն մնացի ես և առանց հագուստներս հանելու քնացայ: Այսօր շատ կանուխ արթնցայ և ծնողացս գնացի Նոր Տարին շնորհաւորելու: Անոնց ձեռքն համբուրելէ ետքը, բարի հօրեղբօրս սենեակը վազեցի, Նոր տարին շնորհաւորեցի և մաղթեցի նմա երջանկութիւն և առողջութիւն: Հօրեղբայրս համբուրեց զիս և պատկերազարդ գեղեցիկ գիրք մը նուէր տուաւ ինձ. «Եթէ միշտ աղէկ աշխատիս, ըսաւ, այսպիսի ընծայներ շատ կ'ընդունիս ձեռքէս:» Շնորհակալութեամբ համբուրեցի անոր ձեռքը: Որքա՛ն բարի է իմ հօրեղբայրս, նա չի մոռցաւ փոքր քոյրս և եղբայրս ալ ուրախացնել: Շուշանին ընծայեց գեղեցիկ պաճուճապատանք մը, իսկ Գարեգինին մի փոքրիկ թմբուկ. ուրախութենէն ա՛յնքան թմբուկը զարկաւ նա որ ձեռքերը թուլցան:

Այսօր ամէնքն ալ ուրախ են և Նոր Տարին կը շնորհաւորեն միմեանց, փոխադարձ բախտաւորութիւն ցանկալով: — Մայրս Նոր հանգերձներ հագցուց մեզ: Երեկոյին հօրաբրոջս տունը պիտի երթանք: Ես գիտեմ որ այն տեղ ալ պիտի խաղանք, երգենք և շատ ուրախութիւններ ընենք:

Դո՛ւք ինչպէս դիմաւորեցիք Նոր Տարին եւ ի՞նչպէս անցուցիք անոր առաջին օրն:


10. Չ Ի Ի Ն

«Ա՛խ, ինչո՞ւ-ինչո՞ւ կըզայ պաղ ձիւնը,
Նորէն ամիսներ պիտ' մընամ տունը.
Տեսնելու չ'եմ ես կանաչ ծառ, արօտ,
Հոտոտ ծաղիկին պիտ' մընամ կարօտ»:
Ձիւնը որ կըզայ երկինքէն ՚ի վար,
Իմացի՛ր, մեծ բաղդ է մարդուս համար:
Վերմակի պէս կը ծածկէ գետին,
Որ բացուի արմատն՝ գիմանայ ցրտին:
Նա հողին կը տայ հիւթ, պարարտութիւն,
Դաշտին ու արտին՝ մեծ առատութիւն.
Մի՛ տրանջար, մա՛րդ, դու բնութենէն,
Թէ՛ տաք և թէ՛ ցուրտ մեզ միշտ օգուտ են:

11. Յուճուար 5.


Այս երեկոյին Գրիստոսի Ծննդեան և Մկրտութեան ճրագալոյցն է: Ես ծնողացս հետ եկեղեցի գնացի որ լի էր ժողովրդով: Եկեղեցին լուսաւորուած էր հազարաւոր ճրագներով ու շահերով: Տիրացուները և սարկաւազները քաղցր ձայնով շարականներ կ'երգէին: Քահանայն Ս. Պատարագ կը մատուցանէր, ուրիշ մը Աւետարան կը կարդար, իսկ բոլոր ժողովուրդը կ'աղօթէր:

Ես ալ կ'աղօթէի: Միտքս կը բերէի իմ վարժապետիս պատմածը թէ ի'նչպէս Փրկիչը ծնաւ սչխարներու այրին մէջ, ի'նչպէս հրեշտակը աւետիս տուաւ հովիւներուն, ի'նչպէս այդ հովիւներն եկան երկրպագութիւն ըրին Նորածին Մանկանը: Կ'երեւի թէ այն երկիրը, ուր Փրկիչը ծնաւ,



մեր երկրէն աւելի տաք է որ հովիւները կրնային գեշերը բացօթեայ քնանալ: Իսկ այս տեղ ի'նչպէս ցուրտ է այժմ: Շիտակը Յունվար ամենէն ցուրտ ամիսն է: Երկիրս ծածկուած է սպիտակ քողով: Ի'նչ լաւ կ'ըլլար եթէ վաղը գոնէ օդը մեղմ ըլլար:

Ձեր եկեղեցոյն մէջ ի'նչպէս կ'ասարուեցաւ Ծննդեան նախասօնակը: Պատեցէ՛ք Քրիստոսի Ծննունդը:



12. - Յունուար 6.

Արդէն քանի մ'օր է որ գետին եզերքը տեղ պատրաստուած է Քրիստոսի Մկրտութեան համար: Այսօր, կէս օրուան պատարագէն ետքը, բոլոր քահանայական դասը ժողովրդեան հետ Մայր-Եկեղեցիէն դէպ 'ի Յորդանան գիւմեց: Հանդէսը շատ փառաւոր էր:

Ճաշէն ետքը քահանայն տիրացուն հետ մեր տունը եկաւ օրհնեց: Աւետարանին մէջէն կարգաց թէ ի'նչպէս Յիսուս Յորդանան եկաւ մկրտուելու, ի'նչպէս Յովհաննէս Մկրտիչ ընդունեց զինքն, ի'նչպէս բացուեցաւ երկինքը և Աստուծոյ Հոգին աղանակերայ իջաւ անոր վրայ, ի'նչպէս երկինքէն լուսեցաւ Աստուծոյ ձայնը որ կ'ըսէր. «Իա է Արդի իմ սիրելի. դմա՛ լուարուք:»

Միտա կը արօրիէ երբ կը մտածեմ թէ միւս օրը Ուսումնարան պիտի երթամ, բայց իմ մայրս կ'ըսէ որ եթէ միշտ ազատօրէն պտըտիմ, տօներն ա՛լ այսպէս ուրախալի չ'են ըլլար: Պէտք է խմանալ թէ արդեօք շատ ժամանակ

կա՞յ մինչեւ Բարեկենդան :

Պասմեցէ՛ք Փրկչի մկրտութիւնը : Նկարագրեցէ՛ք Չրորհնեաց հանդէսը :



13. ՓԵՏՐՈՍԻ 14.

Այսօր Տեառընդառաջի մեծ տօնն է : Երեկոյին հայրս Աւետարանին այն կտորը կարդաց , ուր գրուած էր թէ ի՛նչպէս Աստուածընկալ Սիմէոն ծերունին տաճարին մէջ Փրկչին հանդիպեցաւ : Երբ հայրս կը կտորգար , մայրս արտասուեց և ամէնքնիս ալ համբուրեց : Վերջը երկար ժամանակ մտածեցինք թէ ինչո՞ւ համար մայրս արտասուեց :

Կամաց կամաց ձմեռը աւելի ձանձրալի կը դառնայ : Օրերը զգալի կերպով երկարացան : Այսու ամենայնիւ արեգակը դեռ քիչ կը տաքցնէ , բայց այժմ առաջուան պէս սաստիկ ցուրտ չ'է : Արեգական հանդիպակաց տեղերը ձիւնները կը հալին . կ'երեւի թէ գարունը կը մօտենայ :

Գ Ա Ր Ո Ւ Ն

14. ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ ԳԱՐՆԱՆ

Չմեռ ժամանակ ծաղիկ չի կայ . ձեան հաստ չերտեր



երկիրը կը ծածկեն , ծաղիունք կը ննջեն տաք ձեան տակ . ե՞րբ վերստին պիտի զարթնուն այս փոքրիկները : Բայց ամէն ատեն փոթորիկ և ցուրտ չ'ըլլար . գեղեցիկ օրերն ալ նոյնպէս կը մօտենան : Գարունը դաշտերուն երեսէն կ'անցնի , բոլոր բնութիւնը նորէն կը զարթնու , սառոյցի կեղեւներ կտորտելով վեր կ'առնու նա երկրիս սառնապատ ծածկոցը , կ'արթննան ծաղիունք իրենց երկար ու խոր քնէն . « Գարուն » կը լսուի ամէն բերնէ :

15. ՄԵՍ ՊԱՀՈՑ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒՇԱՌԹԻՆ

Բարեկենդանին մեծ ուրախութիւն ըրինք մենք , խաղացինք , իւզաբլիթ կերանք . ամէն կողմէ խնդութեան ձայներ կը լրսուէին . . . : Այսօր ալ մարդիկ մեծ շարժման մէջ

են, բայց յայտնի կերեւի որ այդ շարժմունք երէկուան զը-
լարթութիւնը չ'ունին:

Օրը երեք անգամ մեղմ զանգակահարութիւն և Եկեղե-
ցին ալ փառաբանութիւն կ'ըլլայ, — ահա՛ մեծ պահոց մի-
ակ զարդարանքը: Մարդիկ բարեպաշտութեամբ օրը երեք
անգամ Եկեղեցի կ'երթան: Երէկ կը զուարճանային նորա,
իսկ այսօր կ'աղօթեն և հաղորդուելու կը պատրաստուին:

Այժմ օրերն ալ փոխուած են: Օգուն մէջ գարնան նը-
շանները կ'երեւին: Միջօրէի արեգակը բաւական կը տաքը-
նէ, տանիքներէն բիւրեղեայ շիթեր կը կախուին: Չիւնա-
ծաղիկը դեղնած խոտերու մէջէն գլուխը կը բարձրացնէ:
Ի՛նչ քաղցր է մտածել որ Զատիկի ժամանակ երկիրը կանաչ
խոտով պիտի ծածկուի: Մենք վեց շաբաթ միայն կը կար-
դանք, եօթներորդին ազատ ենք:

Դո՛ւք ինչպէս անցուցիք Բաբելոնդանը: Ի՞նչ գիտէք
դուք Մեծ Պահոց մասին:

16. ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ


Ծաղկազարդի կիւրակէ.

Անցան պահոց վեց շաբաթները: Երէկ Ուսումնարանէն
արձակեցին զ՛մեզ: Երբ որ տուն եկայ, հայրս հարցուց թէ
ի՞նչ տօն էր: Չ'գիտէի զայդ, բայց ըսին ինձ որ շաբաթ օրը
Ղազարոսի յարութեան տօնն էր, իսկ այսօր Քրիստոսի գա-
լլատեան տօնն է. այսչափը գիտեմ ես:

Այսօր բոլոր անեցիք, բաց ՚ի մանուկներէն, կանուխ
Եկեղեցի գնացին: Երբ մայրս տուն գարձաւ, ձեռքն ուռ-
մը ունէր: Մենք անկողնի մէջ էինք դեռ: Մայրս ուռով կա-
մաց մը զարկաւ մեզ և ծիծաղելով ըսաւ. « Ելէ՛ք տեսնեմ.
այսօր ո՛վ որ շուտ արթննայ, շնորհքով տղայ կ'ըլլայ: »

Ամէնքս ալ տեղերնուս ելանք: Մայրս ամէնքնիս ալ
համբուրեց և մէկ մէկ ուռ տուաւ մեզ:

Տե՛ս, ի՛նչ գեղեցիկ է: Ուռին վրայ բրդոտ կոկոններ,



գառնուկներ կան. — գարնան նշան է այս: Կ'երեւի թէ ծա-
ռերու ծաղիկներն ալ շուտով պիտի բացուին:

Դո՛ւք ալ այսպէս անցուցիք Ծաղկազարդի կիւրակէն:
Այսօր ի՞նչ տօն կը կատարուի:

17. ՈՒՌԵՆԻ

Ուռենի՛ կանաչ, ուռենի՛ սիրուն,
 է՞ր չես ծիծաղիր դու այսօր ժպտուն.
 Մի՛թէ քեզ սաստիկ արե՞ն է այրեր,
 Արե՞ւը այրեր, անձրե՞ւը ծեծեր,
 Արմատիդ մտէն զով ջուր չի՞ վազեր:
 Այս լոյս աշխարհէն իշխաններ անցան,
 Ուռին կտրեցին — կեանքէն զրկեցին,
 Մեծ աշխատանքով զայն տաշտըչեցին
 Եւ իրենց համար թիեր շինեցին,
 Նաւակ կազմեցին, մէջը նստեցան,
 Մէջը նստեցան ու տուն ետ դարձան
 Եւ զիս փոքրիկս ալ հետերնին տարին:



18. ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԹԻ

Այսօր ես խոստովանեցայ: Երկիւղով մտեցայ քահանային, ծնրադրեցի անոր առջեւ ու խոստովանեցայ իմ մանկական պակասութիւններս: Քահանայն խրատեց զիս և երբ խոնարհաբար խոստացայ որ ամէն ջանք ընեմ միշտ

աշխատասէր, բարի և ճշմարտախօս ըլլալու, ձեռքը գլխիս վրայ դնելով օրհնեց զիս յ'անուն Քրիստոսի:

Պատարագն սկսաւ, բայց վարագոյրը դեռ գոյ էր և քահանայն կը կարդար նոյն աւուր աղօթքը: Եկեղեցին բազմութեամբ լի էր, ամէնքն ալ կ'աղօթէին: Ես ալ կ'աղօթէի որ Աստուած կարողութիւն տար ինձ խոստումներս կատարելու, վասն զի գիտեմ որ խոստումը չի կատարելը մեծ պակասութիւն է: Քահանայն աղօթքը վերջացուց. յանկարծ վարագոյրը բացուեցաւ, սարկաւազները գեղեցիկ ձայնիւ ըսկրսան երգել: Ժողովրդեան մէջ վերաբերում եղաւ: Սուրբ



Հաղորդութեան ժամանակ սարկաւազը երգեց. « Երկիւղիւ և հաւատով յառաջ մատի՛ք և սրբութեամբ հաղորդեցա՜ր՝ւք: » Խոնարհութեամբ և երկիւղիւ մտեցայ սուրբ Անգանին և հաղորդուեցայ:


Այսօր ամենեւին չի վազվեցի, այլ մեծ հօրս քով նըստած՝ Սաղմոս կարգացի:

Աւագ Հինբարթի գիշերուան ժամերգութեան գնացինք: Քահանայն Եկեղեցւոյն մէջ կարգաց թէ ի՛նչպէս Փրկիչն աշակերտներուն աւանդեց իւր վերջին պատուէրնե-

ըը և թէ ի՛նչպէս կ'զգար որ ինքն արդէն մատնուած է և պիտի բռնուի: 'Ի զուր չ'էր որ ամէն մէկ աւետարանէն ետքը գպիրները ողբաձայն կ'երգէին . . . : Վերջին աւետարանը կարգացին, ուր գրուած էր թէ ի՛նչպէս անգութ Հրէայք զ'Քրիստոս չարչարեցին:

Այս գիշեր տաններկու գլուխ աւետարան կազացուցաւ: 'Ի հարկէ դժուար էր այգքան երկար ատեն ոտքի վրայ կենալ, բայց ես կեցայ:

Այսպէս հարողուեցա՞ք եւ դուք: Այսպէ՞ս գնացիք Լացի ժամերգութեան:



19. ԱԻԱԳ ՈՒՐԲԱԹ ԵՐԵԿՈՅԻՆ

Այսօր Քրիստոսի թաղման օրն է և մենք Եկեղեցի դընացինք: Ժամերգութիւնը գեռ չ'էր սկսած: Ես սկսայ Եկեղեցւոյն շուրջը պըտըտիլ: Շատ պայծառ օր մ'էր. արեգա-

կը երեկոյեան վերջալուսոյ ճառագայթներով կը փայլեցնէր Եկեղեցւոյն գմբէթները:

Թռչուններն ուրախ զուարթ կը թռչաէին Եկեղեցւոյն ատնիքին վրայ և երեկոյեան վերջալոյսի պահուն մեղմօրէն կը ձվձվային: Առանց այս ամենուն: ուշադրութիւն ընելու, ես կարծես տխուր էի. այսօր մեր Փրկչի թաղման օրն է: Եկեղեցւոյն մէջ գրուած է Քրիստոսի դագաղը, որուն չորս կողմը հանդարտ կ'այրին մամերը՝ շուրջերնին կապտագոյն շառաւիղներ արձակելով: կարծես անոնք ալ տխուր են: Միայն ուրախալի է լսել թէ ի՛նչպէս բարի Յովսէփը սուրբ




կտաւով պատեց մեր Փրկչի մարմինը և չ'թողուց զայն չարագործաց ձեռքը:

Ժամերգութենէն ետքը տուն դարձանք: Ճամբան տեղ տեղ տակաւին ձիւն կ'երեւէր, բայց շատ տեղ ալ արդէն հալեր էր: Հալած տեղերը կանաչ նորափթիթ խոտերով ծածկուեր էին: Պարտէզներուն մէջ ալ հոտաւէտ մանուշակըն արդէն իւր կապոյտ աչքերը բացեր էր: Մառերու կոկոնները ուռեր լեցուեր էին, իսկ նշենիններն արդէն քանի օրէ 'ի վեր այգիները կը զարգարեն իրենց սպիտակ ծաղիկ-

ներով: Ահա մերձակայ ձորին մէջ կը խօխօլէ ձեան ջրերէ գոյացած առուակը: Գեղեցիկ Արև, գործէ՛ ջանասիրութեամբ, մի՛ մոռնար որ երկու օր ետքը Չատիկ պիտի գայ:

Պատմեցէ՛ք թէ ի՛նչպէս եկեղեցի գնացիք: Ի՞նչ յառայդիմութիւն րեք է գարունը:



20. ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Չատիկ շաբաթ երեկոյին եկեղեցւոյն մէջ հանդիսով տօնեցին Ս. Յարութեան ճրագալոյցը: Ժամերգութենէն ետքը տուն գարձանք և պահքերնիս լուծեցինք: Եօթը շաբաթ պահք պահելէ ետքը, ի՛նչ ուրախալի է ձեռքդ կարմիր ձու ուենալ և անով պահքդ լուծել: Սեղանին վրայ շարած էին զանազան տեսակ կերակրեղէններ, բաց ՚ի մտեղէնէն, որովհետև այս երեկոյ նաւակատիք է: Հացն ուտելէս ետքը, շուտ մը քնացայ, բայց մօրմէս խնդրեցի որ զիս ալ արթնցնէ առաւօտեան ժամերգութեան ներկայ գանուելու համար:

Կէս գիշերին Մայր-եկեղեցւոյ զանգակը հնչեց: Անոր ձայնէն ինքնիրենս արթնցայ: Ժամը մէկն էր երբ միւս եկեղեցիներուն զանգակներն ալ սկսան հեաղհետէ լողանջել: Տունէն դուրս ելանք, փողոցները շատ մութ էին, բայց

եկեղեցին հազարաւոր ճրագներով կը փայլէր: Եկեղեցւոյն մէջ այնքան ժողովուրդ կար որ հազիւ կրցանք տեղաւորուիլ: Ժամերգութիւնն սկսած էր. մեծ ուրախութիւն զգացի ես երբ սարգաւազները քաղցր ձայնով երգեցին. « Գրիստոս յարեա՛ւ ՚ի մեռելոց, մահուամբ զ՛մահ կոխեաց և յարութեամբ իւրով մեզ զ՛կեանս պարգևեաց. նմա փա՛ռք յաւիտեանս, ամէն: » Ահա իսկապէս ամենամեծ տօնը:

Պատարագին աւարտմանէն ետքը տուն գարձանք: Արդէն լոյս էր: Փութացի հօրս ու մօրս ձեռքն համբուրել, իմ սիրելի խօսքը կրկնելով. « Գրիստոս յարեա՛ւ ՚ի մեռելոց: » Անոնք ալ զիս համբուրեցին: Ապա մօտեցայ իմ չիօքրիկ եղբորս ու քրոջս և քաղցրութեամբ պագտուեցանք:

Մէկ քանի ժամէն ետքը քահանայն տիրացուին հետ եկաւ: Անոնք օրհնեցին մեր տունը և Գրիստոսի հրաշափառ յարութիւնը երգեցին:

Ես ու եղբայրս դուրս ելանք մեր բարեկամներուն շքնորհատութեան երթալու համար: Ո՛հ, ի՛նչ գեղեցիկ առաւօտ էր: Մեր պարտիզին բոլոր նշենինները ծաղկեր էին, մանուշակը խոտերուն մէջ փռուեր էր կապուտակոյն սրիւնոցի մը պէս և անուշահոտութեամբ աշխարհս կը լեցնէր: Ահա՛ միւս կողմէն ծիրանի ծառերն ալ իրենց կիսաբաց կոկոններուն տակէն համեստաբար կը ժպտին: Որչա՛փ պայծառ է օդը, իբրև թէ բնութիւնը զարգարուած ըլլար. կռունկներու երամներն ահա՛ շղթայած և կ'ընթանան՝ գեղեցիկ գարունը փառաբանելով: Իսկ անոնցմէ վար, երկրիս վրայ, մանուկներն միասին ժողովուրած՝ ուրախ զուարթ հաւկիթ կը խաղան: Ահաւասիկ մատաղ գառանց փառքիկ հօտերն ալ մայելով կը շրջին փողոցներու մէջ: Ամէն մարդ կը ջանայ որ գառն ունենայ իւր տան մէջ: Չատիկի նշան է այս: Հայրս մեզ համար գեղեցիկ գառն մը գնեց. ես շատ կը սիրեմ

զայն և նորաբոյս կանաչ խոտով կը կերակրեմ:

Այսպէ՛ս անցուցիք դուք Զատիկը : Ի՞նչ յառաջադի-
մաբիւն ըբեք է գառունը:

21. ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ

Դաշտերու մէջ ձիւնն հալեցաւ ,

Կենդանարար սիւքն սկսաւ .

Սառնամանիք , հողմ՝ ձմեռուան ,

Կարճ միջոցին անյայտացան :

Բերկրութիւն է անհոգ մարդոց

« Քրիստոս յարեա՛ւ 'ի մեռելոց : »

Այգիք , պարտէզք զարդարեցան ,

Ծառերն ամէն կանաչացան ,

Ծիծեռնեղն , ամէն թռչուն

Ողջունեցին նորեկ գարուն :

Յընձութիւն է հարուստ մարդոց

« Քրիստոս յարեա՛ւ 'ի մեռելոց : »

Բազմութիւնը մեծ ու փոքրը

Ժողովուեցան Եկեղեցին ,

Հարսն ու աղջիկ զարդարուեցան

Որպէս ծաղկունք գարնանային :

Բերկրութիւն է շա՛տ շատ մարդոց

« Քրիստոս յարեա՛ւ 'ի մեռելոց :

Եկեղեցին՝ վիզը ծըռած ,

Հաղուստները պաառոտած ,

Քարի վերայ ոտքը բոպիկ՝

Տեսէ՛ք , եղբա՛րք , ո՞վ է կանգնած :

Սուգ ու լաց է թռչուառ մարդոց

« Քրիստոս յարեա՛ւ 'ի մեռելոց : »

Մանկիկներով շրջապատուած՝

Նա աղքատ է , սոված , քաղցած ,

Նա տրկար է , անօգնական .

Մխիթարե՛նք , եղբա՛րք , մենք զայն :

Տանջանք , մահ է թշուառ մարդոց

« Քրիստոս յարեա՛ւ 'ի մեռելոց : »


22. ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇՍԱԿԱՐԱՆ

Մեռելոց .

Զատիկի երկուշաբթին ծնողքս՝ զիս , քոյրս և եղբայրս
Գերեզմանատուն տարին : Այնտեղ տապանաքարերուն տակ
կը հանդչին մեր ազգականներէն շատերը , այն տեղ է և իմ՝
քոյրս Եղիսարեթ : Քահանայն ներկայ էր : Հայրս օրհնել
տուաւ քրոջս գերեզմանը : Ի՛նչքան խոտեր բողբոջեր են ա-
նոր փոքրիկ հանգստարանին վրայ : Գերեզմանատունն ալ
նորոգուեր է . ամէն կողմ ծածկած են սիրուն ծաղիկներ :
Շատ գերեզմաններու վանդակապատներուն մէջ ազգականք
գեղեցիկ ծառեր անկեր են : Գարունը չ'է մոռցեր այդ հան-
գըստարանն ալ զուարթացնել . ծառերը զարդարուած են
կանաչ տերեւով , թռչունները անոնց վրայ կը թռչին ու կը
ճըլվլան , մին ծղօտ կը տանի , միւսը՝ փետուրներ . կ'երևի
թէ սկսեր են իրենց համար բոյն շինել : Գերեզմանատան միւս
կողմը գիւղացիք արդէն իրենց արտերը կը հերկեն :

Ի՞նչ է մեռելոցը : — Ի՞նչ ըբեք է գառունը գերեզմանա-
սան մէջ :





23. ՇԻՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳԸ

Ա՛յ մարդ , այսօր շատ քընացար , նընջեցիր ,
 Առաւօտեան զով ժամանակը անցուցիր .
 Արեգակը ծովուն ծայրէն ծագեցաւ ,
 Զերմութիւնը դաշտին վրայ փռուեցաւ .
 Ընկերներըդ կանուխ արար գնացին ,
 Յորեն , գարի գերանդիով հնձեցին ,
 Խուրձ կապեցին , բարդ բարդեցին 'ի դաշտի
 Նստան հանդ չիլ կաղնիներու յ'ըստուերի :
 Ա՛յ մարդ , վեր ե՛լ , առատ ջրով լուացուի՛ր ,
 Գօտիդ կապէ՛ , գերանդիդ ա՛ռ , դաշտ վազէ՛ ,
 Մինչդեռ զով է՛ հունձըդ կապէ՛ արտին մէջ ,
 Հունձըդ հնձէ՛ , մի ծուլանար գործիդ մէջ :
 Հունձըդ կապէ՛ , բարդըդ բարդէ՛ , տուն դարձի՛ ,
 Հանգստացի՛ր երբօր հունձըդ կատարի ,
 Բե՛ր գերանդի՛ն , կախէ՛ պատէն քո տանը ,
 Ես իրիկուան կը պատրաստեմ սեղանը :

Ո՛վ մարդ , հերի՛ք ինչ որ այսօր քընացար ,
 Մէկ մ'աչըդ բա՛ց , տե՛ս թէ ո՞րչափ ուշացար .
 Մեր դրացին վաղուց անցաւ կամուրջէն ,
 Շատոնց լուեր է ժամկոչը ձայնելէն :
 Ի՞նչ ես պառկեր , ի՞նչ քընանաս , սիրակա՛ն ,
 Արեգակին շողը հասաւ մեր դրան .
 Մի՛ ծուլանար , ժամանակըդ խընայէ՛ ,
 Ա՛յն պիտի մեզ բոլոր ձմեռ կերակրէ :



24. Կ Ա Պ Ի Կ Ը

Առաւօտուն արշալոյսը բացուելուն պէս , գիւղացին
 գուլթանը դէպ 'ի դաշտը քչեց և սկսաւ իր օրավարը հեր-
 կել : Նա այնպէս կ'աշխատէր որ քրտինքը կաթիլ կաթիլ

կը գլորէր ճակատէն, գիւղացին արժանաւոր բանւոր էր : Այս պատճառաւ ո՛վ որ անոր քովէն անցնէր, կը գովէր զայն և յաջողութիւն կը մագթէր նմա : Կապիկն այս բանիս վրայ նախանձեցաւ : Գովասանքը հաճելի է, ի՞նչպէս չը ցանկալ նմա : Կապիկը մտածեց որ ինքն ալ աշխատի, կարելի է ասով ուրիշներէն գովասանք ստանայ : Նա գտաւ մի կոճղ և սկսաւ վրան աշխատիլ : Կապիկը կոճղն այս ու այն կողմը կը դարձընէր, երբեմն անոր ծայրն իր դէնչին կը զարնէր . քրտինքը ճակատէն կը հոսէր աղբիւրի պէս, այնպէս որ խեղճը չարչարուելէն հազիւ կարող էր շունչ առնուլ, բայց և ոչ մէկէն գովասանք կը լսէր :

Եւ զարմանք չէ, աչքի՛ս լոյսը, թէև դու շատ կ'աշխատիս, բայց ասով օգուտ մը չ'ես բերեր :

25. Գ Ա Ր Ո Ւ Ն

Կարօտ ենք տեսքիդ, աննմա՛ն գարուն,
 Շուտ արի՛, մեզի բե՛ր ծաղիկ սիրուն,
 Բե՛ր պայծառ արեւ, բե՛ր մեզ տաք օրեր,
 Ճըլվրտող թռչուն, բե՛ր կանաչ դաշտեր,
 Բա՛ց մեր դռները, բա՛ց մեր պատուհան,
 Թո՛ղ բացուին, ծաղկին վարդ, մեխակ, շուշան -
 Փակուած սենեկէն ե՛ննք, ազատուինք,
 Կանաչ դաշտ երթանք, խաղանք գլորուինք :



26
 Մ Ա Յ Ի Ս Ի Ա Ռ Ա Ւ Օ Տ

Ինչպէ՛ս թարմ՝ ու գեղեցիկ է Մայիսի առաւօտը : Դաշտերը ծածկուած են կանաչ խոտերով ու ծաղիկներով : Կարծես բնութիւնը օրէ օր աւելի կը քաղցրանայ և գարնանային մէգին մէջ կը ժպտի ամառը : Երբ անտառ կ'երթամ, այն տեղ թփերու ստուերմբրուն տակ, ծաղկապատ հովիտներուն մէջ սիւռուած կը տեսնեմ Մայիսի որդին, սպիտակ և անուշահոտ շուշանը : Ամէն տեղ, ո՛ւր որ նայիս, աչքիդ առջև կանաչ գորգեր սիւռուած կան, որոց վրայ առաւօտեան ցօղը իւր մարդարտեայ կաթիլները ցաններ է : Արեւուն առաջին ճառագայթները ծառոց տերեւներուն և ցօղապատ մարդերուն վրայ իյնալով, ադամանդեայ ականց նման կը փայլեցնեն զանոնք : Թռչունները կը ճլվրան շորս կողմը . իսկ ահա՛ միւս կողմէն վարդին կիսաբայ կոկոնե-

րով ծածկուած թփերուն մէջ զմայլելի ձայն մը կը լսուի. — սոխակն է դա: Առաւօտուն՝ արշալոյսին կանգնած է նա բացուող կոկոններուն վրայ. աչքերը կիսախուր, կարծես ինքն իր երգերէն յափշտակուած՝ կ'երգէ, կը ճլվլայ և հազար կերպով կը խաղցնէ իր քաղցր ձայնը, կ'երգէ նա վարդին սիրուն կոկոններուն բացուելուն սպասելով:



27. ԱՄԱՌՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿ

Ստեղծուին առատ ձեռքըն երկնցուց,
Արտերն, անտառներըն հարստացուց.
Ծառեր ու թփեր զարթով ծածկեցան,
Ամէն կողմերէ ծաղկունք փայլեցան:

Ազատ կը շրջին ոչխարք դաշտին մէջ,
Ազատ կը լողան ձկներն ծովուն մէջ,

Այգուն պտուղներն դեղնիլ սկսան,
Արտերուն հարուստ ցանքերըն հասան,
Դաշտին մանդաղներն փայլին լուսադեղ,
Թռչունք անտառէն ձայն տան 'ի դեղդեղ.
« Ի՛նչքան սիրուն են, ո՛հ, այս հովանիք:
« Ե՛կ, հանդստացի՛ր այս տեղ, ո՛վ մանկիկ:
« Ականջ-դի՛ր ինչպէս մենք կը նուագենք,
« Առատ ամառուն փառք վերընձայենք:
— « Ոչ թէ ամառուն, ըսաւ, փառք տուէք,
« Այլ զայն շնորհող Տէրըն օրհնեցէ՛ք: »

28. ԿԱՅԾՈՒԻԿ

Ամառն սկսաւ և կայծուիկն իւր փոքրիկ լապտերն վառեց. կանաչ աստղի մը պէս մութին մէջ կը փայլի նա և մէկ խոտէն միւսը կ'իյնայ:

Բռնե՛նք զայն և խոտին հետ բաժակին մէջ դնե՛նք:
Ինչո՞ւ կայծուիկը իւր լապտերը մարեց: Մի՛ դուցէ խեղճն սպաննած ըլլանք: Ո՛չ, միմիայն վախցաւ նա, բայց ահա՛ նորէն վառեց իւր լապտերը առաջուան պէս: Հանգիստ թողո՛ւնք զայն այս գիշեր և լաւ մը հսկե՛նք վրան:

Յորեկ ատեն ի՛նչ ագեղ է այս կենդանին, իսկ գիշերը կարծես ագամանդի կը նմանի: Նագանակագոյն մարմինը վերի կողմէն տափակ է, իսկ ներքևէն՝ դուրս ցցուած. ամբողջ մարմինը տասն և մէկ խաղերէ կազմուած է: Խաղերը կարծես իրարու մէջ անցուած են: Վերին օղակին տակ պահուած են գլուխը, սև պերեւեշաներն ու մեծամեծ սևու-

բակ աչքերը: Ուրեմն սա միջատ է և ոչ թէ որդ: Վեց սև
ոտներ ունի նա:

Կը տեսնէ՞ք սա սպիտակ բիծերը վերջին երեք ոտնե-
րուն վրայ, այս բիծերն են ահա որ կը փայլին մութին մէջ:

Մեր կայծուիկը թեւ չ'ունի. — սա էգ է, բայց արուն
թեւեր ալ ունի, մթագոյն պինդ վերնաթեւեր ալ, ինչպէս
բոլոր բզէզները: Արուն նմանապէս լոյս կուտայ գիշերները,
բայց շատ լաւ թռչելուն պատճառաւ զայն բռնելը դիւ-
րին չ'է:

Էգ կայծուիկը իւր մանրիկ ձուերը խոտերուն կը կրպ-
ցունէ: Չուերէն դուրս կուգան թրթուրներ որոնք իրենց
մօր շատ կը նմանին և որք քիչ մը ետքը իրենց լապտերները
կը վառեն:

Ի՞նչ միջասներ գիտէք: Որո՞նց քրթուրները պատեցաւ որ
են: Որո՞նք պատեցաւ չեն (մարսիս, ծորիսը, նպու-
որ): Ինչո՞վ կը զանազանուին միջասներ որդերէն:

29. ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇՍԱԿԱՐԱՆ

Յունիս 23.

Այսօր միայն մէկ տօն չ'եմ կատարեր ես, այլ շատ տօ-
ներ. այսօր իմ ծննդեանս օրն է, երէկ մեր Ուսումնարանին
մէջ հասարակաց հանդէս կար և պարգեւաբաշխութիւն ե-
ղաւ. գեղեցիկ գիրք մը ընծայեցին ինձ: Այսօր արձակուրդ-
ներն սկսան, վաղը գիւղ պիտի երթանք. իսկ գիւղը կան
արտեր, ծաղիկներ, արօտամարդեր, անտառներ, պտուղ-
ներ, թռչուններ, ...:

Հիանալի է գիւղը, մանաւանդ առաւօտուն և երեկոյին.
այդ միջոցին հովիւը արօրէն գէպ 'ի գիւղը կը քչէ իւր

կուշտ նախիրը: Նոր ծնած կովերը կը բառաչեն, հորթերը
անոնց կը պատասխանեն իրենց ախորժելի ձայնով, աշխա-
տասէր տանտիկինը ձեռք առաւ ահա կովկիթը և տե'ս ինչ
առատութեամբ կաթը կը հօսի կովուն ուռած ծիծերէն:
Շատ ուրախալի է նմանապէս տեսնել թէ ի՞նչպէս աշխա-
տասէր գիւղացիք, գերանգի 'ի ձեռին, մարգագետիններու
բարձր խոտերը կը քաղեն: Ես շատ կը սիրեմ հոտաւէտ խո-
տերու մէջ գլորուել:

30. ԱՄԱՌԸ ՄԱՐԳԱԳԵՏՆԻՆ ՄԷՁ

Մանկական յիշատակարան.

«Տղա՛յք, վաղը ամէնքնիս հնձատեղին պիտի երթանք»,
ըսաւ մեր հայրը, և սկսանք այնպէս գոչել ու վազվրտել
որ դժուարաւ կրցաւ հանդարտեցնել զ'մեզ: Ես կարթեր
պատրաստեր էի ձուկ որսալու համար, իսկ քոյրերս ձեռք
առին իրենց կողովները որպէս զի պտուղ քաղեն: Առաւօ-
տուն, լոյս ծագելուն պէս, ընտանեօք սայլերու վրայ նըս-
տած ճամբայ ելանք:

Ժամէ մը ետքը լայն ճամբէն շեղելով, նեղ շաւիղնե-
րու մէջ մտանք, իսկ վերջը բոլորովին ճամբէն դուրս ելանք
և հասանք վերջապէս մեր փափագելի մարգագետիններուն
մօտ: Արեւուն ոսկեփայլ ճառագայթները գեռ նոր կը փայ-
լէին մեծ լեռան ձիւնապատ գագաթին վրայ, բայց հովիտն
արդէն հնձողներով լի էր: Հնձողք հագուստնին հանած,
չապիկով, զոյգ զոյգ առաջ կը քալէին բարձր խոտերու
մէջէն և իրենց ետեւէն կը ձգէին կանաչ խոտերու շերտեր:
Անոնցմէ փոքր ինչ հեռու, միւս կողմը, անոնց ընկերները
փոցխերով կը հաւաքէին չորցած խոտերը և փոքրիկ դէզեր

կը կազմէին: Հովտին այս և այն կողմն ալ սարի նման կը բարձրանային մեծամեծ դէզեր: Մարդ մը կեցած էր դէզին գլուխը և ճարտարութեամբ խտար կը կարգադրէր: Գիւղացի մանուկները փոքրիկ կոյտեր կը կրէին մեծամեծ դէզերու մօտ: Ուրախութեան ալաղակներ օդուն մէջ կը բարձրանային, աշխատասէր մշակները զուարճութեամբ կը գործէին. երգեր, ծիծաղ, բարձրաձայն խօսակցութիւն, շներու հաջիւնը, գերանդիներու զընդզընկոցը, բեռնակիր ձիերու խրինջիւնը, եզերու պոչիւնը, անիւնների մեղմ շառաչիւնը, — այս ամէնը բնութեան երգիչներու քաղցր դայլայլիկներուն հետ խառնուելով՝ մարդուն միտքը կը յափըշտակէին:

Ես փութացի այդ հովիտներէն վազող գետակին մէջ ձուկ որսալ, իսկ քոյրերս սկսան պառուզ ժողովել: Յետոյ շատ ուրախութիւն ըրինք, թիթեռնիկ բռնեցինք, ծաղիկներ ժողովեցինք և քոյրերուս հաւաքած մորի գեղեցիկ կարմրախառն հատիկներէն փունջեր կազմեցինք:

Փոքր առ փոքր մնւթն սկսաւ տարածուիլ. արեգակն արդէն ծածկուեր էր հորիզոնին ետևը: Մշակները իրենց գործը դադրեցուցին, վար դրին գերանդիները և խաչակնքելով գոհութիւն տուին Աստուծոյ: Քանի մը ըտպէ ետքը բանասորները գերանդիներն ուսերնին առած՝ ուրախ զուարթ ճամբայ ելան դէպ ՚ի գիւղը: Փոքր տղայք խումբեր կազմած առջևէն կ'երթային. անոցմէ մէկ քանիները սրինգ կը չալէին, միւսները երգելով ու պարելով կը հետևէին անոնց:

Ես և քոյրերս խառնուեցանք այդ երգող գասուն հետ և ամենևին չ'իմացանք թէ ի՛նչպէս առն հասանք:

Հասուածներու բաժնեցէ՛ք եւ կարգով պատկնցէ՛ք ինչ որ կարդացիք: Հորիզոն ի՞նչ բանի կ'ըսեն:

Ամառուան պարզ դիչերն անցաւ, առաւօտեան հովը տարածուեցաւ օդին մէջ, մնւթ մէգերը բարձրացան ձորերէն. աստղերը իրարու ետևէ մարեցան, արուսեակն ալ անցաւ և շիջանելու մօտ էր. նա երկնակամարէն կը դիտէր որ ամպերը դէպ ՚ի արեւելք կը վազեն և դիմաւորելով արեգակը՝ ոսկեփայլ և արծաթափայլ շերտերով կը զարդարուին:

Ահա երեւցաւ արեգակը երկնից վրայ ուրախ զուարթ, կը բարձրանայ նա ոսկեճաճանչ: Իւր փայլուն ճառագայթներով կ'արթնցնէ գետակները, դաշտերը, հովիտները և անտառները: Մառոց վրայ թառած թռչունները և անտառին գազաններն ալ կ'արթնցնէ, ինչպէս նաև բզէզը որ վայրկեան մը հանդիստ կ'առնուր իւր մամռատ անկողնոյն մէջ: Ոսկենման արեւը կարճ խօսքով ամենուն կ'ըսէ. « Բաւական է որչափ որ հանգստացաք, այժմ գործելու ժամանակ է: »

Գիչերը ամէնքը հանգչած են ցերեկի գործերէն: Գաշտերը և արտերը զովարար ցօղով նորոգուած՝ նոր ոյժ կը ստանան և ոսկեոյ պէս կը փայլին առաւօտեան ճառագայթներուն տակ: Մառոց տերևները, մարդերուն խտար, արտերուն հասկերը, ամէնքն ալ նորոգուեցան, զուարթացան: Թռչուններն արթնացան և սկսան ուրախութեամբ երգելով իրենց նախկին գործը ձեռք առնուլ: Ամրան դիչերը թէև կարճ, բայց կենդանացուցիչ է:

Մանուկները արթնցան և վերմակնին մէկգի՛նետեցին, անոնց մատաղ անդամները բաւական հանգստացեր էին, ոտքերնին վազել կ'ուզէին, գլուխներնուն մէջ նորանոր գազափարներ ծնունդ կ'առնուին: Աղջիկներն հագուեցան, զով

ջրով երեսնին լուացին, Աստուծոյ աղօթեցին և Ուսումնա-
րան գնացին: Ահա՛ կը վազեն անոնք իբրև թռչուն դաշտին
մէջ և ուրախ զուարթ կ'սկսին գործել: Արեգակը երկին-
քէն կը նայի աշխատասէր մանկանց և կ'ըսէ քնքշաբար.
« Թո՛ղ Աստուած օգնէ ձեզ: »

32. Ե Ր Ա Շ Տ

Ամառը չոր էր: Արեգակը օրէ օր կը բարձրանար պարզ
երկնից վրայ: Ճամբան փոշին ամպի նման կը տարածուէր:
Երկիրը քարի նման պնդացեր ու քարացեր էր: Առուակները
ցամքեր էին: Ծաղիկները տխրութեամբ կախեր էին իրենց
գլուխները, խոտերը դեղներ էին, նորահաս արտերը աւերեր
էին: Երկրագործը տխրութեամբ կը նայէր իւր արտերուն և
կ'ըսէր. « Աստուած իմ, ինչ որ ձեռքէս կուգար՝ ըրի, ո՛րքան
որ կարելի էր՝ ցանեցի, ուշադրութեամբ փորեցի և ընտիր
սերմ սերմանեցի. այժմ թո՛ղ քո սուրբ կամբը լինի: »

33. ԲՈՅՍԵՐՈՒ ԿԵՐԱԿՈՒՐԸ

Պայծառ երկնակամարին վրայ ամպեր երեւցան, փոքր
առ փոքր անոնք թանձրացան և սեւ կեղեւով ծածկեցին
կապոյտ երկինքը, իսկ երեկոյին կենսատու անձրեւը ջրեց
արօտամարդերը և արտերը: Դաշտային թռուած բոյսերը
զուարթացան, անտեսանելի կերպով ծծեցին իրենց բարակ
արմատներով թաց հողի սննդաբար հիւթը: Խոտը կանաչա-

ցաւ, ծաղիկները բարձրացուցին իրենց թռուած գլուխնե-
րը, ծառերուն փայլուն տերեւները ազահաբար ծծեցին խո-
նաւ օդը: Ուրախ զուարթ տատանիլ սկսան արտերու մէջ
ցորենի, գարիի ու վարսակի ցօղունները և արագ արագ լե-
ցուցին իրենց հասկերու նիհար հատիկները:

Ինչո՞վ կը կերակուիս բոյսեր: Անձրեւն անոնց ի՞նչ
բանի համար հարկաւոր է:

34. Թ Ա Ր Մ Հ Ա Յ

Կիւրակէի արևը ծածկուեցաւ անտառին ետին: Երկ-
րորդ առաւօտ դիւղացին և իւր որդիքը դաշտ գնացին և
ուրախ զուարթ մարդագետիններն ու արտերը դիտեցին:

Մարդագետիններուն մէջ արդէն կանգնած էին խոտի
մեծամեծ դէզեր, իսկ արտերուն մէջ դեռ կը տատանէին
հասած ցորենի հասկերը: Գիւղացին խաչակնքեց և ըսաւ.
« Օրհնեմք զ'Աստուած, որդեա՛կք. այս տարի մեր ոչխար-
ները խոտ պիտի ունենան և մենք ալ հայ: » Գիւղացին հասկ
մը փրցուց, ափին մէջ տրորեց, նայեցաւ և տեսաւ որ հա-
տիկները հասեր են, յետոյ ալուային տակ փորձեց և տեսաւ
որ ձայն կը հանէին. « Չաւա՛կներս, հնձելու ժամանակ է.
ձեր մայրը երէկ ամբարին վերջին ալիւրը մաղեց: »

Միւս օրը, մեծ ու փոքր առհասարակ, ամէնքը դուրս
թափեցան դէպ ՚ի արտերը: Խուրձերը արագութեամբ շա-
րուեցան իրարու ետևէ, իսկ երեկոյին արդէն բարձր խուր-
ձեր կարգաւ կանգնած էին արտին մէջ:

Դեռ հունձը չ'էր վերջացեր երբ կամս սկսաւ պտըրտիլ
կալին վրայ: Հայրը մի բեռ ցորեն տարաւ ջաղացքը և այն

տեղէն ճերմակ ալիւր բերաւ: Մայրը խաշ ճարեց, խմոր շաղեց, իսկ միւս օրը մանուկներն արդէն ցորենէ պատրաստուած անուշահոտ հացը կ'ուտէին:

Ի՞նչպէս կ'իմացուի թէ ցորենը հասեր է եւ իմացուելէն ետքը ի՞նչ կ'ընեն:



35. ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆ

Opusnu -

Շատոնց 'ի վեր Յիշատակարանիս մէջ բան մը չ'եմ գրած - ամբողջ ամառը ժամանակ չ'ունեցայ: Հիմա ա'լ շատ չ'ենք խաղար, վասն զի յաճախ կ'անձրեւէ և աշնան հոտ կուգայ:

Այսօր Ս. Աստուածածնի վերափոխման տօնին՝ մեծ ուրախութեամբ եկեղեցի կը տանին այգիներու և արտերու պտուղները և ժամերգութեան միջոցին կ'օրհնեն զանոնք: Գիւղական փոքրիկ եկեղեցին բազմութեամբ լի էր: Բարի գիւղացին ջերմեռանդութեամբ վեր բարձրացուց խաղողի փոքրիկ ողկոյղ մը և ափ մը ցորեն: Խաղողը կերաւ, պահքը լուծեց, իսկ ցորենը տարաւ իր սերմերուն հետ խառնեց: Հայրս ու մայրս և մենք այսօրուրնէ սկսանք խաղող ուտել:



Ա Շ Ո Ւ Ն

36. ԱՇՆԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Ծառոց կանաչ տերեւներուն մէջ դեղնագոյն տերեւները կը շողշողան. մանգալն իր գործը վերջացուցեր է ոսկեման արտերուն մէջ: Միւս կողմը, հեռուէն, հովիտներու կանաչ գորգերը կը կարմրին. ստուերախիտ այգիներու մէջ հասուն պտուղներ կախուած են:

Աշնան նշանները ամէն կողմէ մարդուս աչքին կ'երևին. հոս՝ արեւուն տակ փայլելով կը տատանի սարգի ոստայնը. հօն՝ արտերու անդը կ'երեւին մերկ ծղօտներ, իսկ այգիներու մէջ որթի ոստերու վրայ կախուեր են սև, սպիտակ ու կարմրախառն ողկոյղներ. հնձուած խոզանները դաշտը կը ախրեցնեն, իսկ աշնացանը զմրուխտի նման կը փայլի: Կալե-

բուն մէջ հնձուած հացաբոյսերը կալ կ'ընեն. առաւօտեան
մէքը սպիտակ վուշի նման կը ծածկէ կապոյտ լճակը:

Ի՞նչ նշաններով կ'իմանանք թէ առուը հասեր է:

37. ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Երէկ շատ ուրախ էի ես, մեր այգին կը քաղէինք: Ա-
ռաւօտուն կանուխ մեր բոլոր ընտանիքը այգին հաւաքուե-
ցաւ. խաղողի գեղեցիկ ողկոյզները կը փայլէին տերեւա-
թափ որթերուն վրայ:

Այսօր մեր այգին իւր առաջին գեղեցկութիւնը չ'ունի,
մինակ տեղ տեղ կ'երեւին մէկ մէկ հատ պտուղ կամ ճիւղ:

Կանաչ անտառներն այժմ զանազան գոյներով կը փայ-
լին. վարդենին կարծես ոսկեզօծեալ՝ կը դողդղայ քամին
առջև. քամին կը թափթփէ ծառոց դեղնած տերեւները.
ամէն բան կը փոխուի, դաշտին խոտերը կը թառամին, բը-
նութիւնը կը զրկուի իւր կանաչ զարդարանքէն, առաւօտ-
եան գէմ երկիրս կը ծածկուի սպիտակ եղեամով և ադա-
մանդի պէս կը փայլի արեւուն ճառագայթներուն տակ:

38. ԱՆՏԵՐՈՒՆՁ ԱՐՏ

Աշունն սկսաւ, ծիծառը թռաւ,
Անտառն է դատարկ, մարդը մերկացաւ,
Միայն դաշտին մէջ անհունձ մնացած՝
Տխուր և արտում մի արտ կայ կանգնած:

Կարծես հասկերը միմեանց ախնջին,
« Ինչպէ՛ս կը մտնք, կ'ըսեն, այս ցրտին.
« Շատ տխուր բան է գեանին հետ ըլլալ
« Եւ ատոք պտուղդ հողերուն զոհ տալ:
« Ո՛հ, ամէն գիշեր մեզի մօտ կ'իջնեն
« Անցնող թռչուններն և զ'մեզ կ'ուտեն.
« Գաղանք հարուածեն, քամին մեզ ծեծէ,
« Ո՛ւր է մեր տէրը, ինչի կ'ըսպասէ: »

Քամին արտերուն կուտայ սեւ համբաւ.
« Մահն զ'ձեր տէրը երկրէս վեր առաւ: »

39. Ա Շ Ո Ւ Ն

Վերջալոյսին մօտ երէկ
Ծիծեռնակներն մեկնեցան,
Սարեակները խումբ կազմած՝
Մեր կողմերէն հեռացան:

Ամենայն ինչ կայ 'ի քուն,
Դուրսը խաւար կը տիրէ.
Չոր տերեւներն խըչխըչան,
Քամին դուռը կը ծեծէ:

ՎԵՐՁ Բ. ՏԱՐԻՈՅ


Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ակնատ-Մուկ բռնելու գործիք :
 Բալ-Կարմիր պտուղ մը , վեշե .
 Բալսիր-Տեսակ մը կառք առանց
 անույ՝ ձեան կամ սառուցի
 վրայ ճամբորդելու համար .
 Բժոժ-Որդերուն պատեանը .
 Բիւր-Աքաղաղին ոտքին ձանկը .
 Բլիթ-Կակուղ և կլոր հաց .
 Բոխի-Տեսակ մը ծառ :
 Գուլթան-Մեծ արօր .
 Գրչահատ-Գալէճ Բրաշ :
 Դարման-Սնանոց ուտելիք .
 Դղքի-Տեսակ մը ծառ .
 Դուր-Հիւսնեքու կտրոց :
 Եզան-Խոտ ժողվելու երկժանի
 գործիք :
 Զատիկ-Տեսակ մը բզեզ որ Զատ-
 կին ժամանակը կ'ելնէ :
 Թաթպան-Չեռնոց .
 Թափուր-Փայտէ աման .
 Թեղ-Յորենի ու գարիի հնձոց
 Թխել-Հաց եփել .
 Թոկ-Չուան :
 Իւղափլիթ-Իւղով տապկած բը-
 լիթ :
 Լորձն-Շողիք :

Լուցափայտ-Քիւրեճ :
 Խաչ-Խմորին թթուն , ճայ .
 Խճուղի-Խիճերով ծածկուած շի-
 տակ և երկայն ճամբայ .
 Խշտիկ-Հագուստին թեւերուն
 սակի մասը :
 Ծառանալ-Չիուն՝ ետեւի ոտքե-
 րուն վրայ անկուելը .
 Ծիւր-Պղտիկ թռչուն մը .
 Ծղրիւր-Աշնան ճարու դիշերային
 որ պղտիկ մարտի կը նմանի .
 Ծղօտ-Բուսոյ եղէգները :
 Կալքաքար-Քանի մը տեսակ արն-
 կոց մոխրէն ելած նիւթ մը
 որով օճառ և սպակի կը
 շինուի , Սօք .
 Կանն , կաննասայլ-Յորեն կա-
 սելու սայլ .
 Կայծուղի-Պղտիկ ճճի մը որ մը-
 թութեան մէջ լոյս կ'արձակէ .
 Կայծքար-Չաճաճ Բաշը .
 Կարթ-Չուկ բռնելու ճանկ .
 Կեռած-Կոր , ծուռ .
 Կեռոց-Չեշեշե .
 Կլայեկել-Անագով օճել , Գալայ
 լաճաճ .
 Կկոց-Ոստայանի գործիք մը
 լաթ բռնելու համար , Քեթեթ .
 Կճղակ-Կովու տոտիկ .

Կճուճ-Պղտիկ պտուկ .
 Կնճիթ-Փղի ու խոզի քիթ .
 Կոճ-Շէնքի մը ուսի ձեով մասը
 որուն վրայ ուրիշ բան մը
 կը կրթընի .
 Կուտիէնաւոր-Կոնակին վրայ
 սապատ կամ ուռեցք ունե-
 ցող , ինչպէս է ուղորդ :
 Հաճարի-Տեսակ մը ծառ .
 Հարթուկ-Ի-Բի- .
 Հեշտաեռ-Սաճալար .
 Հերձաքար-Տեսակ մը կակուղ
 Հոյն-Պտուղ մը , Գալլէճ :
 Ժիպոտ-Բարակ գաւազան , կա-
 պար դրչին փայտը .
 Ժիաք-Կօշկին վիզը :
 Մածուցիկ-Փակչող
 Մաղձացաւ-Քոլեք , համաճա-
 րակ հիւանդութիւն .
 Մաճ-Արօրին կոթը .
 Մժեղ-Սեղեթ «իւն» .
 Մոր-Տեսակ մը պտուղ .
 Մորի-Ծառի մը տեսակ .
 Մսալի-Մսոտ , լեցուն .
 Մրուր-Թորքա :
 Յափրուկ-Անուշահոտ ծաղիկ մը :
 Նախիր-Եղնեքու , կովերու բազ-
 մութիւն , խումբ .
 Ներբան-Կօշկին տակը :

Շահէն-Թագաւորական բազէ .
 Շերեի-Քեթեթ :
 Ողնաշար-Կոնակին սիւնը (սակո-
 Որձաքար-Պինդ քար .
 Որոճող-Կրկին կրկին ծամող (ա-
 նասուն) .
 Ումպէտ-Անպիտան , անշահ .
 Ուռ-Ճիւղ :
 Չեշոտ-Ծակոտիէն , ծակձկած :
 Պաճուճապատանք-Տղոց խողա-
 լիք , Կոլեք .
 Պերեւեշտ-Պշոք .
 Պոչիւն-Եղնեքու պտուղ .
 Պակարդ-Տեսակ մը քար :
 Զոկ-Երկուքի բաժնուած մաս ,
 խումբ :
 Ռեկտին-Ծառերէ կաթած խէժ :
 Սեղանատամ-Մեծ ախոյսներ
 որք կերակուր ուտելու կը
 ծառայեն .
 Սեպ-Գամ .
 Սկիւռ-Տեսակ մ'անասուն , Սքն-
 Սոնակ-Անույ առանցք , լիսեռք
 Ստեպլին-Հալաճ :
 Վերնամաշի-Վրայի մորթը .
 Վուշ-Կտաւ , քիթան :
 Տաշեղ-Թալաշ :



Տասնեակ-Տասնական խուրձե- րու դէզ.	Փորքաչ-Ձիուն փորին փոկը .
Տկուիւ-Ուուիւ .	Փոցիւ-Սոտ ժողվելու բազմա- ժանի գործիք :
Տրեխ-Չարէ :	Քերծէ-Որսի շուն , Քաղը .
Ցանց-Փօք .	Քուղ-Ոլրած դերձան , բարակ լուսն :
Ցաքան-Արտը հաւասարելու գործիք .	Օշինդը-Փէլն :
Ցաքանեւ-Արտը հաւասարել :	

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒ ԲՍՑԱՏՐՈՒԹԻՒՆ

(Ա. Շրջանի մէջ)

Էջ

- 18 — 1. Կրիայ : — 2. Օձ :
- 19 — Մեղրահաց (բլիշ) :
- 20 — Մարդուն լեզուն :
- 22 — 1. Արեւ ու լուսին : — 2. Սարդ :
- 26 — 1. Սուր ու պատեան կամ հրացան ու գնդակ :
2. Կաջաղակ :

4546

2013

« Ազգային գրադարան »



NL0059921

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅՈՑ ՄՐԱՅԵԱԼ Ի ԼԵԿՏՐՈՒՐԵՍ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ (Ն. Տ. Ղևոնդեան) Ա. Տարի, Ե
կասասաներոց սպագրութիւն (43 պատկերով)

ՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ (Ն. Տ. Ղևոնդեան) Բ. Տարի, Տարի
ներոց սպագրութիւն (66 պատկերով)

ՄԵՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ (Ն. Տ. Ղևոնդեան) Գ. Տ. արի, Վ
ցերոց սպագրութիւն (80 պատկերով)

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ (Ն. Տ. Ղևոնդեան) Դ. Տարի, Զ
րոց սպագրութիւն (20 պատկերով)

ԲԵՐԼԻՆԻՆԻՒԹԻՒՆ աշխարհաբար լեզուի (Թ. Թ.
ղեան), ներոց սպագրութիւն

ԹՈՒՐԿԻՆԻՒԹԻՒՆ (Պատկերագրոց)

ՔՐԻՍՏՈՒՆԿԱԿԱՆ (Մարկոսեան), 28րդ Տպագրութիւն
ԳԵՂՍԿՔ՝ ՏԵՏԻՔՔ (Յ. Վասիլեան), 4 սեւերու
աւտովեայ, Գին մէկ սեւեի

Գին 100 սեւերու

ԳՊՐՈՅԻԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻՔ սեւեր, Գին 100 սեւ

Բաւ աղան թուով գնողաց գոհացուցիչ զե

կը քանուի ամէն գրադաճաւաց

Կեդրոնատեղին է

Հայոց Միացեալ Բնկերութեանց գրա

Հարսիս, Ա. Կոստանից Եկեղեց

Հայոց Միացեալ Բնկերութեանց կիսքը չ'ի

նէրն անվաւեր են :

*Մի է նոյն գրատեճեկին մէջ կը փաճաւաց
ղիսութիւն (Երանեան), Բրազիլսութիւն (Տօքթ
նախնական Ընթերցարանի (Թ. Թ. Լրցեան), գր
մաններով :*